


4 հունիսի, 2015թ.

Բարձրավույտ էլեկտրական ցանցեր

**Էլեկտրամատակարարման
Հուսալիության Ծրագիր**

**110կՎ Լավար և Նոյեմբերյան գծի
փոխարինում**



**Շրջակա միջավայրի և սոցիալական
ազդեցության գնահատում**

Հաշվետվության վերջական նախագիծ

FICHTNER

Սարվեյստրաս 3
70191 Շտուտգարտ, Գերմանիա
Հեռ. +49 711 8995-0
Ֆաքս. +49 711 8995-459
www.fichtner.de

Կոնտակտային անձ՝ **Birgit Öllbrunner**
Ներք. հեռ.՝ **705**
Էլ. հասցե՝ **Birgit.Oellbrunner@Fichtner.de**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	6
1.1 Ծրագրի նկարագիրը	6
1.2 ՇՄՍԱԳ-ի նպատակները և մեթոդաբանությունը	7
1.3 Իրավական դաշտը	8
1.4 Ինստիտուցիոնալ դաշտ	9
1.5 Համապատասխան տարբերակների վերլուծություն	10
1.6 Ելակետային պայմաններ	11
1.7 Տեղեկատվություն, հրապարակում, քննարկումներ և մասնակցություն	14
1.8 Ազդեցության գնահատում	15
1.9 Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլան	16
1.10 Բողոքների կարգավորման մեխանիզմ	21
1.11 ՇՄՍԿՊ-ի իրականացման ծախսերը	22
2. Ծրագրի նկարագրությունը	23
2.1. Ծրագրի համատեքստը	23
2.2. Տեխնիկական նախագիծը և ՕԳ-երի փոխարինման աշխատանքների ծավալը	23
2.3. Լավար և Նոյեմբերյան գծերի գտնվելու վայրը	25
3. ՇՄՍԱԳ-ի նպատակները և մեթոդաբանությունը	28
3.1. ՇՄՍԱԳ-ի գործողության շրջանակը և նպատակները	28
3.2. Ընթացակարգեր և մեթոդաբանություն	29
4. Իրավական դաշտ	32
4.1. Ազգային պահանջները	32
4.2. Միջազգային համաձայնագրեր	38
4.3. Միջազգային պահանջներ	39
5. Կազմակերպական շրջանակ	41
6. Ծրագծի այլընտրանքների վերլուծություն	43
6.1. Այլընտրանքներ գծի ծրագծի համար	43
6.2. Առաջարկվող շրջանցումները	44

7. Ելքային բնապահպանական պայմանները	53
7.1. Երջակա միջավայր և բնապահպանություն	54
7.1.1. Հետազոտության տարածք	54
7.1.2. Տեղագրությունը	55
7.1.3. Օդերևութաբանություն և կլիմա	56
7.1.4. Երկրաբանություն և երկրաշարժեր	58
7.1.5. Հողեր	60
7.1.6. Ջրային ռեսուրսներ	60
7.1.7. Բուսական և կենդանական աշխարհ	62
7.1.8. Անտառներ	62
7.1.9. Լանդշաֆտ	64
7.1.10. Բնության հատուկ պահպանվող տարածքներ	64
7.1.11. Թափոնների կառավարումը Հայաստանում	65
7.2. Սոցիալտնտեսական պայմանները	66
7.2.1. Բնակչությունն ուսումնասիրվող տարածքում	66
7.2.2. Պատմական և մշակութային վայրեր	66
7.2.3. Գենդերային ասպեկտներ	67
7.2.4. Հողի օգտագործման օրինակները և գյուղատնտեսությունը	68
7.2.5. Կենսամակարդակ	70
8. Տեղեկատվություն, հրապարակում, քննարկումներ և մասնակցություն	72
9. Երջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցությունները նախագծման փուլում	74
9.1 Երջակա միջավայրի ազդեցությունները նախագծման փուլում	74
9.1.1. Էլեկտրահաղորդման գծի ծրագիծը	74
9.1.2. Մոտեցման ճանապարհներ	75
9.2 Երջակա միջավայրի վրա ազդեցությունները և դրանց մեղմացումը շինարարության իրականացման ընթացքում	76
9.2.1. Լանդշաֆտ	76
9.2.2. Ֆլորա և ֆաունա	76
9.2.3. Հողի էրոզիա (քայքայում)	79
9.2.4. Հողային և ջրային ռեսուրսներ	80
9.2.5. Կոշտ թափոններ	81

9.2.6.	Աղմուկ	82
9.2.7.	Օդի որակ	83
9.3	Շրջակա միջավայրի վրա ազդեցություններ և դրանց մեղմացումը շահագործման ընթացքում	83
9.3.1.	Բուսական աշխարհ (Ֆլորա)	83
9.3.2.	Կենդանական աշխարհ (Ֆաունա)	84
9.3.3.	Աղմուկ	89
9.3.4.	Կլիմայի փոփոխություն	89
9.3.5.	Էլեկտրական և մագնիսական դաշտեր	89
9.4	Սոցիալական ազդեցությունները և դրանց մեղմացումը շինարարության ընթացքում	91
9.4.1.	Հողօգտագործում և հողի ձեռքբերում	91
9.4.2.	Հարկադիր Վերաբնակեցում	93
9.4.3.	Պատմական և Մշակութային վայրեր	94
9.4.4.	Առողջություն և Անվտանգություն	97
9.4.5.	Ենթակառուցվածքներ	98
9.4.6.	Գեներային ասպեկտներ	99
9.4.7.	Խոցելի անձիք	99
9.4.8.	Տեղական աշխատուժ	100
9.5	Սոցիալական ազդեցությունները և դրանց մեղմացումը շահագործման ընթացքում	101
9.5.1.	Հողօգտագործում	101
9.5.2.	Էլեկտրաէներգիայի մատակարարում	101
9.6.	Ազդեցությունների ամփոփ ցանկ	102
10.	Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլան	105
10.1.	Մեղմացուցիչ միջոցառումներ	106
10.1.1.	Նախագծման և նախաշինարարական փուլի մեղմացուցիչ միջոցառումներ	106
10.1.2.	Շինարարական փուլի համար մեղմացուցիչ միջոցառումներ	107
10.1.3.	Շահագործման և սպասարկման փուլերի համար նախատեսված մեղմացուցիչ միջոցառումներ	120
10.2.	Մոնիթորինգի միջոցառումներ	125

10.2.1.	Մոնիթորինգի միջոցառումներ նախագծման և նախաշինարարական փուլի ընթացքում	126
10.2.2.	Մոնիթորինգի միջոցառումներ շինարարական աշխատանքների ընթացքում	129
10.2.3.	Մոնիթորինգի միջոցառումներ շահագործման և տեխնիկական սպասարկման ընթացքում	171
10.3.	Իրականացման միջոցառումներ և հաշվետվությունների ներկայացման պահանջներ	181
10.4.	ԲԷՑ-ի անձնակազմի ուսուցում	182
10.5.	Բողոքների կարգավորման մեխանիզմ	182
10.6.	ՇՄՍԿՊ-ի իրականացման ծախսերը	187
11.	Հղումներ	189
12.	Հավելվածներ	191
12.1	Հավելված I. Հանդիպումների և դաշտային այցելությունների արձանագրում	191
12.3.	Հավելված III. Հանրության համար և աշխատանքների իրականացման վայրերում Էլեկտրական և մագնիսական դաշտերի (50 հՅ) միջազգայնորեն կիրառվող ստանդարտները	200

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱԱՀ	Պողպատով ամրանավորված այլումինե հաղորդալար
ԱՀ	Անկյունային հենարան
ՇԿ	Շինարար Կապալառու
ԽՃ	Խորհրդատու ճարտարագետ
ՊԲ	Դեցիբել
ՇՄԱԱ	Շրջակա միջավայր, առողջություն, անվտանգություն
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում
ԷՄԴ	Էլեկտրամագնիսական դաշտեր
ՇՄՍԱԳ	Շրջակա միջավայրի սոցիալական ազդեցության գնահատում
ՇՄՍԿՊ	Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլան
ԷՄՇՕ ԼՖ	Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր – Լրացուցիչ ֆինանսավորում
ԷՀՑԲԾ	Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր
ՀՆ	Համախառն ներքին արտադրանք
ԳԴՀ	Գլոբալ Դիրքավորման Մեխանիզմ
ԲԿՄ	Բողոքների կարգավորման մեխանիզմ
ԱԱՇՄԿՀ	Առողջության,անվտանգության և շրջակա միջավայրի կառավարման համակարգ
ԱԱԿՊ	Առողջության և անվտանգության կառավարման պլան
ԱԱԿՀ	Առողջության և անվտանգության կառավարման համակարգ
ԲԷՑ	Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր, Հայաստան
ԱԻՃՊՄՀ	Առանց իոնացման ճառագայթումից պաշտպանության Միջազգային հանձնաժողով
ՄՖԿ	Միջազգային ֆինանսավորման կորպորացիա
ԿՎ	Կիլովոլտ
ՄՎ	Մեգավատ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԳՔ	Գործառնական քաղաքականություն
ՕՄԱՃ	Օպտիկական մանրաթելով ամպրոպապաշտպան ճուպան
ՕԳ	Օդային գիծ
ԱԵԱ	Ազդեցության ենթարկված անձ
ԾԻԽ	Ծրագրի իրականացման խորհրդատու
ԱՊՍ	Անձնական պաշտպանիչ սարքավորում
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՎԳՊ	Վերաբնակեցման գործողության պլան
ԱԳ	Անվտանգության գոտի
ՎՔՇ	Վերաբնակեցման քաղաքականության շրջանակ
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԲՀՊՏ	Բնության հատուկ պահպանվող տարածքներ
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
ԱՄՆԴ	ԱՄՆ դոլար
ՀԲ	Համաշխարհային բանկ

1. Ներածություն

1.1 Ծրագրի նկարագիրը

Համաշխարհային Բանկն աջակցում է Հայաստանի Կառավարությանը ընթացքի մեջ գտնվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի (ԷՄՀԾ) ներքո Էլեկտրահաղորդման ցանցի հզորացմանը: ԷՄՀԾ-ի ներքո «Բարձրավոլտ Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (ԲԷՑ)՝ Էլեկտրահաղորդում իրականացնող ընկերությունը, արդեն փոխարինում է «Հրազդան» ՋԷԿ-ից դեպի «Շինուհայր» եթակայան գնացող 220կՎ օդային Էլեկտրահաղորդման գիծը: Փոխարինման աշխատանքներն ընթացքի մեջ են: ԷՄՀԾ-ի ներքո կան խնայողություններ, որոնք Կառավարությունը մտադիր է օգտագործել 110կՎ Նոյեմբերյան օդային Էլեկտրահաղորդման գիծը (ՕԳ) փոխարինելու համար: Գիծը դուրս է գալիս «Ալավերդի-2» 220/110/35կՎ ենթակայանից և հասնում է մինչև Հաղթանակ գյուղում գտնվող «Նոյեմբերյան» 110/35կՎ ենթակայանը, ինչպես նաև մտադիր է փոխարինել 110կՎ Լավար ՕԳ-ը, որը դուրս է գալիս նույն «Ալավերդի-2» ենթակայանից և հասնում է մինչև «Նոյեմբերյան» ենթակայանը, ապա T-աձև ճյուղավորմամբ գնում դեպի Վրաստանում գտնվող «Սադախլու» ենթակայանը: Երկու ՕԳ-երն էլ անցնում են նույն հենարաններով, որպես երկու տարբեր ՕԳ-երի շղթաներ:

Այս ՕԳ-երը ենթադրաբար են մատակարարում Հայաստանի հյուսիս-արևելյան հատվածում բնակվող մեծաթիվ սպառողների: Վերը նշված գործող ՕԳ-ը մոտավորապես 50 տարվա է և զգալի քայքայված, ինչպես հաստատվել է ցուցանմուշի մետաղական փորձարկումների արդյունքներից: Սա վտանգի է ենթարկում տարածաշրջանում Էլեկտրամատակարարման անվտանգությունը և հուսալիությունը:

Սույն ԷՄՀԾ-ի ներքո օգտագործվող ամբողջ տեղեկատվությունը, որը վերաբերում է կոնցեպտուալ նախագծին, ներառյալ գծերի ծրագծերը, տրամադրվել է ԲԷՑ-ի կողմից: Մեղմացուցիչ միջոցառումները և դրանց իրականացման մոնիթորինգի պլանը պետք է վերանայվեն և թարմացվեն վերջնական տեխնիկական նախագիծը կազմելուց հետո: Մանրամասն նախագիծը կկազմվի Նախագծում, Մատակարարում և Տեղադրում իրականացնող ընկերության կողմից, որը կվարձվի «Բարձրավոլտ Էլեկտրական ցանցեր» (ԲԷՑ) պետական ընկերության կողմից:

110կՎ նոր երկշղթա ՕԳ-ն մոտ 25կմ երկարությամբ անցնելու է Հայաստանի Հանրապետության (Լոռու մարզ) հյուսիս-կենտրոնական մասում գտնվող «Ալավերդի-2» 220/110/35կՎ ենթակայանից մինչև հյուսիս-արևելյան (Տավուշի մարզ) մասում Հաղթանակ գյուղում գտնվող «Նոյեմբերյան» 110/35կՎ ենթակայանը:

Նոր ՕԳ-ն ունենալու է նոր երկշղթա հենարաններ և դրանց համար նախատեսված հիմքեր, նոր պողպատով ամրանավորված այլումինե հաղորդալար (ՊԱԱՀ), նոր

օպտիկական մանրաթելով ամպրոպապաշտպան ճոպան (ՕՄԱՃ), հողակցում յուրաքանչյուր հենարանի տեղում, «Ալավերդի-2» ենթակայանի միջոցով նոր կապեր Ազգային Էներգահամակարգի հետ, նոր միացումներ Հաղթանակում գտնվող 110/35կՎ «Նոյեմբերյան» բաշխիչ ենթակայանի հետ, և նոր հիմնական ՕԳ-ից T-աձև ճյուղավորմամբ միացումներ «Ախթալա» քարշային ենթակայանի և «Մատուռ» լեռնահանքային կայանի համար:

Նոր ՕԳ-ը պետք է կառուցվի նոր միջանցքում (50մ լայնությամբ), որոշ մասերում առկա միջանցքից մոտ 50մ-ով շեղումներով, որը պահանջվում է բնակավայրերից և զգայուն բնական ռեգեպտորներից խուսափելու համար: Էլեկտրահաղորդման գծի ծրագծերը ներառում են կիրճերի վրայով անցնող մի քանի մեծ թռիչքներ: Նոր հենարանների մեծ մասի տեղակայման վայրերն ունեն մոտեցման ճանապարհներ և ուղիներ: Անհրաժեշտ կլինի կատարել հողի ձեռքբերում այն վայրերում, որտեղ պետք է տեղակայվեն նոր հենարանները «Նոյեմբերյան» ենթակայանի ընդլայնման շինարարական աշխատանքներն իրականացնելու և հնարավոր նոր մոտեցման ճանապարհներ կառուցելու համար:

Գոյություն ունեցող 110կՎ ՕԳ-ն պետք է ամբողջովին ապամոնտաժվի, երբ նոր գիծը շահագործման մեջ դրվի: ԲԷՑ-ը պետք է պատասխանատու լինի հին ՕԳ-երի ապամոնտաժման համար և այդ աշխատանքների համար կֆինանսավորի իր սեփական միջոցներից:

Համաձայն ԲԷՑ-ի, շինարարության ընթացքում ցանցից գոյություն ունեցող գծերի անջատման անհրաժեշտություն չի լինի: Այսպիսով, շինարարական աշխատանքների ժամանակ Էլեկտրաէներգիայի անջատում տեղի չի ունենա:

1.2 ՇՄՍԱԳ-ի նպատակները և մեթոդաբանությունը

Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երի համար առաջարկվող փոխարինումը որոշակի ազդեցություն կունենա տարբեր բնապահպանական և սոցիալական բաղադրիչների վրա: ՇՄՍԱԳ-ի հիմնական նպատակները են հայտնաբերել և գնահատել այս սպասվող ազդեցությունների ծավալը և տրամադրել միջոցներ դրանց մեղմացման համար, համապատասխանեցել ներպետական և միջազգային ստանդարտների հետ: ՇՄՍԱԳ-ի հաշվետվությունն օգտակար տեղեկատվություն է տրամադրում ԲԷՑ-ին, թե ինչպես պետք է նախագծվեն և պլանավորվեն բարձր լարման Էլեկտրահաղորդման գծերը՝ խուսափելով բացասական ազդեցություններից կամ մեղմացնելով դրանք և առավելագույնս օգտագործելով ակնկալվող բնապահպանական և սոցիալական օգուտները:

ՇՄՍԱԳ-ի նախագծային հաշվետվության հանրային հրապարակումից հետո շահագրգիռ կողմերի հետ կանցկացվեն հանրային քննարկումներ պլանավորված աշխատանքների հետևանքով ազդեցության ենթարկված անձանց մտահոգություններն և արձագանքները լսելու համար:

Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երի փոխարինման ՇՄՍԱԳ-ի իրականացման համար Ֆիլիստներ ընկերությունն ստեղծել է հետևյալ բազմամասնագիտական խումբը:

- Բնապահպանական և էկոլոգիական հարցերով միջազգային ավագ փորձագետ;
- Սոցիալտնտեսական հարցերով միջազգային փորձագետ;
- Բնապահպանական և իրավական հարցերով ազգային փորձագետներ:

Աշխատանքային ուսումնասիրության միջոցով իրականացվել է ՕԳ-երի միջացքում կենսաֆիզիկական պարամետրերի վերաբերյալ ընդհանուր դիտարկում, իսկ բնապահպանական և սոցիալական փորձագետների կողմից իրականացվել է դաշտային ուսումնասիրություն: Այն կատարվել է նոր ՕԳ-երի առաջարկված միջանցքի երկայնքով հսկողական շրջայցի միջոցով, ներառյալ որոշ թեժ կետեր, որոնք են նոր գծի միջացքի հետևանքով ազդեցության ենթարկված մարգագետինների, անտառային տարածքների և գյուղերի հետ հատումը: Ուսումնասիրության ընթացքում չեն հանդիպել որևէ հազվագյուտ, վտանգված, էնդեմիկ կամ մտահոգություն առաջացնող կենդանական կամ բուսական այլ տեսակներ, և առկա տվյալներով գոյություն ունեցող ոչ մի տեսակը չի հայտնաբերվել:

Լրացուցիչ տեղեկատվություն ձեռք է բերվել կառավարական կազմակերպությունների և ՀԿ-ների ներկայացուցիչների հետ խորհրդակցությունների միջոցով: Ինտենսիվ խորհրդակցություններ են անցկացվել նաև Սշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության և Բնապահպանության նախարարության ներկայացուցիչների հետ: Բացի դաշտային ուսումնասիրություններից, իրականացվել է նաև հնարավոր էկոլոգիական և սոցիալական ազդեցությունների գնահատում՝ արբանյակային քարտեզների հետազոտման միջոցով: Նախնական ՇՄՍԱԳ-ի հաշվետվությունը նաև կիրառվել է որպես տեղեկատվության աղբյուր ներկա հաշվետվության համար: Այնուամենայնիվ, նախնական հաշվետվություններում ուսումնասիրված գծի ծրագիծը գրեթե ամբողջությամբ տարբեր է փաստացի առաջարկված միջանցքից՝ ծրագծի մեծ մասում դեպի ավելի հարավ անցնելով:

Ազդեցությունների Ուսումնասիրության Ցանկը, որը ներառում է ամենախիստ ազդեցությունները, կազմվել և ներկայացվել է ԲԷՑ-ին, որը վերջնականացնում է տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը, պլանավորման փուլում որոշ հնարավոր ազդեցություններից խուսափելու համար:

1.3 Իրավական դաշտը

Հայաստանում ցանկացած գործողության իրականացման համար, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, պահանջվում է Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) փորձաքննության դրական եզրակացություն: Պլանավորված գործողության կամ ծրագրի բնապահպանական ազդեցությունը պետք է գնահատվի նախապատրաստման փուլում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին 2014թ-ի

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենքը սահմանում է դրույթներ շրջակա միջավայրի ազդեցության գնահատման, շրջակա միջավայրն ազդեցության ենթարկելու և պայմանների վերաբերյալ, որոնց ներքո այսպիսի ազդեցությունը թույլատրվում է՝ այսպիսով լինելով ՇՄՄԱԳ-ի զարգացման ամենակարևոր ազգային օրենքը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքում «100կՎ և դրանից բարձր լարմամբ էլեկտրահաղորդման օղային գծեր»-ը նշվում է որպես կետ, որը պահանջվում է ՇՄՄԱԳ-ի ընթացակարգի համար: Ըստ Համաշխարհային Բանկի ԳՔ 4.01-ի, Ծրագիրը մտնում է շրջակա միջավայրի Բ դասակարգի մեջ, և նաև պահանջում է ՇՄՄԱԳ-ի և շրջակա միջավայրի կառավարման պլանավորում: Այդ իսկ պատճառով ՇՄՄԱԳ-ն իրականացվեց, չնայած այն փաստին, որ ազգային լիազոր մարմինները դեռ պետք է ուսումնասիրեն Ծրագրի նախագծային փաստաթղթերը և պաշտոնական որոշում կայացնեն այս Ծրագրի ՇՄՄԱԳ-ի ընթացակարգի վերաբերյալ:

Հայաստանը վավերացրել է շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պաշտպանությանը վերաբերվող մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ: Բացի այդ, կարևոր, շրջակա միջավայրին վերաբերվող համաձայնագիր է հանդիսանում Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության հասանելիության մասին Օրհուսի կոնվենցիան, որի ստորագիր կողմ է հանդիսանում Հայաստանը:

Ինչ վերաբերում է վտանգավոր նյութերի կառավարմանը, ապա Հայաստանի Հանրապետության Կառավարությունը վավերացրել է Ստոկհոլմյան կոնվենցիան և հանդիսանում է Բազելի կոնվենցիայի կողմ:

Ծրագիրը գործի է դնում Համաշխարհային Բանկի հետևյալ գործառնական քաղաքականությունները առաջարկվող աշխատանքների համար.

- ԳՔ 4.01 - «Բնապահպանական գնահատում»
- ԳՔ 4.04 - «Բնական միջավայր»
- ԳՔ 4.11 - «Մշակութային ֆիզիկական ռեսուրսներ»
- ԳՔ 4.12 - «Հարկադիր վերաբնակեցում»

Համաշխարհային Բանկ/ՄՖԿ ԱԱՇՄ ընդհանուր ուղեցույցներ, մասնավորապես, էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համար 2007թ.-ի ընդհանուր ուղեցույցներ, որոնք կիրառելի են:

1.4 Ինստիտուցիոնալ դաշտ

ԲԷՑ-ը՝ ԷՄՇՕ իրականացնող գործակալությունն է և պատասխանատու է Ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր գործողությունների, ներառյալ բնապահպանական և սոցիալական ազգային օրենսդրության պահանջների և

Համաշխարհային Բանկի երաշխիքների ապահովման գործառնական քաղաքականությունների համապատասխանությունը ապահովելու համար: Պետական կառույցները, որոնք հավանաբար կընդգրկվեն Ծրագրի իրականացման մեջ՝ ըստ իրենց մանդատի, ներառում են Բնապահպանության նախարարությունը և Մշակույթի նախարարությունը:

1.5 Համապատասխան տարբերակների վերլուծություն

Հաշվի են առնվել ծրագծման չորս այլընտրանքներ՝ հիմնվելով շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության և հարկադիր վերաբնակեցման ծավալների վրա.

Այլընտրանք 1. Այս առաջարկվող նոր Ծրագիծը կլինի «Ալավերդի-2» ենթակայանից գոյություն ունեցող 110կՎ միջանցքի հյուսիսային մասի 50մ-ի սահմաններում, կհատի Հաղպատի տարածքում գոյություն ունեցող միջանցքը և կանցնի դեպի «Նոյեմբերյան» ենթակայանի գոյություն ունեցող 110կՎ միջանցքի հարավային մասի 50մ-ի սահմանները: **Այս ծրագիծը ընտրվել է որպես գերադասելի տարբերակ**, քանի որ տնտեսապես կենսունակ է և ունի շրջակա միջավայրի և սոցիալական նվազագույն ազդեցություններ: Մինչև ծրագիծը հասնի Ախթալայի տարածք, հյուսիսից հարավ գոյություն ունեցող միջանցքի հատումը կարևոր է գերբնակեցվածության պատճառով, որն առաջանում է գոյություն ունեցող 35կՎ, 110կՎ, 220կՎ և որոշ 6կՎ ՕԳ-ի հետևանքով: Ընդհանուր քանակությամբ 80%-ով առկա են մոտեցման ճանապարհներ/ուղիներ, որոնց մասին տեղյակ է տեխնիկական սպասարկում անցկացնող անձնակազմը:

Այլընտրանք 2. Այս նոր ծրագիծը լինելու է «Ալավերդի-2» ենթակայանից գոյություն ունեցող 110կՎ և 220կՎ ՕԳ-ի միջև, հատելու է Ախթալայի տարածքի միջանցքը, հետո անցնելու է գոյություն ունեցող միջանցքի դեպի հարավային մասի 50մ-ի սահմանը և հասնելու է մինչև «Նոյեմբերյան» ենթակայան: Այս ծրագծի ընտրությունը բացասական կերպով ազդելու է նախագծի, շինարարության և, գործնականորեն, տեխնիկական սպասարկման արժեքի վրա: Այս այլընտրանքով գոյություն ունեցող միջանցքի հատումը նախատեսվում է Ախթալայի տարածքում, և այդ նպատակով կան որոշ ոչ ստանդարտ կետեր, որոնք պետք է հաշվի առնվեն նախագծում: Ծրագծի մի մասի համար այս այլընտրանքը կլինի կից գոյություն ունեցող 110կՎ ՕԳ-ը, որը խնդիր չէր ստեղծի շինարարության համար, բայց մինչև նոր գիծը շահագործման մեջ դնելն անհրաժեշտ կլինի կատարել գոյություն ունեցող 110կՎ հենարանի մետաղական կառուցվածքների մեծ քանակությամբ ապամոնտաժման աշխատանքներ: Հետևաբար, այս այլընտրանքի համար անհրաժեշտ կլինի ընդհանուր էլեկտրաէներգիայի անջատում: Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցություններն այս այլընտրանքի համար մոտավորապես նույնն են, ինչ որ Այլընտրանք 1-ի համար: Այսպիսով Այլընտրանք 2-ը գերադասելի չէ ոչ բնապահպանական/սոցիալական պատճառներով:

Այլընտրանք 3. Այս նոր ծրագիծը կլինի «Ալավերդի-2» ենթակայանից դեպի հյուսիս տանող ուղղությամբ, որը կհատի M6 ճանապարհը և Դեբեդ գետը և կշարունակվի

դեպի Ախթալայի տարածք: Հետո ծրագիծը կրկին անգամ կհատի Դեբեդ գետը, M6 ճանապարհը և գոյություն ունեցող 110կՎ միջանցքը: Դրանից հետո այն կշարունակվի առկա միջանցքից դեպի հարավային մասի 50մ-ի սահմանը և կհասնի մինչև «Նոյեմբերյան» ենթակայան: Այս ծրագծի այլընտրանքը մանրամասն դիտարկվել է, որովհետև այն ամբողջովին նոր ծրագիծ է «Ալավերդի-2» ենթակայանից մինչև Ախթալայի տարածք: Այս նոր ծրագծի հետ կապված կան որոշ կարևոր խնդիրներ: Ծրագիծը մոտ 4կմ-ով ավելի երկար է, քան Այլընտրանք 1-ը և 2-ը, և կպահանջվեն լրացուցիչ ծառահատման, ինչպես նաև մոտեցման ճանապարհների համար լրացուցիչ շինարարական աշխատանքներ: Այլընտրանք 2-ի նման, նախագծում նախատեսվում են ոչ ստանդարտ կետեր, քանի որ նոր ծրագիծը գտնվում է լեռնային տարածքում M6 ճանապարհի և Դեբեդ գետի հյուսիսային հատվածում և Ախթալայի տարածքում: Վերջինս անխուսափելի է երկու տարբերակների՝ 2 և 3 համար, որովհետև այն գերբնակեցված տարածք է 35կՎ և 6կՎ ՕԳ-ով, և մոտ է M6 ճանապարհի հարավային կողմին ու մի քանի վայրերի, որոնք ապահովում են գոյություն ունեցող միջանցքի բավարար հատումը:

Այլընտրանք 4. (Ծրագիր չի իրականացվում) 110կՎ Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-ի փոխարինում չի իրականացվում: Այս տարբերակը չի հանգեցնի անտառահատման և վերաբնակեցման որևէ գործողության, սակայն ընդունելի չէ, քանի որ ՕԳ-երը հին (նոտ 50 տարվա) և զգալի քայքայված են: Սա վտանգի է ենթարկում այս տարածաշրջանում էլեկտրամատակարարման անվտանգությունը և հուսալիությունը:

1.6 Ելակետային պայմաններ

Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երն անցնում են Լոռու մարզով (հյուսիսային Հայաստան), իսկ քիչ հատվածն էլ անցնում է Տավուշի մարզով (հյուսիս-արևելյան Հայաստան):

110կՎ ՕԳ-երը սկսվելով Ալավերդի-2 ենթակայանից՝ անցնում են Դեբեդ գետից բավականին բարձր գտնվող Սանահինի կանաչապատ հարթավայրով: Հետո անցնում են երկու կիրճերի վրայով, ապա Հաղպատ գյուղի ծայրով և այլ հարթավայրերով ու հատում են Դեբեդ գետի կիրճի աջակողմյան զառիթափ անտառային թեքությունները, որտեղ պլանավորված է T-աձև ճյուղավորմամբ դեպի «Ախթալա» քարշային ենթակայանը: Նեղոցի մարգագետնում գծերը թռիչք են կատարում կիրճի վրայով, որի ներքևում բնակավայր կա և շարունակում են անտառային թեքության երկայնքով: Դրանք շարունակում են անցնել գետի հարավային ափով, բայց շուտով հատում են ճանապարհը և գետը՝ ձախ ափ և Փոքր Այրումի (Դեբեդի կիրճի վերևում) կանաչապատ հարթավայր անցելով: Այնտեղից գծերը շարունակում են անցնել կիրճի ծայրով Փոքր Այրումի և Մեծ Այրումի դաշտերի և կանաչապատ հարթավայրերի վրայով, որտեղ պլանավորված է T-աձև ճյուղավորմամբ անցում դեպի գոյություն ունեցող գիծ, որի ուղղությունը դեպի «Մատուռ» լեռնահանքային կայանն է, ապա թռիչք են կատարում ևս մեկ կիրճի վրայով և Դեբեդ գետն ու գյուղ տանող ճանապարհը հատելուց հետո շուտով հասնում են «Նոյեմբերյան» ենթակայան:

Լոռու մարզի կլիման համեմատաբար խոնավ է: Տարեկան տեղումները՝ 500-ից 800 մմ են: Լեռնալանջերում ձմեռը կարճ է և մեղմ, իսկ ամառը՝ երկար և շոգ: Ինչքան ավելի մեծ է բարձրությունը, այնքան ավելի ձյունատատ են ձմեռները, իսկ ամառներն ավելի արևոտ: Նախալեռներում ձյուն գալու ժամանակաշրջանի տևողությունը հոկտեմբերից մինչև ապրիլ է, իսկ լեռնամասերում՝ մինչև մայիս ամիսներն է: Գերիշխող քամին հարավային է, իսկ որոշ դեպքերում՝ հյուսիսային և հյուսիս-արևմտյան:

Տարածաշրջանը բարդ աշխարհագրական կառուցվածք ունի, ինչը պայմանավորված է նրա դիրքով, որը իրենից ներկայացնում է Փոքր Կովկասի Մեվան-Ամասիա տեկտոնական գոտու հյուսիս-արևմտյան մասը: Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են տարբեր շրջանների երկրաբանական կազմավորումները: Համաձայն 02.02.2006թ-ի Հայաստանի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, տարածքը ընդգրկվել է առաջին սեյսմիկ գոտում, որտեղ սպասվող առավելագույն արագացումները լինում են 0.20g (8 բալ):

Հետազոտության իրականացման շրջանում տարածված են լեռնային շագանակագույն և անտառային հողերը, դրանց մի շարք ենթատիպերով: Այդ հողերի կենսակլիմայական առանձնահատկությունները նպաստում են համայնքներում անտառային բույսերի լավ աճին և բուսական զանգվածների ձևավորմանը: Այդ շրջանում տարածված հողերը՝ լեռնային շագանակագույն և անտառային հողերի հիմնայնացված և կարբոնացված տեսակներն են:

Ուսումնասիրվող տարածքի հիմնական գետը՝ Դեբեդ գետն է, իր Ձորագետ, Փամբակ և Մարցագետ վտակներով: Գետերը հիմնականում սնուցվում են անձրևաջրերով: Վարարման շրջանը տևում է մարտից մինչև հունիս ամիսները, իսկ դրան հաջորդում է կայուն և ցածր ջրի մակարդակի չոր շրջանը: Կարճատև և ինտենսիվ ջրհեղեղներ են գրանցվում սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին՝ կախված տեղումների քանակից: Լոռու մարզը հարուստ է հանքաղբյուրներով:

Հայաստանը, հարավային Կովկասում և ընդհանրապես Կովկասյան տարածաշրջանում առաջատար դիրք է գրավում բուսական աշխարհի բազմազանության առումով: ՇՄՍԱԳ-ի շրջանը գտնվում է Անտառային Լանդշաֆտի Գոտում: Անտառները, ընդհանուր առմամբ, ծածկում են լեռների կենտրոնական հատվածը՝ հյուսիսում հանդիպելով 500մ-ից մինչև 2,100 մ բարձրության վրա: Ուսումնասիրվող տարածքում անտառները ընդգրկում են մի շարք մշտադալար և թափվող ծառեր: Ճահճային տեղամասերը և անտառները լի են վայրի բույսերով: Հետազոտության իրականացման շրջանում և հարող տարածքներում կան կենդանիների բազմաթիվ տեսակներ, որոնք հիմնականում բնակվում են անտառներում, դիմացկուն թփուտներում, լքված այգիներում և մեղվանոցներում:

Հաղորդալարերին կամ ամպրոպապաշտպան ճոպաններին թռչունների բախվելու ռիսկը նվազեցնելու համար այն հատվածներում, որտեղ գիծը անցնում է կիրճի վրայով, առաջարկվում է ամպրոպապաշտպան ճոպանների վրա իրարից 20մ-ից

մինչև 25մ մետր հեռավորության վրա տեղադրել հստակ տեսանելի կոնտրաստային (այսինքն սև և սպիտակ) թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքներ:

Նոր գծի միջանցքում ազդեցության չեն ենթարկվի ոչ մի պահպանվող տարածքներ:

Ներկայումս, Հայաստանում գոյություն չունի թափոնների կառավարման արդյունավետ համակարգ: Կոշտ թափոնների մեծ մասը, առանց տեսակավորման, ուղղակի լցվում է ժամանակավոր աղբանոցներ և աղբավայրեր: Այնուամենայնիվ, կան վտանգավոր թափոնների համար նախատեսված մի քանի վայրեր, ինչպես օրինակ՝ Երևանի աղբավայրերը: Կապալառուն պետք է պարզաբանի լիազոր մարմինների հետ, թե որտեղ կարող է տեղաբաշխել թափոնները: Այս գործընթացը պետք է կատարվի կոմունալ ծառայությունների կողմից, որտեղ թափոնները պետք է տեսակավորվեն: Ներկայումս Հայաստանում մատչելի են դառնում վերամշակման հնարավորությունները, և դա կստուգվի ԲԷՑ-ի կողմից:

Լոռու մարզի բնակչությունը կազմում է 234,700 մարդ, տարածքը՝ 3,799 կմ², իսկ բնակչության խտությունը 1 կմ² տարածքի համար՝ 61.8 մարդ: Կենտրոնը Վանաձորն է, որը մարզի ամենամեծ քաղաքն է: Տավուշի մարզի բնակչությունը կազմում է 128.300 մարդ, տարածքը 2,704 կմ², իսկ բնակչության խտությունը 1 կմ² տարածքի համար՝ 47 մարդ: Այս մարզի կենտրոնը Իջևան քաղաքն է:

Բնակավայրի կառուցվածքը համակենտրոն է, բնակչության մեծ մասը բնակվում է քաղաքներում և գյուղերում: Հետազոտության իրականացման շրջանի մեծ մասը բնակեցված չէ և իրենից ներկայացնում է մասնավոր և համայնքային հողերի խառնուրդ:

ՇՄՍԱԳ-ը բացահայտել է գործող/նոր 110կՎ ՕԳ-ի միջանցքի ԱԳ-ում գտնվող մշակութային ժառանգություն հանդիսացող վայրերի երկու դեպքեր: Հաղպատ գնուղի հյուսիսային հատվածում ԱՀ 12 և ԱՀ 13 մեջտեղում գործող 110կՎ ՕԳ-ի միջանցքում խաչքար կա: ՕԳ-ի միջանցքում ԱՀ 15 և ԱՀ 16 մեջտեղում եկեղեցու ավերակներ կան և հարակից տարածքում գերեզմանոց է գտնվում:

Հետազոտություն իրականացվող շրջանում գյուղատնտեսությունը հիմնականում կենտրոնացած է գյուղերի ցածրադիր լեռնալանջերում: Գյուղատնտեսական գործունեությունը ընդգրկում է անասնապահությունը (խոշոր եղջերավոր անասուններ, ոչխարներ, խոզեր և այծեր), ցածր մշակաբույսերի (կարտոֆիլ, լոլիկ, վարունգ և սմբուկ), ինչպես նաև հացահատիկային մշակաբույսերի (ցորեն և լոբի) մշակումը և պտղատու ծառերի (դեղձ, խնձոր և ծիրան) աճեցումը:

Համաձայն տեղական տնտեսությունների կենսամակարդակի ուսումնասիրությունների, որոնք իրականացվել են Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության կողմից, պաշտոնապես ընդունված աղքատության մակարդակից ցածր պայմաններում ապրող մարդկանց տոկոսը Լոռու մարզում ավելի բարձր է Հանրապետությունում սահմանված միջին մակարդակից: Գյուղական համայնքներում աղքատության հիմնական պատճառն արտադրական

գործունեության բացակայությունն է, թերզարգացած ենթակառուցյունները և մեծ հեռավորությունները խոշոր բնակավայրերից:

1.7 Տեղեկատվություն, հրապարակում, քննարկումներ և մասնակցություն

Համաշխարհային Բանկի քաղաքականությունը խրախուսում է մասնակցային մոտեցումը ՇՄՍԱԳ-ի գործընթացին: Ֆիխտներ ընկրության բնապահպանական և սոցիալական մասնագետները, բնապահպանական հարցերով ազգային խորհրդատուի հետ միասին, հանդիպումներ են անցկացրել Երևանում և Վանաձորում ԲԷՑ-ի, Բնապահպանության նախարարության և Մշակույթի նախարարության ներկայացուցիչների հետ, ինչպես նաև դաշտային այցելություններ են կատարել դեպի Նոյեմբերյան ՕԳ-ի համար առաջարկված միջանցք (տես Բաժին **Ошибка! Источник ссылки не найден.** – Հավելված I):

Երևանում և Վանաձորում քննարկվել են բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունները, ինչպես նաև Հայաստանում և Լոռու մարզում թափոնների տեղաբաշխման հնարավորությունները: Երևանում խորհրդակցություններ են անցկացվել Վայրի Բնություն (WWF) և Օրհուս Կենտրոն ՀԿ-ների հետ, որոնց տեղեկացվել է գալիք աշխատանքների վերաբերյալ:

Երևանում խորհրդակցություններ են անցկացվել Մշակույթի նախարարության Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հետ, որոնց ընթացքում քննարկվել են պատմության և մշակույթի վայրերի պահպանության ընթացակարգերը:

ՇՄՍԱԳ-ի հաշվետվության նախագիծը, ներառյալ Շրջակա Միջավայրի և Սոցիալական Կառավարման Պլանը (ՇՄՍԿՊ), հայերեն և անգլերեն տարբերակներով կհրապարակվեն հանրությանը, և շահագրգիռ կողմերին կտրամադրվի բավարար ժամանակ այդ փաստաթղթերի հետ ծանոթանալու համար: Համաձայն ազգային պահանջների, հրապարակման ժամանակահատվածը միայն 7 օր է, սակայն փաստաթղթերի հրապարակման համար առաջարկվում է առնվազն երկու շաբաթ: Ազդակիր անձիք կունենան փաստաթղթերից օգտվելու հնարավորություն, որոնք այնուհետև ոչ միայն կտեղադրվեն ԲԷՑ-ի ինտերնետային կայքում, այլ նաև դրանց տպագրված օրինակները կտրամադրվեն տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակներին, ինչպես նաև հայտարարությունների միջոցով կիրականացվի այդ փաստաթղթերի առկայության վերաբերյալ իրազեկումը: Տպագրված օրինակները կտրամադրվեն նաև քաղաքական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Փաստաթղթերը հրապարակելուց հետո ամենաշուտը երկու շաբաթ հետո ՇՄՍԱԳ-ի հաշվետվության նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ կանցկացվեն: Քննարկումները պետք է կենտրոնանան ԱԵԱ-ց համար ՇՄՍԱԳ-ի մեկնաբանման, ինչպես նաև նրանց մտահոգությունների և արձագանքների ստացման վրա, որոնք հետագայում կընդգրկվեն ՇՄՍԱԳ-ի հաշվետվության վերջնական նախագծի վերանայված տարբերակում: Հանրային լուումները կանցկացվեն աշխատանքների իրականացման տեղանքն մոտ, այնպես որ համայնքները կարողանան ընդգրկվել գործընթացի մեջ և արտահայտեն իրենց հարցերն ու մտահոգությունները:

ԲԷՑ-ը կապահովի գենդերային առումով հանրային լուումների զգայունությունը և լուումներին համապատասխան ՀԿ-ների մասնակցությունը: Օրհուս Կենտրոնը կօգնի համապատասխան ՀԿ-ներին միանալ և կկիսվի ուսումնասիրության և այլնի մասին տեղեկատվությամբ:

1.8 Ազդեցության գնահատում

Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի փոխարինման հետևանքով ակնկալվող շրջակա միջավայրի հնարավոր ազդեցության հիմնական տեսակները բաղկացած են հետևյալից.

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհի վրա ազդեցությունն անխուսափելի է, ներառյալ հասուն ծառերի կտրումը ԱԳ-ում:
- Հնարավորության սահմաններում կկիրառվեն առկա մոտեցման ճանապարհները: Եթե նոր մոտեցման ճանապարհների կառուցման անհրաժեշտություն լինի, ազդեցությունները հիմնականում առաջ կգան անտառապատ տարածքներում:
- Քիչ քանակությամբ շինարարական աղբ կառաջանա: Թափոնների զգալի ծավալը կլինի գոյություն ունեցող ՕԳ-ների ապամոնտաժումից, որը չի հանդիսանում այս Ծրագրի մասը:

Հնարավոր սոցիալական ազդեցության ամենակարևոր ոլորտները հետևյալն են.

- Հողի ձեռքբերում նոր հենասյուների տեղակայման, նոր մոտեցման ճանապարհների կառուցման (ինչպես պահանջվում է) և «Նոյեմբերյան» ենթակայանի ընդլայնումը կառուցելու համար,
- Քիչ քանակությամբ տների/տնտեսությունների ֆիզիկական վերաբնակեցման անհրաժեշտություն կարող է լինել՝ կապված միջանցքի վերջնական նախագծումից (հաշվի առնելով հնարավոր շրջանցումները),
- Հողի վերջնական ուսումնասիրության, մոտեցման ճանապարհների կառուցման, հենարանների մոնտաժման, էլեկտրահաղորդման լարերի անցկացման և ԱԳ-ի սպասարկման ժամանակ մշակաբույսերի և ծառերի հնարավոր վնասում,

ԲԷՅ-ի կողմից պետք է մշակի Վերաբնակեցման գործողությունների պլանը (ՎԳՊ), որը կներառի մարդահամարը, կորուստների մանրամասն գույքագրումը և սոցիալատեսական ուսումնասիրությունը: ՎԳՊ-ն պետք է հիմնված լինի այս աշխատանքի շրջանակներում Ֆիխտներ ընկերության կողմից մշակվող ՎՔՇ-ի վրա:

ՇՄՍԱԳ-ի հաշվետվությունը ցույց է տալիս, որ առաջարկվող Նոյեմբերյան ՕԳ-ի փոխարինման շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցությունների մակարդակը ցածրից դեպի միջինը կլինի, եթե իրականացվի առաջարկվող ՇՄՍԱԳ-ն և կիրառվեն բոլոր առաջարկվող մեղմացուցիչ միջոցառումներ և ՎԳՊ-ն մշակվի, ինչպես նկարագրված է ՎՔՇ-ում: Համաձայն ՇՄՍԱԳ-ի, առաջանում են շրջակա միջավայրի և սոցիալական բացասական ազդեցություններ հիմնականում շինարարության իրականացման փուլում: Շահագործման փուլում դրական ազդեցությունները ակնհայտ են և բաղկացած են Լոռու և Տավուշի մարզում շատ ավելի հուսալի էներգամատակարարումից:

1.9 Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլան

Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի առաջարկվող փոխարինումը ազդեցություն կունենա տարբեր բնապահպանական և սոցիալական ընկալիչների վրա: ՇՄՍԿՊ-ն ընդգրկում է միջոցառումների շարքը, որոնք պետք է իրականացվեն այս ազդեցությունները կանխարգելելու/նվազեցնելու և դրանց դիմաց փոխհատուցում տրամադրելու համար: Այս մեղմացուցիչ միջոցառումների իրականացումը ապահովելու համար ներկայացվում են մոնիթորինգային միջոցառումները:

ՇՄՍԱԳ-ն կընդգրկվի նախագծման, շինարարության, տեղադրման աշխատանքներ իրականացնող ընկերություն վարձելու համար մրցութային փաստաթղթերի մեջ և կկազմի պայմանագրի անբաժան մասը, որը պարտադիր կլինի աշխատանքներն իրականացնելու համար:

ԲԷՅ-ը, որը ԷՄՀԾ-ն իրականացնող գործակալությունն է, աշխատանքի կընդունի (տեղական) բնապահպանության մասնագետ: ԲԷՅ-ի կողմից արդեն աշխատանքի ընդունված սոցիալական մասնագետի հետ միասին բնապահպանության մասնագետը կիրականացնեն ՇՄՍԿՊ-ի պատշաճ իրականացման մոնիթորինգ՝ շինարարության տարածքների ամենամայա վերահսկողությունների միջոցով:

Նախագծման փուլ

Մանրամասն նախագիծը պետք է կազմի այնպես, որ նվազագույնի հասցնի հողերի ձեռքբերումը և ֆիզիկական վերաբնակեցումը: Նպատակային է լինելու նաև մոտեցման ճանապարհների կառուցման անհրաժեշտությունը նվազագույնի հասցնելը:

Առաջարկվում է մինչև շինարարական աշխատանքներն սկսելը ԱԳ-ի երկայնքով կատարել ուսումնասիրություն թռչունների և չղջիկների վերաբերյալ, քանի որ

գրականության մեջ ոչ մի տվյալ առկա չէ, իսկ ձմեռը հնարավոր չէր կատարել թռչունների և չղջիկների վերաբերյալ պլանի կազմում: Այս ուսումնասիրությունը պետք է իրականացվի անտառտնտեսության վարչության կողմից՝ Վայրի Բնություն ՇԿ-ի և տեղական մասնագետների հետ համագործակցելով:

Այնտեղ, որտեղ նոր գծերն անցնում են այլ առկա գծերին զուգահեռ (35կՎ, 110կՎ և 220կՎ ՕԳ-եր), պետք է ընտրվի նվազագույն հեռավորություն, որը կնվազեցնի երկու զուգահեռ անցնող գծերի ԱԳ-ի լայնությունը: Այնտեղ, որտեղ գործող գծերը հասվում են նոր 110կՎ ՕԳ-երով, համապատասխան նախագծողական միջոցներ պետք է ձեռնարկվեն և հաղորդալարերի միջև բավարար նվազագույն հեռավորություն պետք է ապահովվեն:

Շինարարական փուլ

Նվազագույնի կհասցվեն բուսական և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցությունները՝ կանխելով ծառերի կտրումը և հեռացումը բանվորների համար նախատեսված ճամբարային տարածքներ բացելու համար, խիստ կերպով արգելելով որսը և բուսական տեսակների հավաքումը և վերականգնելով վնասված տարածքները: Նոր հենարանների տեղակայման վայրերի մոտ 80%-ը ունեն գոյություն ունեցող մոտեցման ճանապարհներ: Մասնավորապես այն տարածքում, որտեղ գծի միջանցքը հատում է անտառապատ բլրային և լեռնային տեղանքները դեպի հարավ տանող Դեբեդի գետահովտային մասը, գոյություն ունեցող մոտեցման ճանապարհները պետք է վերականգնվեն (օրինակ՝ մոտեցման ճանապարհները ծածկող բուսականությունը) և որոշ նոր մոտեցման ճանապարհներ կարող են կառուցվել: Ծառահատումը նաև անհրաժեշտ կլինի ԱԳ-ում: Պարտադիր ծառատնկման պլան կմշակվի, որը կհաստատվի և կիրականացվի անտառտնտեսության վարչության կողմից: Տեղանքին հատուկ տեղական ծառատեսակներ կտնկվեն 2:1 հարաբերակցությամբ (մեկ կտրված ծառի փոխարեն պետք է տնկել երկու ծառ) միջանցքի մոտակայքում (օրինակ նոսրացած անտառային տարածքում): Ծառերի տնկման վերջնական վայրը կորոշվի անտառտնտեսության վարչության կողմից՝ Վայրի Բնություն ՇԿ-ի հետ համագործակցելով: Երկար թռիչքով հենարանները պետք է տեղադրվեն բլուրների գագաթներին անտառապատ թեքությունների և հովիտների վրայով թռիչք կատարելու համար՝ այսպիսով նվազագույնի հասցնելով ծառահատումները տեղանքում՝ հենարանների մոտ ԱԳ-ում, որտեղ պետք է պահվի ծառերի և էլեկտրահաղորդման գծերի միջև անհրաժեշտ միջակայքը:

Հենարանների տեղադրման համար անհրաժեշտ հողային աշխատանքների իրականացման ընթացքում հողի վերին շերտը պետք է հավաքվի, առաձին կուտակվի և օգտագործվի տեղանքը վերականգնելու համար, երբ որ հենարանները տեղադրված լինեն: Բանվորների ճամբարների համար օգտագործվող տարածքները պետք է վերադարձվեն նախկին վիճակին՝ հավաքելով դրանք, իսկ 110կՎ գիծը պետք է ապամոնտաժվի:

Պետք է խուսափել հողի և ջրի աղտոտումից՝ փակ և ցանկապատված տարածքներում կատարելով շինարարական սարքավորումների պահպանումն ու

լիցքավորումը, ինչպես նաև արտահոսքերը վերահսկումը, նյութերի ապահովումը, համապատասխան պահեստային տարածքներում հեղուկ նյութերի պահեստավորումը, պատշաճ սանիտարական միջոցների կիրառումը, ինչպես նաև բանվորների ուսուցման միջոցով:

Թափոնների հեռացման համար Շինարար Կապալառուն պետք է Թափոնների Կոմունալ Ծառայությունների Վարչությունների հետ պարզաբանի, թե որտեղ կարող են տեղափոխվել/հեռացվել թափոնների տարբեր տեսակները: Թափոնների տեղաբաշխումը պետք է կատարվի կոմունալ ծառայությունների կողմից, որտեղ թափոնները պետք է տեսակավորվեն: ԲԷՑ-ը պատասխանատու կլինի ապամոնտաժված նյութերի՝ հենարանների, մալուխների, շինարարական աղբի և այլնի վերամշակման կամ տեղաբաշխման համար: Վերամշակման նպատակներով մետաղների ջարդոնները կարող են վաճառվել մասնագիտացված ընկերություններին (օրինակ՝ Չարենցավանում գտնվող ASCE Գրուփ Բաց Բաժնետիրական Ընկերությունը), որոնք էլ կարող են տեղափոխել մետաղների ջարդոնները հենց ապամոնտաժված տարածքից: Վտանգավոր թափոնների փոքր քանակությունները, որոնք են՝ յուղը, վառելիքը, ներկերը կամ յուղից աղտոտված հողը, կպահվեն «Ալավերդի-2» ենթակայանում, որտեղ կա բավարար տարածք և ծածկապատ, բետոնապատ ու պատնեշավորված հարմարություններ վնասակար թափոնները պահեստավորելու և կիրառելու համար:

Աղմուկի մակարդակը բնակիչների համար չպետք է գերազանցի 55 դբ (A), իսկ բանվորների համար՝ 80 դբ (A): Եթե այս ցուցանիշները գերազանցվում են՝ բանվորներին պետք է տրամադրվեն լսողության պաշտպանիչ սարքեր: Շինարարության աղմուկի պատճառով սպասվող անհանգստությունը անհրաժեշտ է նվազագույնի հասցնել տարբեր միջոցներով (օրինակ՝ բեռնատարների շարժ միայն ցերեկային ժամերին, ցածր ձայնով աշխատող մեխանիկական սարքավորումների օգտագործում, և այլն):

Հայաստանի էլեկտրական ցանցերի համար անվտանգության գոտիների վերաբերյալ Տեխնիկական կանոնակարգերը սահմանում են 20մ հեռավորություն դրսի հաղորդալարերից 110 կՎ-ի համար (ՀՀԿ 2009)՝ որպես բուֆերային գոտի: Համաշխարհային Բանկը կիրառում է ՀԲ/ՄՖԿ Կատարողական ստանդարտները՝ էլեկտրական և մագնիսական դաշտերից մարդկանց ճառագայթումը կառավարելու նպատակով: ՀԲ/ՄՖԿ Կատարողական ստանդարտները պահանջում են պահպանել Ոչ իոնացնող ճառագայթումից պաշտպանության միջազգային հանձնաժողովի (ՈԻՃՊՄՀ) կողմից սահմանված սահմանաչափերը, որոնք հետևյալն են.

ՈՒՃՊՄՀ (1998թ.) ճառագայթման ուղեցույցներ էլեկտրական և մագնիսական դաշտերից ընդհանուր հասարակության ճառագայթման վերաբերյալ		
Հաճախականություն	Էլեկտրական դաշտ (Վ/մ)	Մագնիսական դաշտ (μS)
3-150 կՀց	87	6.25
10-400 ՄՀց	28	0.092
2-300 ԳՀց	61	0.2

ՈՒՃՊՄՀ ճառագայթման սահմանաչափեր էլեկտրական և մագնիսական դաշտերից ընդհանուր հասարակության ճառագայթման համար		
Հաճախականություն	Էլեկտրական դաշտ (Վ/մ)	Մագնիսական դաշտ (μS)
50 Հց	5000	100
60 Հց	4150	83

ՕԳ-երը պետք է այնպես նախագծվեն, որ համապատասխանեն ազգային և ՈՒՃՊՄՀ ստանդարտներին, որը որ ավելի խիստ լինի, և, հետևաբար, ՕԳ-երի մոտակայքում բնակվող անձիք պաշտպանված կլինեն էլեկտրական և մագնիսական դաշտերի ճառագայթման բացասական ազդեցություններից:

Բանվորների և առաջարկվող Ծրագրի էլեկտրահաղորդման գծերի մոտակայքում բնակվող անձանց ճառագայթման մակարդակը պետք է այս ուղեցույցներում նշված արժեքներից ցածր լինի:

Պետք է սահմանափակվեն ազդեցությունները օդի որակի վրա մեքենաների և շինարարական տեխնիկայի պատշաճ պահպանման, փոշին նվազեցնելու նպատակով շինարարական նյութերը պատշաճ պահեստավորելու, ինչպես նաև թափոնների բացօթյա այրումը արգելելու միջոցով, և այլն:

Կարող է անհրաժեշտ լինել փոքր քանակությամբ տների/տնային տնտեսությունների ֆիզիկական վերաբնակեցում, որն էլ կախված կլինի վերջնական միջանցքի նախագծից: Հաշվի առնելով առաջարկվող շրջանները՝ կնվազեցվեն տեղափոխման ենթակա տների քանակությունը:

Բոլոր անխուսափելի վնասների, ծառահատումների, մշակաբույսերի կորուստի, հողի օտարման, վերաբնակեցման և այլնի համար, որոնք առաջացել են հողի վերջնական ուսումնասիրության, շինարարական և տեխնիկական սպասարկման աշխատանքների իրականացման ընթացքում, պետք է տրամադրվի լիարժեք փոխհատուցում՝ համաձայն ՎԳՊ-ի (չի կազմում այս աշխատանքների շրջանակի մի մաս, սակայն պետք է իրականացվի առանձին ընտրվող արտաքին խորհրդատուի կամ ԲԷՑ-ի սոցիալական մասնագետի կողմից՝ Ծրագրի ՎՔՇ-ի հիման վրա):

ՕԳ-երի միջանցքում կան երկու մշակութային վայրեր, որոնք հասկոբոշվել են տեղանքի ուսումնասիրության ընթացքում: Դեպի Հաղպատ գյուղի հյուսիս-արևելք գոյություն ունեցող 110կՎ ՕԳ-երի միջանցքում խաչքար կա: Առաջարկվող 110կՎ ՕԳ-երի միջանցքում ԱՀ 15-ի և ԱՀ 16-ի միջև գտնվում են եկեղեցու ավերակներ և դրան հարակից գերազմանոց: Նոր ՕԳ-երի կառուցման և հնի ապամոնտաժման համար աշխատանքները կարող են իրականացվել առանց այս մշակութային ժառանգական վայրերը վնասելու: Խելամիտ հեռավորություն պետք է պահվի այս մշակութային արժեքներից, հենց որ հենարանների տեղակայման վայրերը հասկոբոշվեն Մշակույթի նախարարության հետ համաձայնագրում: Ինչ վերաբերում է պատմական և մշակութային վայրերին, որոնք հնարավոր է հատվում են գծի միջանցքով, պլանավորված հենարանների տեղակայման վայրերի և մոտեցման ճանապարհների վերաբերյալ ԲԷՑ-ը տվյալներ կտրամադրի Մշակույթի նախարարությանը, որն էլ ի պատասխան կկազմի ազդակիր վայրերի վերաբերող իր կարծիքի մասին հաշվետվություն: Անհրաժեշտության դեպքում ԲԷՑ-ը հետազայում կառաջարկի հենարանների տեղափոխում, որը պետք է հաստատվի Մշակույթի նախարարության կողմից: Գտածոների հետ կապված ընթացակարգերը նույնպես ներառված են ՇՄՄԱԳ-ի հաշվետվության մեջ:

Շինարար Կապալառուն պետք է ունենա ԱԱԲ Կառավարման պլան և հետևի դրան ամբողջ ժամանակ, քանի դեռ գտնվում է տեղանքում:

Պետք է հետևել աշխատանքի ընդունման և վարձատրման խտրականությունը (ներառյալ սեռը, տարիքը, կրոնը, ազգությունը, և այլն) բացառող քաղաքականությանը, և շինարարական աշխատանքների համար աշխատանքի ընդունելիս առաջնայնությունը տալ տեղի բնակչությանը: Պետք է բարելավվի կանանց զբաղվածությունը: Չպետք է թույլատրվի որևէ հանդուրժողականություն աշխատանքի վայրում և բանվորների ճամբարներում սեքսուալ ոտնձգությունների նկատմամբ:

Պետք է նվազագույնի հասցվեն երթևեկության պատճառով առաջացող ազդեցությունները կամ ազդեցությունները երթևեկության վրա, ի թիվս այլոց, վարորդների արտոնագրման և վերապատրաստման, արագության սահմանափակումների պահպանման, տեղական համայնքների հետ համագործակցության (օրինակ՝ կրթություն երթևեկության և հետիոտների անվտանգության ոլորտում, նշագրման բարելավում, ճանապարհների անվտանգություն, և այլն), ինչպես նաև շինարարության իրականացման վայրերի հստակ նշագրման միջոցով:

Տեղական համայնքները պետք է նախապես տեղեկացվեն գալիք շինարարական աշխատանքների, դրանց իրականացման վայրերի վերաբերյալ, իսկ վտանգավոր նյութերը պետք է հստակորեն նշվեն հանրության առողջության և անվտանգության վրա ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար:

Շահագործման և պահպանման փուլ

ԱԳ-ն պետք է զերծ պահել ցանկացած բարձր աճող բուսականությունից առանց թունաքիմիկատներ կիրառելու: Գիծը պետք է թռիչք ունենա անտառապատ սարավանջերի և հովիտների վրայով: ԱԳ-ի տարածքների սահմաններում գտնվող հողերը կարող են օգտագործվել գյուղատնտեսական նպատակներով: Շահագործման փուլի ընթացքում տեխնիկական սպասարման մեջ ընդգրկված իր անձնակազմի համար ԲԷՑ-ը կկազմի և իրականացնի Առողջապահության և անվտանգության կառավարման պլան (ԱԱԿՊ):

1.10 Բողոքների կարգավորման մեխանիզմ

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ԱԵԱ-ք կարող են կարծել, որ իրենց հետ անարդար են վարվել, և այս դեպքում ԲԷՑ-ը պետք է իրականացնի բողոքների կարգավորման կենսունակ մեխանիզմ:

Խրախուսվում է ԱԵԱ-ց հետևյալ գործողությունների իրականացումը.

ա) Անձամբ, կամ համայնքի ղեկավարի կամ ՀԿ-ների անձնակազմի միջոցով դիմել Կապալառուի կողմից նշանակված դժգոհությունների հարցերով զբաղվող անձնակազմին՝ պարբերաբար իրականացվող տեղանքի այցելությունների ժամանակ, կամ հատուկ հեռախոսահամարով:

բ) Ներկայացնել բողոք և տրամադրել տեղեկատվություն հարցի վերաբերյալ,

գ) Կապալառուի հետ համաձայնության գալ մեղմացուցիչ միջոցառման վերաբերյալ,

դ) Կապալառուի հետ համաձայնության գալ բողոքների կարգավորման համար պահանջվող ժամանակի վերաբերյալ: Բողոքները պետք է կարգավորվեն երկու շաբաթվա ընթացքում, կամ Ծրագրի ժամանակացույցով սահմանված այլ ժամկետներում,

ե) Ստորագրել, եթե մեղմացուցիչ միջոցառման իրականացումը եղել է ըստ ձեռք բերված համաձայնության,

զ) Վերոնշյալ ընթացակարգով բավարարված չլինելու դեպքում դիմել ԲԷՑ-ին,

է) Ներգրավել համապատասխան ՀԿ-ներին,

ը) Բոլոր միջոցների ձախողման դեպքում՝ բողոքների կարգավորման համար դիմել դատարան:

Այնուամենայնիվ, բողոքների կարգավորման վերոնշյալ մեխանիզմը չի սահմանափակում դժգոհության գործընթացի հենց առաջին փուլում ընդհանուր իրավասության դատարան դիմելու քաղաքացու իրավունքը: Բողոքների կարգավորման մեխանիզմը նախատեսված է երկարատև դատական ընթացակարգերից խուսափելու համար:

Բոլոր ծախսերը կկատարվեն Ծրագրի բյուջեից:

1.11 ՇՄՍԿՊ-ի իրականացման ծախսերը

110կՎ Լավվար և Նոյեմբերյան ՕԳ-երի փոխարինման ընթացքում ազդեցությունների նվազեցման համար նախատեսված ծախսերը հիմնականում ներառված են շինարարության կանոնավոր իրականացման ծախսերի մեջ:

Բնապահանական ազդեցությունների մեղմացման լրացուցիչ ծախսերը կապված հետ ծառերի պարտադիր տնկման հետ:

Վերատնկման ընդհանուր ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը առկա կլինի, հենց որ հայտնի լինի տեղափոխվող ծառերի քանակը և կազմվի պարտադիր տնկման պլանը:

2. Ծրագրի նկարագրությունը

2.1. Ծրագրի համատեքստը

Համաշխարհային Բանկն աջակցում է Հայաստանի Կառավարությանը ընթացքի մեջ գտնվող Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի (ԷՄՀԾ) ներքո Էլեկտրահաղորդման ցանցի հզորացմանը: ԷՄՀԾ-ի ներքո «Բարձրավոլտ Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (ԲԷՑ)՝ Էլեկտրահաղորդում իրականացնող ընկերությունը, արդեն փոխարինում է «Հրազդան» ՋԷԿ-ից դեպի «Շինուհայր» եթակայան գնացող 220կՎ օդային Էլեկտրահաղորդման գիծը: Փոխարինման աշխատանքներն ընթացքի մեջ են: ԷՄՀԾ-ի ներքո կան խնայողություններ, որոնք Կառավարությունը մտադիր է օգտագործել փոխարինելու համար

- 110կՎ «Նոյեմբերյան» ՕԳ-ն, որը սկսում է 220/110/35կՎ «Ալավերդի-2» ենթակայանից և հասնում է մինչև Հաղթանակ գյուղում գտնվող 110/35կՎ «Նոյեմբերյան» ենթակայանը:
- 110կՎ «Լավար» ՕԳ-ն, որը սկսում է 220/110/35կՎ «Ալավերդի-2» ենթակայանից և հասնում է մինչև 110/35կՎ «Նոյեմբերյան» ենթակայան՝ ունենալով T-աձև ճյուղավորում դեպի «Սադախլու» ենթակայան (Վրաստան):

Այս գծերը Էլեկտրաէներգիա են մատակարարում Հայաստանի հյուսիս-արևելյան մասի մեծ քանակությամբ սպառողներին: Վերը նշված գոյություն ունեցող ՕԳ-երը մոտ 50 տարվա վաղեմություն ունեն և գտնվում են խիստ քայքայված վիճակում, ինչպես հաստատվեց մետաղի նմուշառման փորձարկման արդյունքներից: Սա վտանգի է ենթարկում այս տարածքում Էլեկտրամատակարարման անվտանգությունը և հուսալիությունը:

2.2. Տեխնիկական նախագիծը և ՕԳ-երի փոխարինման աշխատանքների ծավալը

Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի փոխարինումը կհզորացնի և կաջակցի Հայաստանի հյուսիսում հուսալի Էլեկտրամատակարարումը՝ վերականգնելով առաջնահերթություն ունեցող ՕԳ-երը Լոռու և Տավուշի մարզերում:

Նոր 110կՎ ՕԳ-երը մոտ 25կմ երկարությամբ անցնելու են Հայաստանի Հանրապետության հյուսիս-կենտրոնական մասում գտնվող 220/110/35կՎ «Ալավերդի-2» ենթակայանից (տես նկարՆկար 0-1) դեպի հյուսիս-արևելյան մասում Հաղթանակ գյուղում գտնվող 110/35կՎ «Նոյեմբերյան» ենթակայանը (տեսՆկար 0-2):

Նոր ՕԳ-երն ունենալու են նոր երկշղթա հենարաններ և դրանց համար նախատեսված հիմքեր, նոր ՊԱԱՀ-եր (պողպատով ամրանավորված այլումինե հաղորդալար), նոր ՕՄԱՃ (Օպտիկական մանրաթելով ամպրոպապաշտպան ճոպան), հողակցում յուրաքանչյուր հենարանի տեղում, և «Ալավերդի-2» ենթակայանի միջոցով նոր կապ Ազգային Էներգահամակարգի հետ, նոր

միացություններ Հաղթանակում գտնվող 110/35կՎ «Նոյեմբերյան» բաշխիչ ենթակայանի հետ, և նոր հիմնական ՕԳ-ից T-աձև միացություններ «Ախթալա» քարշային ենթակայանի և «Մատուռ» լեռնահանքային կայանի համար:



Նկար 0-1: «Ալավերդի-2» ենթակայան

Նոր ՕԳ-երի ծրագիծը պետք է կառուցվի նոր միջանցքում (50մ լայնությամբ), շատ մասերում առանձնացված հին ՕԳ-ից մոտ 50մ-ով, բայց երբեմն կպահանջվեն լրացուցիչ շեղումներ գծից, որպեսզի հնարավոր լինի խուսափել տների, անտառների և այլնի վրա ազդեցությունից: Գծի ծրագիծն ունի մի քանի լայն թռիչքներ կիրճերի վրայով (400-ից 600մ լայնության սահմաններում): Նոր տեղադրվող հենարանների համար 80%-ով առկա են մոտեցման ճանապարհներ կամ ուղիներ, ուստի շինարարության համար հնարավորությունները բավականին են (Տրակտեբել Էինջինիրինգ ընկերության 2014):

Համաձայն ԲԷՑ-ի, շինարարության ընթացքում գոյություն ունեցող գծերի կառուցման համար ցանցից անջատում չի պահանջվի: Այսպիսով, շինարարական աշխատանքների ժամանակ էլեկտրաէներգիայի անջատում տեղի չի ունենա:

Հայաստանի էլեկտրական ցանցերի համար անվտանգության գոտու վերաբերյալ տեխնիկական կանոնակարգով սահմանվում է, որ 110կՎ ՕԳ-ի դրսի հաղորդալարերից յուրաքանչյուր կողմից պետք է պահվի 20մ հեռավորություն, որպես բուֆերային գոտի (ՀՀԿ 2009): Արդյունքում, 110կՎ Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի համար միջանցքի լայնությունը կազմում է 40մ՝ գումարած հաղորդալարերի միջև եզրաչափքը (կախված հենարանների վերջնական նախագծումից): Այսպիսով, այս ՇՄՍԱԳ-ի միջանցքի ընդհանուր լայնությունը վերցվել է 50մ:

Տեսողական ազդեցությունը նվազեցնելու համար գոյություն ունեցող 110կՎ ՕԳ-երը պետք է ամբողջովին ապամոնտաժվեն, երբ նոր գիծը շահագործվի: Սա նաև կներառի այլևս չօգտագործվող հենարանների հիմքերի հեռացումը:

Պարտադիր ծառատնկման պլանի կազմումն ու իրականացումը պետք է ներառվի աշխատանքը տրամադրողի պայմանագրի մեջ և հաստատվի անտառտնտեսության վարչության կողմից Վայրի Բնություն ՀԿ-ի հետ համագործակցելով: Երկու տարվա ընթացքում տնկիների պահպանումը և չորացած տնկիների վերատնկումը նույնպես պետք է ապահովվի անտառտնտեսության վարչության/ՀԿ-ների կողմից:

2.3. Լալվար և Նոյեմբերյան գծերի գտնվելու վայրը


Առաջարկված 110կՎ Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երը, որոնք ունեն մոտավորապես 25 կմ երկարություն, սկսվում են «Ալավերդի-2» ենթակայանից (տես նկարՆկար 0-1) (ծովի մակարդակից 964մ բարձրության վրա) և ավարտվում է «Նոյեմբերյան» ենթակայանում (տեսՆկար 0-2) (ծովի մակարդակից 497մ բարձրության վրա):



Նկար 0-2: Հաղթանակ գյուղում գտնվող «Նոյեմբերյան» ենթակայանը

110կՎ ՕԳ-երը սկսվելով «Ալավերդի-2» ենթակայանից՝ անցնում են Դեբեդ գետից բավականին բարձր գտնվող Սանահինի կանաչապատ հարթավայրով: Հետո անցնում են երկու կիրճերի վրայով, ապա Հաղպատ գյուղի ծայրով և այլ հարթավայրերով ու հատում են Դեբեդ գետի կիրճի աջակողմյան գառիթափ անտառածածկ լանջերը, որտեղ պլանավորված է T-աձև ճյուղավորմամբ անցում դեպի «Ախթալա» քարշային ենթակայան: Նեղոցի հովտում գծերը թռիչք են կատարում կիրճի վրայով, որի ներքևում բնակավայր կա և շարունակում են անցնել անտառածածկ լանջերի երկայնքով, ապա գետի հարավային ափով, բայց շուտով հատում են ճանապարհը և գետը՝ ձախ ափ և Փոքր Այրումի (Դեբեդի կիրճի վերևում) կանաչապատ հարթավայրը անցնելով: Այնտեղից գծերը

շարունակում են անցնել կիրճի ծայրով Փոքր Այրումի և Մեծ Այրումի դաշտերի և կանաչապատ հարթավայրերի վրայով, որտեղ պլանավորված է T-աձև ճյուղավորմամբ անցում դեպի գոյություն ունեցող գիծը, որի ուղղությունը դեպի «Մատուռ» լեռնահանքային կայանն է, ապա թռիչքներ են կատարում ևս մեկ կիրճի վրայով և Դեբեդ գետն ու Հաղթանակ գյուղ տանող ճանապարհը հատելուց հետո շուտով հասնում են Նոյեմբերյան ենթակայան (տես քարտեզՔարտեզ 0-1):



Քարտեզ 0-1: Առաջարկվող 110կՎ Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի գտնվելու վայրը Լոռու և Տավուշի մարզերում

3. ՇՄՍԱԳ-ի նպատակները և մեթոդաբանությունը

3.1. ՇՄՍԱԳ-ի գործողության շրջանակը և նպատակները

Այս Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցությունների գնահատման (ՇՄՍԱԳ) շրջանակներում, Ֆիխտներ ընկերությունն իրականացրել է «Ալավերդի-2» ենթակայանից միջև «Նոյեմբերյան» ենթակայան ձգվող 110կՎ Լավար և Նոյեմբերյան էլեկտրահաղորդման գծերի (մոտավորապես 25 կմ) փոխարինման շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություն:

Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի առաջարկվող փոխարինման ծրագիրը որոշակի ազդեցություն կունենա տարբեր բնապահպանական և սոցիալական բաղադրիչների վրա: ՇՄՍԱԳ-ի հիմնական նպատակներն են ներպետական և միջազգային ստանդարտներին համապատասխանող անհրաժեշտ բնապահպանական և սոցիալական մեղմացուցիչ միջոցառումների առաջարկման և իրականացման ապահովումը: ՇՄՍԱԳ-ը օգտակար տեղեկատվություն է տրամադրում ԲԷՑ-ին, թե ինչպես պետք է նախագծվի և պլանավորվի բարձր լարման էլեկտրահաղորդման գիծը՝ խուսափելով բացասական ազդեցություններից կամ մեղմացնելով դրանք, և առավելագույնս օգտագործելով ակնկալվող բնապահպանական և սոցիալական օգուտները:

Գոյություն ունեցող բնապահպանական իրավիճակի հիման վրա, Ֆիխտներ ընկերությունը որոշել և գնահատել է բնապահպանական և սոցիալական ազդեցությունները առաջարկվող ՕԳ-երի շինարարության և շահագործման ընթացքում: Երկրող քայլով, հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցման համար նախատեսվել են համապատասխան մեղմացուցիչ միջոցառումներ, այլընտրանքային ուղղություններ և մոնիթորինգի իրականացման մեխանիզմներ:

Ըստ ԲԷՑ-ի, նոր 110կՎ ՕԳ-երը կանցնեն գործող 110կՎ գծից մոտավորապես 50մ հեռավորության վրա: Այս ՇՄՍԱԳ-ն ընդգրկում է նաև այս նոր գծի միջանցքի, ինչպես նաև առաջարկվող որոշ շրջանցների ազդեցությունները և դրանց համապատասխան մեղմացուցիչ միջոցառումները:

Հետազոտության ընթացքում, հիմնական շեշտը դրվել է էլեկտրահաղորդման գծերի համար այնպիսի ծրագիծ գտնելու վրա, որը տնտեսական և տեխնիկական տեսանկյունից իրականացվելի է և թույլ կտա.

- ա) հնարավորինս խուսափել բնապահպանական ազդեցություններից
- բ) ամենայն հավանականությամբ խուսափել վերաբնակեցման գործողությունների անհրաժեշտությունից, և
- գ) հնարավորինս խուսափել մշակութային և պատմական վայրերը հատելուց:

ՇՄՍԱԳ-ի, ներառյալ ՇՄՍԿՊ-ի հրապարակումից հետո կանցկացվեն հանրային քննարկումներ ԱԵԱ-ց մտահոգությունները և արձագանքները ստանալու համար:

3.2. Ընթացակարգեր և մեթոդաբանություն

Այս ՇՄՍԱԳ-ն իրականացնելու համար Ֆիխտներ ընկերությունը ստեղծել է հետևյալ բազմամասնագիտական խումբը.

- Բնապահպանական և էկոլոգիական հարցերով միջազգային ավագ փորձագետ;
- Սոցիալտնտեսական հարցրով միջազգային փորձագետ;
- Բնապահպանական և իրավական հարցերով ազգային փորձագետներ:

Որպես աշխատանքային ուսումնասիրություն, պատրաստվել է կենսաֆիզիկական պարամետրերի վերաբերյալ ընդհանուր ակնարկ և 2015թ-ի հունվարին բնապահպանական և սոցիալական փորձագետների կողմից իրականացվել է դաշտային ուսումնասիրություն, այցելություն ենթակայաններ և առաջարկված գծի միջանցքը, ներառյալ որոշ թեժ կետեր, որոնք են նոր գծի միջացքի հետևանքով ազդեցության ենթարկված մարգագետինների, անտառային տարածքների և գյուղերի հետ հատումը: Ուսումնասիրության ընթացքում չեն հանդիպել որևէ հազվագյուտ, վտանգված, էնդեմիկ կամ մտահոգություն առաջացնող այլ տեսակներ: Առաջարկվում է մինչև շինարարական աշխատանքներն սկսելը ԱԳ-ի երկայնքով կատարել ուսումնասիրություն թռչունների և չղջիկների վերաբերյալ, քանի որ գրականության մեջ ոչ մի տվյալ առկա չէ, իսկ ձմեռը հնարավոր չէր կատարել թռչունների և չղջիկների վերաբերյալ պլանի կազմում: Այս ուսումնասիրությունը պետք է իրականացվի անտառտնտեսության վարչության կողմից՝ Վայրի Բնություն ՀԿ-ի և տեղական մասնագետների հետ համագործակցելով:

Լրացուցիչ տեղեկատվություն ստացվել է պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ) ներկայացուցիչների հետ խորհրդակցությունների միջոցով: Ինտենսիվ խորհրդակցություններ են անցկացվել նաև Մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության և բնապահպանության նախարարության ներկայացուցիչների հետ (տես՝ Բաժին 12.1՝ Առդիր I):

Բացի դաշտային ուսումնասիրություններից, իրականացվել է նաև հնարավոր էկոլոգիական և սոցիալական ազդեցությունների գնահատում՝ արբանյակային լուսանկարների մեկնաբանման միջոցով (2010թ.): Այնուամենայնիվ, նախնական հաշվետվությունում ուսումնասիրված գծի ծրագիծը գրեթե ամբողջությամբ տարբեր է փաստացի առաջարկված միջանցքից՝ ծրագծի մեծ մասում դեպի ավելի հարավ անցնելով:

Ազդեցությունների Ուսումնասիրության Ցանկը (տես՝ Բաժին 12.1՝ Առդիր I), որը ներառում է ամենախիստ ազդեցությունները, կազմվել և ներկայացվել է բելգիական Տրակտեբել Էինջինիրինգ ԳԴՖ Սուեզ ընկերությանը, որն իրականացնում է տեխնիկատնտեսական ուսումնասիրություն արդեն

պլանավորման ընթացքում հնարավոր ազդեցություններից խուսափելու համար:

Ելնելով այն փաստից, որ գոյություն չունի շրջակա միջավայրի ազդեցությունների լրջությունը գնահատելու համար համաձայնեցված մոտեցման վերաբերյալ միջազգային պաշտոնական համաձայնություն, Ֆիխտներ ընկերությունը կիրառում է սեփական գնահատման ընթացակարգը: Գնահատման այս թափանցիկ ընթացակարգը հիմնված է Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցությունների գնահատման (ՇՄՍԱԳ) իրականացման ոլորտում Ֆիխտներ ընկերության տասնհինգ տարվա մեծ փորձառության վրա, որն ապացուցել է, որ հանդիսանում է շրջակա միջավայրի վրա Ծրագրի ազդեցության գնահատման վստահելի մեթոդ: Այն ներառում է օրենսդրական պահանջների հիման վրա ազդեցությունների լրջության որոշումը, կանխատեսումը (օրինակ՝ տևողությունը, ուժգնությունը, ծանրությունը, կարգավիճակը, ազդեցության հետադարձելիությունը) և գնահատումը: Որտեղ հնարավոր է, ազդեցությունները քանակական են դարձվել: Կիրառվող գնահատման ընթացակարգը կենտրոնանում է որոշելու վրա, թե արդյոք Ծրագիրը կարող է լուրջ բացասական հետևանքներ ունենալ շրջակա միջավայրի համար՝ շինարարության և շահագործման իրականացման արդյունքում:

Թափանցիկ ներկայացման և գնահատման նպատակներով կիրառվում է գնահատման աղյուսակային մատրիցան: Բալային սանդղակի հիման վրա նկարագրվում է շրջակա միջավայրի վրա որոշակի ազդեցության լրջությունը՝ դրա դրական կամ բացասական ընդհանուր միտումների հետ միասին: Գնահատման կիրառվող սանդղակը հետևյալն է.

Ազդեցության չափը.	
■ ■ ■	= մեծ
■ ■	= միջին
■	= փոքր
○	= ազդեցություն չկա
+	= դրական տեղային
++	= դրական տարածաշրջանային

Գնահատումների համար կիրառվում են միջազգային, ինչպես օրինակ, Համաշխարհային Բանկի, Առողջապահության միջազգային կազմակերպության (ԱՄԿ), և այլն ստանդարտները (տես՝ Բաժին 4.4), որոնք լրացվում են Հայաստանի ազգային ստանդարտներով (տես՝ Բաժին 4.1): Այս ստանդարտներին համաձայն՝ ազդեցության գնահատումները իրականացվում են հետևյալ կերպ (**Ошибка! Источник ссылки не найден.**).

Աղյուսակ 3-1. Ազդեցությունների գնահատում միջազգային և ազգային ստանդարտների կիրառմամբ

Ազդեցության չափը	Պատճառը
Մեծ	Միջազգային և ազգային ստանդարտները գերազանցվել են
Միջին	Միջազգային և ազգային ստանդարտների շրջանակներում է, գրեթե բավարարում է միջազգային և ազգային ստանդարտները
Փոքր	Բավարարում է միջազգային և ազգային ստանդարտները

Ներկայացված մեթոդով կարելի է հստակեցնել, թե շրջակա միջավայրի որ ազդեցություններն են առավել լուրջ և, որ ազդեցությունների համար պետք է կիրառվեն մեղմացուցիչ միջոցառումներ՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը մեղմացնելու նպատակով:

4. Իրավական դաշտ

Այս Գլխում ներկայացված են ՀՀ բնապահպանական կառավարման կազմակերպչական և իրավական դաշտը՝ ՇՄԱԳ/ՇՄՍԱԳ իրականացման դրույթներից որոշակի հղումներով: Ծրագիրը համապատասխանելու է գործող տեղական/ազգային և բնապահպանական ու սոցիալական միջազգային օրենսդրությանը, կանոնակարգերին և ուղեցույցներին, ինչպես նաև պետական մարմինների և Համաշխարհային բանկի որոշակի ընթացակարգերին և քաղաքականությանը, և այլ հասանելի լավագույն փորձին: Սրանք պահանջում են, որ նախատեսված աշխատանքների ՇՄՍԱԳ-ի իրականացումը, ՇՄՍԱԳ-ի հաշվետվության վերանայումը և հաստատումը կատարվեն՝ հաշվի առնելով բնապահպանական և սոցիալական գերակա քաղաքականությունը և կանոնակարգերը:

4.1. Ազգային պահանջները

1991թ-ի անկախացումից հետո բնապահպանական օրենսդրությունը վերանայվեց, ստեղծելու համար ավելի համապարփակ պետական քաղաքականություն բնության պահպանության և ռեսուրսների կայուն օգտագործման համար: Այդ նպատակով մշակվեցին մի շարք օրենքներ, որոնք ներառում էին հողային, անտառային, հողային և ջրային օրենսգիրքերը, օրենքներ բնության հատուկ պահպանվող տարածքների, մթնոլորտային օդի, թափոնների մասին և այլն: Որոշ հիմնական օրենքներ և կանոնակարգեր, որոնք առնչվում են Ծրագրին, ներկայացված են ստորև բերված Աղյուսակ 4-1-ում:

Աղյուսակ 4-1: ՀՀ ազգային օրենքները, որոնք կիրառվում են բնապահպանական կարգավորման համար

Օրենք/Քաղաքականություն	Տարի	Հիմնական շրջանակները
ՀՀ Գերագույն Խորհրդի որոշումը՝ բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմունքներն ընդունելու մասին	1991	Սույն հիմունքները սահմանում են Հայաստանի Հանրապետության բնապահպանական քաղաքականությունը և նպատակ ունեն Հայաստանի տարածքում ապահովել բնական միջավայրի պահպանությունը և օգտագործման կարգավորումը, ինչպես նաև անհրաժեշտ իրավական հիմք ստեղծել ընդերքի, անտառային և ջրային հարաբերությունները, բուսական և կենդանական աշխարհի, մթնոլորտային օդի պահպանության և օգտագործման հարաբերությունները կարգավորող բնապահպանական օրենսդրության զարգացման համար:
«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք	2006	Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ սույն օրենքն ընդունվել է 2006թ.-ի նոյեմբերի 26-ին: Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային,

Օրենք/Քաղաքականություն	Տարի	Հիմնական շրջանակները
		<p>գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեքներ կայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության եւ օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:</p> <p>Համաձայն այս օրենքի, ազգային պարկը բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային եւ (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք է, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների գույքորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային եւ տնտեսական նպատակներով, եւ որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:</p> <p>Օրենքը նաև սահմանում է ազգային պարկի հետևյալ գործող տարածքները՝ արգելոցային գոտի, արգելավայրային գոտի, ռեկրեացիոն և տնտեսական գոտի (նշանակությունը՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն):</p>
ՀՀ «Հողային օրենսգիրք»	2001	<p>Սույն օրենսգիրքը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման եւ բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը՝ ելնելով հողի կարևոր բնապահպանական, տնտեսական ու սոցիալական նշանակությունից, որի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում հողն օգտագործվում է պահպանվում է որպես ժողովրդի կենսագործունեության պայման: Հողի տիրապետումը, օգտագործումը եւ տնօրինումը չպետք է վնաս պատճառի շրջակա բնական միջավայրին, երկրի պաշտպանունակությանն ու անվտանգությանը, չպետք է խախտի քաղաքացիների եւ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը:</p>
ՀՀ «Ջրային օերսգիրք»	2002	<p>Այս օրենսդրական ակտը մեծամասամբ կարգավորում է ջրի օգտագործման վերաբերյալ հարաբերությունները: Օրենսգրքի 3-րդ Հոդվածով սահմանվում է, որ ՀՀ կառավարությունը համապատասխան լիազոր մարմինների միջոցով իրականացնի Օրենսգրքի նպատակները՝ ջրերի արդյունավետ օգտագործմանն ապահովումը, ջրերի վրա վնասակար ներգործության կանխումը և վերացումը, բնակչության կարիքների համար ջրային օգտագործումը, ապահելով յուրաքանչյուրի անվտանգությունը:</p>

Օրենք/Քաղաքականություն	Տարի	Հիմնական շրջանակները
		<p>Ջրային ռեսուրսների կառավարման հիմնական սկզբունքներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - ներկա և ապագա սերունդների հիմնական կենսական կարիքների բավարարումը - ազգային ջրային պաշարի ծավալների պահպանումը և ավելացումը - ջրային և հարակից էկոհամակարգերի և դրանց կենսաբանական բազմազանության պաշտպանությունը - հողի, օդի, ջրի և կենսաբանական բազմազանության ամբողջական և կապակցված հարաբերությունների ճանաչումը <p>ջրօգտագործման թույլտվությունների միջոցով ջրօգտագործման կարգավորումը</p>
<p>„Մթնոլորտային օդի պահպանության մասին“ ՀՀ օրենք</p>	<p>1994</p>	<p>Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է: Այս տիրույթում հիմնական օրենսդրական խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - մթնոլորտային օդի մաքրության և որակի բարելավման ապահովումը - ֆիզիկական, քիմիական, կենսաբանական և այլ վնասակար ազդեցությունների նվազեցումն ու կանխումը - այդ բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումը - այդ բնագավառում օրինականության ամրապնդումը:
<p>«Թափոնների մասին» ՀՀ օրենք</p>	<p>2004</p>	<p>Սույն օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման եւ դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաեւ մարդու առողջության եւ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական եւ տնտեսական հիմքերը:</p>
<p>ՀՀ «Անտառային օրենսգիրք»</p>	<p>2005</p>	<p>Սույն օրենսգիրքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների եւ անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման եւ արդյունավետ օգտագործման, ինչպես նաեւ անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության եւ անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:</p>
<p>Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին ՀՀ օրենք</p>	<p>1998</p>	<p>Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական և բնօգտագործման վճարների հասկացությունները, վճարողների շրջանակը, վճարների տեսակները, հաշվարկման և վճարման կարգը, սույն օրենքի խախտման համար պատասխանատվությունը, կարգավորում է</p>

Օրենք/Քաղաքականություն	Տարի	Հիմնական շրջանակները
		<p>վճարների հետ կապված այլ հարաբերություններ: Բնապահպանական վճարի տեսակներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու համար. - արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու համար. - շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար: <p>Բնօգտագործման վճարի տեսակներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - ջրօգտագործման համար - արդյունահանված պաշարների համար - կենսապաշարների օգտագործման համար
«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք	1999	<p>Մույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման եւ վերարտադրության բնագավառում:</p>
«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք	1999	<p>Մույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության եւ օգտագործման պետական քաղաքականությունը:</p> <p>Մույն օրենքի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> - զենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը - կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը - կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությունը - կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը - կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը <p>Տարբեր կազմակերպությունների, ներառյալ՝ կառավարության, իշխանության, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունները դիտարկվում են այդ օրենքով</p>
«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք	1998	<p>Մույն օրենքի նպատակներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերի սահմանումը. - այդ գործունեության ընթացքում ծագող հարաբերությունների կարգավորումը <p>Մույն օրենքի հիմնական խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> - հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում պետական քաղաքականության հիմնադրույթների սահմանումը

Օրենք/Քաղաքականություն	Տարի	Հիմնական շրջանակները
		<ul style="list-style-type: none"> - հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման եւ օգտագործման հարցերի կանոնակարգման սկզբունքների սահմանումը - հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց իրավասությունների սահմանումը - հուշարձանների՝ որպես անշարժ գույքի հատուկ տեսակի նկատմամբ սեփականատիրության, տնօրինման եւ օգտագործման առանձնահատկությունների սահմանումը
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք	21.06.2014	Մույն օրենքը կարգավորում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության եւ հայեցակարգի ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական եւ կազմակերպական հիմունքները:

Հայաստանում շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող ցանկացած գործունեության իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ՇՄԱԳ-ի փորձաքննության դրական եզրակացություն:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում պետք է կատարվի նախագծի նախնական փուլում: **2014թ.-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը** ներառում է դրույթներ շրջակա միջավայրի ազդեցության գնահատման, դրա իրականացման և ժամկետների վերաբերյալ, այդպիսով հանդիսանալով ՇՄԱԳ-ի իրականացման համար ամենակարևոր օրենքը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում նշվում է, որ «100կՎ և դրանից բարձր լարմամբ էլեկտրահաղորդման օղային գծեր»-ի համար պահանջվում է ՇՄԱԳ-ի ընթացակարգ: Քանի որ օրենքը վերանայվել է 2014թ-ին, ապա Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի համար կիրառելի չէ անցած տարիների փորձառությունը:

Համաձայն ՀԲ-ի ԳՔ 4.01, Ծրագիրը պատկանում է բնապահպանական Բ կատեգորիային, և համաձայն ՀՀ օրենսդրության, պահանջվում է նաև ՇՄԱԳ: Այդ իսկ պատճառով ՇՄԱԳ-ն իրականացվեց, չնայած այն փաստին, որ ազգային լիազոր մարմինները դեռ պետք է ուսումնասիրեն Ծրագրի նախագծային փաստաթղթերը և պաշտոնական որոշում կայացնեն այս Ծրագրի ՇՄԱԳ-ի ընթացակարգի վերաբերյալ:

Բնապահպանական թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ քայլերը բերված են ստորև.

- 1) Նախնական փուլ. Այս փուլի ընթացքում նախագծի վերաբերյալ նախնական տեղեկությունը ներկայացվում է ազդակիր համայնք(ներ)ի ղեկավար(ներ)ին, և Ծրագիրը իրականացնողի ու համայնքների ղեկավար(ներ)ի կողմից կազմակերպվում են հանրային լուսմներ: Նախագծի վերաբերյալ հիմնական տեղեկատվությունը և ծանուցումը պետք է տեղադրվեն Ծրագիրը իրականացնողի և ազդակիր համայնքների կայքէջերում՝ հանրային լուսմներից 7 օր առաջ (համաձայն նախագծի համար հանրային լուսմների կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին Կառավարության որոշման, ծանուցումը պետք է հրապարակվի կայքում ոչ պակաս, քան 7 օր առաջ, իսկ նախագծի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ոչ պակաս, քան 3 օր առաջ: Նախագծման մասին Կառավարության այս որոշումը դեռ չի մտել ուժի մեջ:)
- 2) Դրանից հետո դիմումը ներկայացվում է Բնապահպանության նախարարություն (այլ ոչ թե անմիջապես Բնապահպանական փորձաքննության ՊՈԱԿ): Այս հարցումը ներառում է նախագծի ընդհանուր նկարագրությունը, մեղմացման/փոխհատուցման միջոցառումները, և Ծրագիրը իրականացնողի և համայնքի կողմից կազմակերպված առաջին հանրային լուսմների արդյունքները:
- 3) 30 օրվա ընթացքում Բնապահպանության նախարարությունը. 1) կայացնում է որոշում բնապահպանական պետական փորձաքննության անհրաժեշտության մասին, 2) սահմանում է նախագծի ազդեցության կատեգորիան (օր.՝ օդային զծերը 220 կՎ = Կատ.Ա, 110 կՎ = Կատ.Բ), 3) սահմանում է ՇՄԱԳ-ի հաշվետվության մշակման համար անհրաժեշտ գործողությունների ցանկը, աշխատանքների ծավալը և խորությունը (տալիս է ՇՄԱԳ-ի համար տեխնիկական առաջադրանքը): Այս ժամանակահատվածում Ծրագիրը իրականացնողի, ազդակիր համայնք(ներ)ի (քաղաքապետարան(ներ)ի) և Բնապահպանության նախարարության կողմից պետք է կազմակերպվեն երկրորդ հանրային լուսմները: Այստեղ պետք է կիրառվեն միևնույն կանոնները, որոնք կիրառվել էին առաջին հանրային լուսմների ժամանակ:
- 4) Ծրագիրը իրականացնողը (ԲԷՑ) պատրաստում է նախագծի ՇՄԱԳ-ի հաշվետվությունը և ներկայացնում է այն Բնապահպանության նախարարություն:
- 5) Հաջորդ փուլը բնապահպանության փորձաքննության գլխավոր փուլն է: Այս փուլում, որը Բ կատեգորիայի նախագծերի համար տևում է 40 օր, իսկ Ա կատեգորիայի նախագծերի համար 60 օր, բնապահպանության նախարարությունը բոլոր ներգրավված և մասնագիտացված կողմերին (օր.՝ իր գերատեսչություններին, Գիտությունների ակադեմիայի համապատասխան ստորաբաժանումներին, Առողջապահության նախարարությանը, Արտակարգ իրավիճակների նախարարությանը,

Ջրային ռեսուրսների պետական կոմիտեին և այլն), ներկայացնում է նախագծի ՇՄԱԳ հաշվետվությունը՝ որպես ներքին ընթացակարգ: Ծրագիրն իրականացնողը այս ընթացակարգում չի ներգրավվում: Այս փուլում Ծրագիրը իրականացնողը, համայնք(ներ)ի ղեկավար(ներ)ի և նախարարության հետ միասին կազմակերպում է երրորդ հանրային լուսմները, որի ընթացքում հանրությանն է ներկայացվում նախագծի ամբողջ ՇՄԱԳ-ի հաշվետվությունը: Ծրագրի համար Խորհրդատու ճարտարագետի կողմից առաջարկվում է երկու շաբաթ որպես հրապարակման ժամանակահատված: Նախարարությունը ներկայացնում է ՇՄԱԳ-ի հաշվետվության վերանայման ընթացքում ներգրավված բոլոր կողմերի դիտողություններն ու առաջարկությունները, ինչպես նաև 3-րդ հանրային լուսմների ժամանակ ծագած գլխավոր դիտողություններն ու առաջարկությունները: Ծրագիրը իրականացնողը (ԲԷՑ) կամ կատարում է լրամշակում, կամ էլ հրաժարվելու դեպքում բացատրում է պատճառը:

- 6) Վերջում, նախարարությունը կազմակերպում է վերջնական հանրային լուսմները, որի ընթացքում ներկայացնում է բոլոր կատարված դիտողություններն ու առաջարկությունները, դրանց արդյունքները (առաջարկված փոփոխությունները ընդունելու կամ մերժելու դեպքում), և ներկայացնում է ՇՄԱԳ-ի հաշվետվության հաստատման կամ մերժման մասին նախագիծ:
- 7) Դրա հիման վրա, նախարարությունը կայացնում է նախարարի կողմից ստորագրված գործունեության իրականացման հաստատման կամ մերժման վերաբերյալ վերջնական որոշումը: 5-7 քայլերը ներառված են ամբողջ ընթացքում (40 օր Բ կատեգորիայի համար և 60 օր Ա կատեգորիայի համար).

4.2. Միջազգային համաձայնագրեր

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ կապված շրջակա միջավայրի պահպանության և կենսաբազմազանության հետ:

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթոշունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)

- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիա (Ռիո-դե-Շանեյրո)

Հատուկ ուշադրություն դարձնելով վտանգավոր նյութերի գործածմանը՝

- «Կայուն օրգանական ադոտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (վավերացվել է ՀՀ կառավարության կողմից 2003թ.-ին)
- ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել.)

Բացի այդ, Հայաստանը ստորագրել է նաև «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումները ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիան:

4.3. Միջազգային պահանջներ

Քանի որ Համաշխարհային Բանկի ուղեցույցների կիրառումը պահանջվում է համաձայնագրով, ստորև ներկայացված են ՀԲ-ի համապատասխան ուղեցույցները: Ծրագիրը հատուկ ուշադրության է արժանացնում Համաշխարհային բանկի հետևյալ ուղեցույցերը.

- ԳՔ 4.01 - «Բնապահպանական գնահատում»
- ԳՔ 4.04 - «Բնական միջավայր»
- ԳՔ 4.11 - «Մշակութային ֆիզիկական ռեսուրսներ»
- ԳՔ 4.12 - «Հարկադիր վերաբնակեցում»

Համաշխարհային Բանկ/ՄՖԿ ԱԱՇՄ ընդհանուր ուղեցույցներ, մասնավորապես, էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համար 2007թ-ի ընդհանուր ուղեցույցներ, որոնք կիրառելի են:

Էլեկտրական և մագնիսական դաշտերի ուղեցույցներ

ԱԻՃՊՄՀ ուղեցույցեր՝ ժամանակի մեջ փոփոխվող էլեկտրական, մագնիսական և էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցությանը ենթարկվելու սահմանափակումների վերաբերյալ (մինչև 300 Գիգահերց) (առանց իոնացման ճառագայթումից պաշտպանության Միջազգային հանձնաժողով) և ԵՄ Դիրեկտիվ 2004/40/EC “ֆիզիկական գործոններից (էլեկտրամագնիսական դաշտ) առաջացող հնարավոր վտանգի ենթարկվող աշխատողների անվտանգության ու առողջության պահպանության բարելավման նվազագույն պահանջների մասին” (Տես Բաժին 2.3, Առդիր III), ինչպես նաև **Թափոնների կառավարման վերաբերյալ ուղեցույցները** (Եվրոպական Աջակցություն 2010. Աղբավայրերի շահագործման ուղեցույց-ձեռնարկ), և **Էլեկտրահաղորդման**

օդային գծերի բնապահպանական ուղեցույցները (CIGRE 1998թ. Էլեկտրահաղորդման բարձրավոլտ օդային գծեր՝ Բնապահպանական առումով մտահոգություններ, ընթացակարգեր, ազդեցություններ և մեղմացում) հաշվի են առնվել որպես լավագույն փորձ:

5. Կազմակերպական շրջանակ

ԲԷՑ-ը՝ ԷՄՀԾ-ն իրականացնող գործակալությունն է և պատասխանատու է Ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր գործողությունների, ներառյալ բնապահպանական և սոցիալական ազգային օրենսդրության պահանջներին և Համաշխարհային Բանկի երաշխիքների ապահովման գործառնական քաղաքականություններին համապատասխանությունը ապահովելու համար: Վերջերս աշխատանքի ընդունված ԲԷՑ-ի սոցիալական մասնագետի օգնությամբ ԲԷՑ-ի կողմից կարող են կատարվել ՎՔՇ-ի առաջարկությունների թարմացման և (համառոտ) Վերաբնակեցման Գործողության Պլանի (ՎԳՊ) կազմման (այսինքն մարդահամար, կորուստների մանրամասն գույքագրում, սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն, հանրային քննարկումներ և հրապարակում) առաջադրանքը ՎԳՊ-ի իրականացման համար որոշ լրացուցիչ խորհրդատվական աջակցությամբ: ԲԷՑ-ն աշխատանքի կընդունի նաև շրջակա միջավայրի մասնագետ, և վերջինս սոցիալական մասնագետի հետ միասին կիրականացնեն ՇՄՍԿՊ-ի իրականացման ամբողջական վերահսկումը:

Հայաստանի Հանրապետության Կառավարության ինստիտուցիոնալ կառուցվածքը հիմնված է բազմազերատեսչական մոդելի վրա: Համակարգի առաջ ծառայած ներկայիս հիմնական խնդիրները՝ հաստատությունների գործառույթների վերածածկն է և լիազորությունների ոչ բավարար հստակությունը, ինչպես նաև ներգրավված հաստատությունների միջև համակարգման, խորհրդակցման և տեղեկատվության փոխանակման անբավարարությունը: Ծրագրի բնապահպանական և սոցիալական խնդիրներում, այս կամ այն չափով, ներգրավված են մի քանի հանրային կառույցներ: Այդ կազմակերպությունների դերը և պարտականությունները հետևյալն են.

ՀՀ բնապահպանության նախարարություն

ՀՀ բնապահպանության նախարարությունը, որը ներկայացնում են նախարարը և նախարարության աշխատակազմը, մշակում և իրականացնում է ՀՀ քաղաքականությունը բնապահպանական, ինչպես նաև բնական պաշարների կայուն օգտագործման ոլորտներում: Նախարարության կազմում ընդգրկված են նաև Պետական ոչ առևտրային կազմակերպություններ և ինստիտուտներ:

Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի փոխարինման առնչությամբ նախարարության հիմնական գործառույթները հետևյալն են.

- Շրջակա միջավայրի պետական փորձաքննության անհրաժեշտության վերաբերյալ որոշման կայացում
- Ծրագրի ազդեցության կատեգորիայի սահմանում
- ՇՄՍԱԳ-ի Տեխնիկական Առաջադրանքի (SU) ապահովում
- Հանրային լուսման կազմակերպում

- Ծրագրի վերջնական հաստատում կամ մերժում, ինչպես նաև բնապահպանական թույլտվության հարցեր՝ Ծրագրի հաստատման դեպքում

Մշակույթի նախարարություն

Մշակույթի նախարարությունը՝ Հանրապետական գործադիր մարմին է, որը մշակում է մշակույթի ոլորտում Հայաստանի Կառավարության քաղաքականությունը: Նախարարության նպատակը մշակութային ժառանգության պահպանումը և համալրումը, ինչպես նաև ժամանակակից արվեստի խրախուսումը և զարգացումն է:

Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի առնչությամբ ՀՀ Մշակույթի նախարարության հիմնական գործառույթները հետևյալն են.

- ԲԷՑ-ի կողմից նախատեսվող նոր հենարանների տեղանքների (օրինակ՝ շրջանցների) հաստատում կամ մերժում
- Պատահական գտածոների հետ վարվելու վերաբերյալ որոշումների կայացումը
- Պատահական գտածոներից հետո՝ շինարարական աշխատանքները վերսկսելու թույլտվության տրամադրում

Հասարակական կազմակերպություններ

ՀԿ-ները մասնակցում են բնապահպանական և սոցիալական գործընթացներում՝ իրականացնելով տեղեկատվության հավաքում և տարածում, հասարակության տեղեկացում և ուսուցում (օր. Վայրի Բնություն, Օրհուս, Հայանտառ): Այս տեսակետից՝ նպատակահարմար է ՀԿ-ների ներգրավումը նաև սոցիալական խնդիրների, վերաբնակեցման և սոցիալական ծրագրերի քննարկումներում: Օրհուս կենտրոնը կօգնի գտնել լրացուցիչ համապատասխան ՀԿ-ների, որոնք կհրավիրվեն հանրային լսումներին մասնակցելու համար:

6. Ծրագծի այլընտրանքների վերլուծություն

6.1. Այլընտրանքներ գծի ծրագծի համար

ԲԷՑ-ի կողմից դիտարկվել են Ծրագրի չորս տարբերակներ՝ ելնելով շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության և հարկադիր վերաբնակեցման ծավալներից, և հիմք ընդունելով հետևյալ նպատակները.

- Լանդշաֆտի վրա ազդեցության և կենսաբազմազանության, ինչպես նաև Պահպանվող տարածքների վրա բացասական ազդեցության նվազեցում,
- Մշակութային ժառանգության վայրերից և էկոլոգիական առումով հետաքրքրություն ներկայացնող տարածքներից խուսափում,
- Քաղաքներից և զարգացող տարածքներից խուսափում հարկադիր վերաբնակեցումը կամ հողի ձեռքբերման անհրաժեշտությունը նվազեցնելու նպատակով:

Այլընտրանք 1. Այս առաջարկվող նոր Ծրագիծը կլինի «Ալավերդի-2» ենթակայանից գոյություն ունեցող 110կՎ միջանցքի հյուսիսային մասի 50մ-ի սահմաններում, կհատի Հաղպատի տարածքում գոյություն ունեցող միջանցքը և կանցնի դեպի «Նոյեմբերյան» ենթակայանի գոյություն ունեցող 110կՎ միջանցքի հարավային մասի 50մ-ի սահմանները: **Այս ծրագիծը ընտրվել է որպես գերադասելի տարբերակ**, քանի որ տնտեսապես կենսունակ է և ունի շրջակա միջավայրի և սոցիալական նվազագույն ազդեցություններ: Մինչև ծրագիծը հասնի Ախթալայի տարածք, հյուսիսից հարավ գոյություն ունեցող միջանցքի հատումը կարևոր է գերբնակեցվածության պատճառով, որն առաջանում է գոյություն ունեցող 35կՎ, 110կՎ, 220կՎ և որոշ 6կՎ ՕԳ-ի հետևանքով: Ընդհանուր քանակությամբ 80%-ով առկա են մոտեցման ճանապարհներ/ուղիներ, որոնց մասին տեղյակ է տեխնիկական սպասարկում անցկացնող անձնակազմը:

Այլընտրանք 2. Այս նոր ծրագիծը լինելու է «Ալավերդի-2» ենթակայանից գոյություն ունեցող 110կՎ և 220կՎ ՕԳ-ի միջև, հատելու է Ախթալայի տարածքի միջանցքը, հետո անցնելու է գոյություն ունեցող միջանցքի դեպի հարավային մասի 50մ-ի սահմանը և հասնելու է մինչև «Նոյեմբերյան» ենթակայան: Այս ծրագծի ընտրությունը բացասական կերպով ազդելու է նախագծի, շինարարության և, գործնականորեն, տեխնիկական սպասարկման արժեքի վրա: Այս այլընտրանքով գոյություն ունեցող միջանցքի հատումը նախատեսվում է Ախթալայի տարածքում, և այդ նպատակով կան որոշ ոչ ստանդարտ կետեր, որոնք պետք է հաշվի առնվեն նախագծում: Ծրագծի մի մասի համար այս այլընտրանքը կլինի կից գոյություն ունեցող 110կՎ ՕԳ-ը, որը խնդիր չէր ստեղծի շինարարության համար, բայց մինչև նոր գիծը շահագործման մեջ դնելն անհրաժեշտ կլինի կատարել գոյություն ունեցող 110կՎ հենարանի մետաղական կառուցվածքների մեծ քանակությամբ ապամոնտաժման աշխատանքներ: Հետևաբար, այս այլընտրանքի համար անհրաժեշտ կլինի ընդհանուր էլեկտրաէներգիայի անջատում: Շրջակա միջավայրի և սոցիալական

ազդեցություններն այս այլընտրանքի համար մոտավորապես նույնն են, ինչ որ Այլընտրանք 1-ի համար: Այսպիսով Այլընտրանք 2-ը գերադասելի չէ ոչ բնապահպանական/սոցիալական պատճառներով:

Այլընտրանք 3. Այս նոր ծրագիծը կլինի «Ալավերդի-2» ենթակայանից դեպի հյուսիս տանող ուղղությամբ, որը կհատի M6 ճանապարհը և Դեբեդ գետը և կշարունակվի դեպի Ախթալայի տարածք: Հետո ծրագիծը կրկին անգամ կհատի Դեբեդ գետը, M6 ճանապարհը և գոյություն ունեցող 110կՎ միջանցքը: Դրանից հետո այն կշարունակվի առկա միջանցքից դեպի հարավային մասի 50մ-ի սահմանը և կհասնի մինչև «Նոյեմբերյան» ենթակայան: Այս ծրագծի այլընտրանքը մանրամասն դիտարկվել է, որովհետև այն ամբողջովին նոր ծրագիծ է «Ալավերդի-2» ենթակայանից մինչև Ախթալայի տարածք: Այս նոր ծրագծի հետ կապված կան որոշ կարևոր խնդիրներ: Ծրագիծը մոտ 4կմ-ով ավելի երկար է, քան Այլընտրանք 1-ը և 2-ը, և կպահանջվեն լրացուցիչ ծառահատման, ինչպես նաև մոտեցման ճանապարհների համար լրացուցիչ շինարարական աշխատանքներ: Այլընտրանք 2-ի նման, նախագծում նախատեսվում են ոչ ստանդարտ կետեր, քանի որ նոր ծրագիծը գտնվում է լեռնային տարածքում M6 ճանապարհի և Դեբեդ գետի հյուսիսային հատվածում և Ախթալայի տարածքում: Վերջինս անխուսափելի է երկու տարբերակների՝ 2 և 3 համար, որովհետև այն գերբնակեցված տարածք է 35կՎ և 6կՎ ՕԳ-ով, և մոտ է M6 ճանապարհի հարավային կողմին ու մի քանի վայրերի, որոնք ապահովում են գոյություն ունեցող միջանցքի բավարար հատումը:

Այլընտրանք 4. (Ծրագիր չի իրականացվում) 110կՎ Լավվար և Նոյեմբերյան ՕԳ-ի փոխարինում չի իրականացվում: Այս տարբերակը չի հանգեցնի անտառահատման և վերաբնակեցման որևէ գործողության, սակայն ընդունելի չէ, քանի որ ՕԳ-երը հին (նոտ 50 տարվա) և զգալի քայքայված են: Սա վտանգի է ենթարկում այս տարածաշրջանում էլեկտրամատակարարման անվտանգությունը և հուսալիությունը:


6.2. Առաջարկվող շրջանցումները

Հիմնվելով Այլընտրանք 1-ում նկարագրված գծի ծրագծի վրա՝ առաջարկվում են որոշ շրջանցումներ ֆիզիկական վերաբնակեցումից խուսափելու համար: Այս շրջանցումները կարող են վերանայվել տեխնիկական տեսանկյունից ավելի լավ տարբերակներ գտնելու նպատակով.

- Հաղպատ գյուղում երեք տուն կա 110կՎ ՕԳ-երի պլանավորված միջանցքում (տես Նկար 6.2-1). Սրանից կարելի է խուսափել՝ շրջանցելով առաջարկված միջանցքը հյուսիս-արևմտյան կողմից: (տեսՔարտեզ 6.2-1).



Նկար 6.2-1: Հաղպատ գյուղի ազդակիր տները, որոնք գտնվում է պլանավորված միջանցքում




Քարտեզ 6.2-1: Հաղպատ գյուղի ազդակիր տները, որոնք գտնվում են պլանավորված գծի միջանցքում (կանաչ) և առաջարկվող շրջանցումը (կարմիր)


- Հաղպատ գյուղի հյուսիսում առաջարկված գծի միջանցքը հատում է գործող 35/110/220կՎ ՕԳ-երը, որից հետո անցնում է անտառապատ բլրի վրայով: Առաջարկվում է, որ գծի միջանցքը ավելի երկար ձգվի հյուսիսային կողմի արոտավայրերով և հատվի գործող գծերի հետ դեպի արևելք, անտառի հետ հատվելուց խուսափելու համար (տես Քարտեզ 6.2-2): Շինարարական աշխատանքների և հին գիծը ապամոնտաժելու ընթացքում մշակութային վայրը (խաչքար, տես նկար Նկար 9-6), որը գտնվում է գործող 110կՎ գծի միջանցքում, որևէ կերպ չպետք է վնասվի:
- Նեղոց գյուղում մոտավորապես 8 տների վրայով կանցնի գիծը պլանավորված գծի միջանցքում (տես Նկար 6.2-2): Այլ գծի ծրագիծ է առաջարկվում ցանկացած ֆիզիկական վերաբնակեցումից խուսափելու համար: Մեկ տարբերակն այն է, որ միջանցքը պետք է տեղափոխել դեպի գործող 220կՎ գծի միջանցքը, այնքան մոտ, ինչքան տեխնիկապես հնարավոր է (որտեղ չկան տներ), մյուս տարբերակն էլ միջանցքը դեպի ավելի հարավ տեղափոխելն է (տես Քարտեզ 6.2-3):



Նկար 6.2-2: Նեղոց գյուղի որոշ ազդակիր տներ, որոնք գտնվում են պլանավորված գծի միջանցքում



Քարտեզ 6.2-2: Պլանավորված միջանցքը (կանաչ), որը հատում է գործող գիծը (կապույտ, նարնջագույն, դեղին) և անտառապատ տարածքը (ԱՀ12), մշակութային վայրը և առաջարկված շրջանցումը (կարմիր)



Քարտեզ 6.2-3: Պլանավորված միջանցքը (կանաչ) Նեղոց գյուղում տների վրայով թռիչքը և գործող 220կՎ ՕԳ-ն (դեղին)

- Փոքր Այրումի հարավում, Դեբեդ գետի հովիտը հասելուց առաջ, ազարակատուն (տես Նկար 6.2-3), մեկ այլ շենք և բերքատու այգի կա պլանավորված միջանցքում: Ֆիզիկական վերաբնակեցումից խուսափելու համար առաջարկվում է կատարել շրջանցում արևմտյան կողմից դեպի մոտակա 220կՎ ՕԳ-ը (տես Նկար 6.2-4):




Նկար 6.2-3: Ազարակատուն պլանավորված գծի միջանցքում գտնվող ֆերմային տուն


- Ծրագրի այս փուլում առկա չէ ոչ մի նախագիծ դեպի «Նոյեմբերյան» ենթակայանի գծի մուտքն ապահովելու համար: Այգի և երկու տներ (տես Նկար 6.2-4) են տեղակայված հավանական գծի միջանցքում (տես ՔարտեզՔարտեզ 6.2-5): Գծի ծրագիծը պետք է այնպես ընտրվի, որպեսզի խուսափենք ֆիզիկական վերաբնակեցումից:



Նկար 6.2-4: Նոյեմբերյան ենթակայանի մոտ հնարավոր միջանցքում գտնվող տունը



Քարտեզ 6.2-4: Ազդակիր տները պլանավորված միջանցքում (կանաչ), գործող 220կՎ ՕԳ-ը (դեղին) և առաջարկված շրջանցումը (կարմիր)



Քարտեզ 6.2-5: Պլանավորված միջանցքը (կանաչ), որն ապահովում է գծի մուտքը դեպի «Նոյեմբերյան» ենթակայան (դեռ չի որոշվել), այգու հետ հավանական հատում և հնարավոր ազդակիր տներ

7. Ելքային բնապահպանական պայմանները

Ելքային բնապահպանական և սոցիալական պայմանները նկարագրվում են ըստ առաջարկվող միջանցքների և դրանց շրջակայքի տարբեր բնական և սոցիալական ընկալիչների վրա ազդեցության մասին հավաքված տեղեկատվության: Հստակեցնելով բնապահպանական պայմանները՝ կարելի է մշակել ծրագրի իրականացման ազդեցության մեղմմանը ուղղված միջոցառումները: Ելքային բնապահպանական պայմանները ճշտվել են դաշտային հետազոտությունների և առկա տեղեկատվության ուսումնասիրության միջոցով 2014թ. սեպտեմբեր – հոկտեմբեր ամիսների ընթացքում:

7.1. Շրջակա միջավայր և բնապահպանություն

7.1.1. Հետազոտության տարածք

Ծրագրում դիտարկվող ՕԳ-ը հիմնականում տեղակայված է Լոռու մարզում (կենտրոնը Վանաձոր քաղաքը), որը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսում և տարածքի մեծությամբ երրորդ ամենամեծ մարզն է (զբաղեցնում է 3799 քառ.կմ՝ ՀՀ տարածքի 13 %-ը) ու բնակչության թվաքանակով (234,700) երկրորդն է հանրապետությունում: Շրջապատված է լեռներով, Փամբակ, Ձորագետ և Դեբեդ գետերի հովիտներով:

Էլեկտրահաղորդման գծի քիչ հատվածն է անցնում Տավուշի մարզով (կենտրոնը Իջևան քաղաքը), որը գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելյան հատվածում, որտեղ Հայաստանը սահմանամերձ է Վրաստանի և Ադրբեջանի հետ: Տավուշի մարզի բնակչությունը կազմում է 128.300 մարդ և տարածքը 2,704 կմ² է: Մարզում ամենամեծ գետը Աղստևն է, որի վտակներն են Գետիկ, Ոսկեպար և Մառնաջուր գետերը:

Առաջարկված 110կՎ Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երը, որոնք ունեն մոտավորապես 25 կմ երկարություն, սկսվում են «Ալավերդի-2» ենթակայանից (ծովի մակարդակից 964մ բարձրության վրա) և ավարտվում է Հաղթանակ գյուղում գտնվող «Նոյեմբերյան» ենթակայանում (ծովի մակարդակից 497մ բարձրության վրա), (տես բաժին **Ошибка! Источник ссылки не найден.**, Քարտեզ 0-1):

«Ալավերդի-2» ենթակայանից սկսվող 110կՎ ՕԳ-երը հատելու են հովիտը մոտ 100-150մ խորությամբ և մոտ 500մ լայնությամբ, ապա անցնելու են Ակներ գյուղի հյուսիսով և մինչև Հաղպատ գյուղ հասնելը հատելու են նման խորություն և լայնություն ունեցող մեկ այլ հովիտ: Այդ գյուղում երեք տներ ազդեցության են ենթարկվում առաջարկվող գծի միջանցքում, այսպիսով, առաջարկվում է կատարել շրջանցում (տես Հատված 6.2-ը): Հաղպատի հյուսիս-արևելքում առաջարկվող գծի միջանցքը հատում է գոյություն ունեցող 35կՎ, 110կՎ և 220կՎ ՕԳ-ները և անտառապատ տարածքը: Այստեղ առաջարկվում է կատարել շրջանցում անտառի հետ հատվելուց խուսափելու համար: Հաղպատ և Նեղոց գյուղերի միջև գծի միջանցքը հատում է բլրային տարածքներ, ինչպես նաև որոշ հովիտներ: ԱՀ 16 և ԱՀ 18 միջև պլանավորվում է T-աձև ճյուղավորմամբ միացություն «Ախթալա» քարշային ենթակայանի հետ: Նեղոց գյուղում գծի ծրագրի վրա է համապատասխանեցվի, քանի որ մոտ 8 տների վրայով անցում կկատարվի, եթե հաստատվի առաջարկվող միջանցքը: Նեղոցի և Դեբեդի հովիտի հատման միջև անտառապատ լեռնային տարածքը կհատվի՝ կրկին անգամ անցնելով փոքր հովիտների վրայով: Մինչև Փոքր Այրումի հարավում Դեբեդ գետի հովիտը հատելը, գծի միջանցքը կանցնի մրգատու ծառերի այգիներով և երկու գյուղատնտեսական շինություններով: Այստեղ նույնպես շրջանցման խնդիրը պետք է հաշվի առնել (տես բաժին 6.2):

Դեբեդ գետից դեպի հյուսիս գծի միջանցքը T-աձև ճյուղավորմամբ հատում է գյուղատնտեսական հող ԱՀ 26-ին մոտ գործող գծին միանալու համար, որը տանում է դեպի «Մատուռ» լեռնահանքային կայանը, ապա հատում է Մեծ

Այրումից արևելք մոտ 350մ լայնությամբ ուղղաձիգ հովիտը: Հաղթանակ գյուղի հարավ-արևմտյան հատվածում Դեբեդ գետի հովտի վրայով նորից թռիչք է կատարում: Մինչև «Նոյեմբերյան» ենթակայան մտնելը կանցնի մրգատու ծառերի այգիներով, և որոշ շինություններ կարող են ազդեցության ենթարկվել դեպի ենթակայան գծի դեռևս ոչ հստակ մուտք ունենալու հետևանքով (տես ՔարտեզՔարտեզ 0-1):


Առաջարկված շրջանցումը պետք է քննարկվի, տեխնիկական տեսանկյունից ավելի լավ տարբերակ գտնելու համար:

7.1.2. Տեղագրությունը

Ուսումնասիրվող ամբողջ տարածքը գտնվում է ծովի մակարդակից 500մ-ից մինչև 1,490մ բարձրության վրա: Լեռնագագաթները հասնում են 1,264մ-ից մինչև 1,911մ-ի սահմաններում: Ուսումնասիրվող տարածքի հիմնական լեռներն են՝ Սուրբիս (1,857մ), Արջիզուխ (1,911մ), Սանգլար (1,436մ), Սամերկ (1,264), Քարակատար (1,269մ):

Լոռու մարզը, օրոգրաֆիկ տեսակետից, տեղակայված է Փամբակ գետի ձախ ափին գտնվող Բազում լեռնաշղթայի հարավային լանջին: Բազում լեռնաշղթան դասվում է Վիրահայոց-Արցախյան լեռնային համակարգի Փոքր Կովկասի բազմաթիվ ներքին լեռնաշղթաների թվին (սփռվող, աստիճանաբար մասնատվող գոտի): Այն ունի 60 կմ երկարություն և ձգվում է Սեպասար սարավանդից մինչև Փամբակ գետի Գայլաձոր կիրճը: Լեռնաշղթայի միջին բարձրությունը ծովի մակարդակից՝ 2800 մ է, իսկ առավելագույն բարձրությունը՝ 2992 մ (Ուրասար): Բազումի անտիկլինալը համապատասխանում է երկրաբանական կառուցվածքին: Այն բնորոշվում է աստիճանական թեքությունների սիմետրիկ կոնվեքսով: Կառուցվածքային ռելիեֆը բնորոշվում է երկրորդական անտիկլինալ (Ուրասարի, Չքնաղի), գմբեթային (Մայմեխի), սինկլինալ կամ ֆլեքսուրալ (Գարգարի) և գրաբեն-սինկլինալ (Դիլիջանի) համակարգերով:

Տավուշի մարզը տարածված է Փոքր Կովկասյան լեռնաշղթայի արտաքին գծում (Վիրահավոց, Գուգարաց և Միափոր լեռներ) և գտնվում է Հայաստանի Հանրապետության միջին խոնավության տարածքում:



Սկար 7-1. ՀՀ ֆիզիկական քարտեզ

7.1.3. Օդերևութաբանություն և կլիմա

Ուսումնասիրվող տարածքի կլիման համեմատաբար խոնավ է: Տարեկան տեղումների քանակը 500-ից-800 մմ է: Լեռնալանջերում ձմեռը կարճ է և մեղմ, իսկ ամառը՝ երկար և շոգ: Ինչքան ավելի մեծ է բարձրությունը, այնքան ավելի ձյունատատ են ձմեռները, իսկ ամառները՝ ավելի արևոտ: Նախալեռներում ձյունատատ շրջանի տևողությունը հոկտեմբերից մինչև ապրիլ, իսկ լեռնամասերում՝ մինչև մայիս ամիսներն է: Չյան ծածկույթի առավելագույն բարձրությունը 10-օրյա ժամանակահատվածի համար մոտ 30 սմ է, ձյունածակույթի առկայությամբ օրերի միջին քանակը՝ 52 է: Գերիշխող քամին հարավային է, իսկ որոշ դեպքերում՝ հյուսիսային և հյուսիսարևմտյան: 0-1 մ/վ քամիների միջին տարեկան քանակը՝ 24 %:

Լոռու մարզի հյուսիս-արևելյան մասերում տեղակայված Շնողի օդերևութաբանական տվյալները նշված են Աղյուսակ 7-1-ում:

Աղյուսակ 7-1. Շնող բնակավայրերի օդերևութական տվյալները

Շնող	հունվար	փետրվար	մարտ	իվմիտ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	տարեկան
Միջին ջերմաստիճան, (°C)	0.7	1.9	5.1	11.0	15.7	19.2	22.7	22.5	18.0	12.3	7.1	2.7	11.6
Օդի հարաբերական խոնավություն (%)	69	69	70	69	72	68	62	63	69	73	73	70	69
Տեղումներ (մմ)	20	25	40	54	79	87	49	39	37	42	31	16	519

7.1.4. Երկրաբանություն և երկրաշարժեր

Տարածքի երկրաբանական և տեկտոնային նկարագրությունը

Ուսումնասիրվող տարածքների երկրաբանական կառուցվածքում կան միջին տարիքի Սպիտակ Յուրայի հրաբխածին նստվածքային լեռնատեսակներ, որոնք ներկայացված են պորֆիրիտներով, տուֆային ավազաքարով և կավե թերթաքարով պատված ապառաժներով և այլ տուֆային նստվածքով, որը Դեբեդ գետի հովտում ծածկված է բազալտե լավայով, որոնք դասվում են պլիոցենի չորրորդական դարաշրջանին: Հրաբխածին նստվածքային լեռնատեսակները ենթարկվել են հիդրոջերմային և մետասոմատիկ փոփոխությունների: Շատ տարածված են բազմաթիվ դիաբազային կառուցվածք ունեցող պորֆիրիտներ: Տարածքի ինտրուզիվ մագմայական վիճակը հստակ կերպով արտահայտված է ակալիական տիպով և ներկայացված է գրանոդիորիտ կառուցվածք ունեցող ապառաժներով, որոնց մեջ Լավար լեռնային լանջերի ինտրուզիվ վիճակն է:

Միջին չորրորդական դարաշրջանին պատկանող բազալտե լավայի հոսքերը վերը նշված ապառաժի անհարթ մակերևույթի վրա են, որոնք գտնվում են շերտագրության ստատիգրաֆական անհամապատասխանության մեջ է: Այն սկսվում է Լոռիի սարահարթում և իջնում է մինչև Դեբեդ գետի հովիտը, շարունակվում է նեղ միջանցքով և հասնում մինչև Քուռ գետը: Հիմնականում, դրանք ներկայացված են երկու հոսքերով՝ վերևի և ներքևի, որոնց բնորոշող առանձնահատկությունը իրենց բաժանումն է: Սյունակային բաժանումը վերին հոսքին բնորոշող առանձնահատկությունն է, մինչ դեռ կլոր ձևով բաժանումը ներքևի հոսքի համար է: Բազալտի ամրությունը կայուն չէ և միջինը տատանվում է 20-50մ միջակայքում:

Հիմնականում տարածքը ներկայացված է ապառաժներով (անդեզիտով, պորֆիրիտներով, դիորիտով) ծածկված 4-6մ դեյուվիալ և պրոլուվիալ նստվածքներով:


Ուսումնասիրվող տարածքի տեկտոնային վիճակը որոշվում է Սումխեթի-Ղարաբաղի իր տեղանքի տեկտոնային գոտիով: Լավարի սինկլինալը (գոգաձալքը) անմիջապես կապված է ուսումնասիրվող տարածքի հետ հյուսիս-արևմուտքի կողմից, որը բաժանվում է Միջին-Վերին/Սպիտակ/Յուրայի և Էոցենի դարաշրջանների և Չատինդաղ հակասինկլինալի հարավ-արևելյան կողմից, որոնց մեջ հայտնաբերվել է Միջին-Վերին/Սպիտակ/Յուրայի դարաշրջանները:

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Ելնելով հիդրոերկրաբանական տեսանկյունից՝ ուսումնասիրվող ծրագծի տարածքը բնութագրվում է ջրերում սովորական բեկորների, ծակոտկեն ունեցող բեկորների մանրաքարերի առկայությամբ, ինչպես նաև դեյուվիալ և պրոլուվիալ գոյացություններով:

Ջրերում սովորական բեկորների, ծակոտկեն ունեցող բեկորների մանրաքարերի հիմնական մասսան պատկանում է դոլերիտ-բազալտին, պորֆիրիտներին, իրենց տուֆային ավազաքարին և նմանատիպ ապառաժներին: Ճաքելու և մանրանալու իրենց հատկությունների պատճառով այդ ապառաժները հեշտությամբ անհետանում են (հիմնականում հալվում են) մակերևութային ջրերում, որոնք գտվելով՝ կուտակվում են հորիզոնում և հոսում են Դեբեդ գետի, նրա ջրային հոսքերի, հովիտների և այլնի ուղղությամբ: Հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են տեղանքի զարգացման համար: Նշված տեղանքներում և խորքային հորերի մինչև 6մ խորությամբ չեն հայտնաբերվել ստորգետնյա ջրեր: Դեբեդ գետի առանձին մասերում նկատվում են սահմանափակ քանակությամբ աղբյուրներ: Ջրերի դեյումվիալ և պրոլուվիալ գոյացությունները հանդիպում են լանջերի ստորոտներում աղբյուրների ձևով:

Հայաստանի երկրաբանական քարտեզը բերված է Գծագիր 7-2-ում:



Նկար 7-2: Հայաստանի երկրաբանական քարտեզ

Տարածքի սեյսմիկ-տեկտոնական պայմանները

Տարածքի սեյսմիկ-տեկտոնական պայմանները բարենպաստ են: Դրանց գնահատման ընթացքում մեծ կարևորություն է տրվել ակտիվ տեկտոնական գոտիներին և սեյսմիկ վտանգի սկզբնական արժեքը՝ գնահատելով գրունտի պայմանները: Այս տարածքում չկան ոչ մի ակտիվ տեկտոնիկ ճաքեր:

Համաձայն 02.02.2006թի Հայաստանի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, տարածքը ընդգրկվել է առաջին սեյսմիկ գոտում, որտեղ սպասվող առավելագույն արագացումները լինում են 0.20g (8 բալ):

7.1.5. Հողեր

Տարածքի հողային ծածկույթը բազմազան է ու ենթակա բարձունքային գոտիականության: Տարածաշրջանում զարգացած են լեռնամարգագետնային, մարգագետնա-տափաստանային, գորշ և դարչնագույն անտառային հողերը, սևահողերը և գետահովտադարավանդային հողերը:

Լեռնամարգագետնային հողերը ունեն լավ արտահայտված, նուրբ հատիկավոր կառուցվածք, աղքատ են կարբոնատներից: Պարունակում են մեծ քանակությամբ հումուս: Հողաշերտի հզորությունը փոքր է: Մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է, հողային լուծույթի ռեակցիան թթվային է: Լեռնամարգագետնային հողերը բնորոշվում են մակերեսային և խորքային թաղված ուժեղ քարքարոտությամբ:

Հողերի տիպերի բաշխվածությունը Հայաստանում ներկայացված է նկար 7-3-ում:

7.1.6. Ջրային ռեսուրսներ

Դեբեդ գետը հոսում է առաջարկվող միջանցքին զուգահեռ, և երկու անգամ կհատվի գծով: Դեբեդ գետը և նրա վտակները հիմնականում սնուցվում են աձրևաջրերով: Վարարման շրջանը տևում է մարտից մինչև հունիս ամիսները, իսկ դրան հաջորդում է կայուն և ցածր ջրի մակարդակի չոր շրջանը: Կարճատև և ինտենսիվ ջրհեղեղներ են գրանցվում սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին՝ կախված տեղումների քանակից:

Ըդհանուր առմամբ, գետը բնութագրվում է որպես ինտենսիվ և բարձր վարարումներ ունեցող գետ: Մակերեսային ջրերը մաքուր են, հանքայնացումը 238-ից մինչև 599մգ/լտ սահմաններում է: Գետի ջրերն օգտագործվում են տեղի բնակչության կողմից ոռոգման նպատակով:

DISTRIBUTION OF KEY SOIL TYPES IN ARMENIA



Նկար 7-3: Հողատեսակների բաշխվածությունը Հայաստանում

7.1.7. Բուսական և կենդանական աշխարհ

Օրագրի տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Իջևանի բուսաբանական տարածքում և պատկանում է Կովկասյան տարածաշրջանի Suicumbolistic բուսաբանական տարածքին: Անտառները ներառում են չոր և արաքսյան կաղնիները, արևելյան հաճարենին, կովկասյան սոճին, կարմրածառը, կնձնին, վրացական կաղնին, և այլ մշտադալար ու թափվող ծառերը: Ճահճային տեղամասերը և անտառները լի են վայրի բույսերով: Տարածքում առկա են հաճարենու, լորենու, թխկենու, կնձնենու և հացենու տարբեր տեսակներ: Օժանդակ տեսակները ներկայացված են պնդուկենիով, ցախկեռասով, գերմանական մուշմուլայով, մասրենիով, մոշով, ազնվամորով, արևելյան բոխիով, իլենիով, հոնենիով և հաղարջենիով: Որոշ տարածքներ ծածկված են գետափնյա բուսականությամբ (բարդիներ, ուռենիներ և խոտանման բույսեր՝ խոնավ տարածքներում), ինչպես նաև բաց անտառային խոտհարքների բուսական համակցություններ:

Լեռնային ֆլորան ներառում է հետևյալ տեսակները. *Iris furcata*, *Anemone fasciculata*, *A. ramunculoides*, *Caltha popypetala*, *Veratium lobelianum*, *Palsatilla armena*, *Corydalis persica*, *Fritilaria caucasica*, *Betonica grandiflora*, *Prunus spinosa*, *Sedum pilosum*, *Sempervivum transcausicum*, *Malus orientalis*, *Pyrus caucasicus*:

Գետերի կիրճերի ֆլորան ներառում է հետևյալ տեսակները. *Iris lineolata*, *I. paradoxa*, *I. caucasica*, *Allium stamineum*, *Bellevalia paradoxa*, *B. longystila*, *Datura stramonium*, *Digitalis ferruginea*, *Muscari atropatana*, *M. sosnovskyi*, *Tulipa sosnovskyi*, *Punica granatum*, *Vinca sp.*, *Vitis sylvestris*, *Ficus carica* (վայրի):

Ուսումնասիրության իրականացման շրջանում և հարող տարածքներում կան կենդանիների բազմաթիվ տեսակներ, որոնք հիմնականում բնակվում են անտառներում, դիմացկուն թփուտներում, լքված այգիներում և մեղվանոցներում: Ֆաունան ներառում է զգալի քանակությամբ վայրի անտառային կատուներ, եղեգնյա վայրի կատուներ, լուսաններ, աղվեսներ, ազնիվ եղջերուներ, եղնիկներ, կովկասյան սկյուռեր, մացառախոզեր, արջեր, վայրի խոզեր և կզաքիսներ:

Ուսումնասիրվող տարածքում հանդիպող կենդանիների և բույսերի տեսակների մասին առկա չեն գրականության մանրամասն տվյալներ:


Մանրամասն տեղեկատվություն չկա թռչունների չվելու ճանապարհի մասին, բայց գիտենք, որ Հայաստանը չի ընկնում հիմնական միգրացիոն ճանապարհներից ոչ մեկի վրա, որը գտնվում է երկրի արևելքում և արևմուտքում: Այսպիսով ՕԳ-երը չեն հատում որևէ Կարևոր Թռչնային տարածք, ըստ Թռչունների Պաշտպանության Միջազգային Ասոցիացիայի:

7.1.8. Անտառներ

Ուսումնասիրության իրականացման տարածքը գտնվում է Անտառային Լանդշաֆտային Գոտում: հայաստանում անտառներն, ընդհանուր առմամբ, ծածկում են լեռների միջին գոտին, որոնք երկրի հյուսիսում հանդիպում են 500մ-ից մինչև 2,100մ բարձրության վրա: Հայաստանի անտառների գերակշռող մասը՝

լայնատերև է (97 %): Հայաստանի անտառային տարածքները բերված են Աղյուսակ 7-4-ում:

Առաջարկված միջանցքի անտառապատ տարածքը ընդգրկում է հիմնականում Հաղպատից դեպի Դեբեդ գետի հատումը և հարավ դեպի Փոքր Այրում: Այս հատվածում անտառի մոտ 5.5կմ-ը հատվում է առաջարկված էլեկտրահաղորդման գծով, և կարող է պահանջվել ծառահատումներ այս անտառային տարածքում: Առաջարկված միջանցքի այս տարածքում գերակայում են կաղնու և բոխու անտառները, վրացական կաղնու հիմնական տեսակներով (*Quercus iberica*) և սովորական բոխու տեսակով (*Carpinus betulus*): Այս ծառատեսակներին ոչինչ չի սպառնում, բայց այս անտառներում հանիպող լրացուցիչ տեսակների մասին առկա չեն մանրամասն տվյալներ:




Նկար 7-4. Հայաստանի անտառները

7.1.9. Լանդշաֆտ

Ուսումնասիրության տարածքն գտնվում է Անտառային Լանդշաֆտային Գոտու հատվածում (տես կար 7-5) և խիստ առանձնացված քանդակված ռելիեֆ է՝ կտրուկ լանջերով և արոտավայրերի ու գյուղատնտեսական դաշտերի ինտերվալներով: Գործող էլեկտրահաղորդման գիծը գտնվում է լեռնային սարահարթերում և գետի կիրճում/ճանապարհի երկու կողմերում՝ ունենալով բարձր տեսողական ազդեցություն: Դեբեդ գետի կիրճում կան բնակավայրեր: Դեբեդ գետի հովիտը շատ գեղատեսիլ է և գործող օդային գծերի առկայությունը տեսողական տհաճություն է պատճառում զբոսաշրջության տեսանկյունից: Եթե առկա 110կՎ ՕԳ-երը ապամոնտաժվեն, ապա չի լինի լրացուցիչ տհաճություն, քանի որ հենարանների քանակը մնում է նույնը:

Source: Fifth National Report to the Convention on Biological Diversity, Republic of Armenia, Yerevan 2014



Նկար 7-5: Հայաստանի լանդշաֆտային գոտիները

7.1.10. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Առաջարկված 110կՎ Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երը և դրանց մոտեցման ճանապարհները չեն հատի Լոռու և Տավուշի մարզերի այս պահպանվող տարածքներից որևէ մեկը կամ չեն ազդի դրանց վրա:

7.1.11. Թափոնների կառավարումը Հայաստանում

Երկրում կարելի է հանդիպել մոտ 60 աղբավայրերի: Հայաստանում թափոնների կառավարման ոլորտը կարգավորվում է «Թափոնների մասին» օրենքով և դրանից բխող 30 իրավական ակտերից, և կան վտանգավոր թափոնների վնասագերծման, վերամշակման ու վերացման շատ քիչ հնարավորություններ, օրինակ Երևանի աղբավայրը: Պինդ թափոնների կառավարումը շատ թույլ է կազմակերպված Հայաստանում: Պինդ թափոնների մեծ մասը թափվում է ժամանակավոր աղբավայրեր առանց որևէ տեսակավորման կամ վերամշակման: Պինդ թափոնները հիմնականում չեն տնօրինվում, համաձայն միջազգայնորեն ընդունված փորձի: Թափոնը կամ այրվում կամ ուղղակի թափվում է:

Իրավիճակի փոփոխման համար Հայաստանը «Վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման և հեռացման նկատմամբ հսկողության մասին» Բազելի կոնվենցիայի մաս է հանդիսանում 1999թ.-ից և Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2003թ.-ին վավերացրել է «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիան: Ազգային իրականացման պլանը ձևավորվել է 2005թ.-ին Ստոկհոլմի կոնվենցիայի Հոդված 7-ի հիման վրա: 2004թ.-ին ընդունվեց «Թափոնների մասին» օրենքը, որը թափոնների օգտագործման համար սահմանում է պետական քաղաքականություն, որի նպատակն է կանխել շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոնների վնասակար ազդեցությունները, ընդլայնելով դրանց օգտագործումը, որպես երկրորդական հումք:

Սակայն, այս նախագծի ընթացքում պարզվել է, որ Հայաստանում ընդհանրապես հասանելի չէ ցանկացած թափոնի վերամշակման համակարգ: Արժեքավոր թափոնը, ինչպիսին է օգտագործված նավթը/յուղը, նույնպես վաճառվում է անհատների կամ օր. Իրան՝ վերամշակման համար (օր. պողպատ/ երկաթ): Այնպիսի ընկերություններ, ինչպիսին է ASCE Group ԲԲԸ-ն, որը գտնվում է Չարենցավանում, որի այժմ բանակցություններ են տանում հնարավոր վերամշակման հետ կապված:

Հետևաբար, ենթակայաններում թափոնների կառավարման հետ կապված իրավիճակը դեռևս անմխիթար է: Երբևէ հավաքված ամբողջ թափոնները կուտակվել են ենթակայանների տարածքում, տասնամյակներ շարունակ: Այսպիսով, հին սարքավորումները, ինչպիսիք են՝ հին ավտոմատ անջատիչները, կերամիկական մասերը, պողպատը, ինչպես նաև հին մարտկոցներն ու անպիտան նավթը/յուղը կուտակվել են տարածքի ինչ-որ հատվածում: Բոլոր այս մասերը դեռ ԲԷՑ-ի հաշվեկշռում են: Շինարար Կապալառուն պետք է հստակեցնի Թափոնների կոմունալ ծառայությունների բաժնի հետ, թե որտեղ կարող են տարբեր տիպի թափոնները տեղաբաշխվել: Թափոնների տեղաբաշխումը պետք է կատարվի կոմունալ ծառայությունների կողմից, որտեղ թափոնները պետք է տեսակավորվեն:

7.2. Սոցիալտնտեսական պայմանները

7.2.1. Բնակչությունն ուսումնասիրվող տարածքում

Նախատեսվող ՕԳ-երի միջանցքն անցնելու է Լոռու և Տավուշի մարզերով: Որոշ գյուղական համայնքներ, օրինակ Ակները, Հաղպատը, Նեղոցը, Փոքր Այրումը և Մեծ Այրումը գտնվում են Լոռու առաջարկվող միջանցքի մոտակայքում:

Լոռու մարզի բնակչությունը կազմում է 234,700 մարդ, տարածքը՝ 3,799 կմ², իսկ բնակչության խտությունը 1 կմ² տարածքի համար՝ 61.8 մարդ: Տավուշի մարզի բնակչությունը կազմում է 128.300 մարդ, տարածքը 2,704 կմ², իսկ բնակչության խտությունը 1 կմ² տարածքի համար՝ 47 մարդ:

Այստեղ կան որոշ ազգային փոքրամասնություններ (օրինակ՝ քրդեր, եզդիներ, ռուսներ, վրացիներ և այլն): Այս փոքրամասնությունների ներկայացուցիչներից ոմանք կարող են գտնվել խոցելի կարգավիճակում, այնուամենայնիվ, սիստեմատիկ խտրականություն կամ խոցելիության համընդհանուր վիճակ չի գրանցվել:

Բնակչության մեծ մասը կենտրոնացած են բնակավայրերում: Նախատեսվող ուղեգծի միջանցքի մեծ մասը ամայի տարածքներ են, հիմնականում համայնքային և մասամբ սեփական հողեր են:

Գյուղատնտեսությունը հիմնականում սեփական կարիքների բավարարման համար է, իսկ ավելցուկն ուղղվում է տեղական շուկա: Հիմնական ենթակառուցվածքները արդիկանացման կարիք ունեն: Երիտասարդները գերադասում են տեղափոխվել քաղաքներ, հիմնականում Երևան կամ արտերկիր:

7.2.2. Պատմական և մշակութային վայրեր

Քանի որ Հայաստանի բնակչության պատմությունն սկսվում է թերևս նեոլիթյան դարաշրջանից, և տարածքը միայն դրանից հետո դարձավ կարևոր որպես բնակավայր, առևտրային և գյուղատնտեսական գոտի, առկա էին բազմաթիվ պատմական և մշակութային վայրեր: Սակայն, չկան քարտեզներ, որոնցում նշված կլինեն այդ վայրերի ճշգրիտ տեղանքները (GPS կոորդինատներ): Ինչպես նաև, գոյություն ունեցող հուշարձանների միայն մի փոքր մասն է տեսանելի և ճանաչելի հասարակությանը: Մյուսները հայտնի են միայն մի քանի տեղական փորձագետների, որոնք առնչություն ունեն ՀՀ Մշակույթի նախարարության հուշարձանների պահպանության բաժնի հետ:

Համաձայն Հայաստանի “Մշակութային և պատմական անշարժ հուշարձանների” պետական գրանցման, Լոռու մարզում կան 2460 պատմա-մշակութային հուշարձաններ, որոնք համարվում են պետական ունեցվածք և

ենթակա չեն օտարման, և համապատասխանաբար 1680 հուշարձաններ կան Տավուշի մարզում (CE/EC 2010):

Դաշտային աշխատանքների ընթացքում, որոնք հանդիսանում են ՇՄՍԱԳ-ի մաս, հայտնաբերվել են երկու մշակութային վայրեր, որոնք գտնվում են գործող/նոր 110կՎ ՕԳ-երի միջանցքի ԱԳ-ում:

- Հաղպատ գյուղի հյուսիս-արևելյան հատվածում ԱՀ 12 և ԱՀ 13 մեջտեղում գործող 110կՎ ՕԳ-ի միջանցքում մշակութային վայր (խաչքար, տես նկար Նկար 9-6) կա:
- 110կՎ ՕԳ-երի միջանցքում ԱՀ 15 և ԱՀ 16 մեջտեղում եկեղեցու ավերակներ կան և հարակից տարածքում գերեզմանոց է գտնվում (տես նկար Նկար 9-68):

ԱԳ-ի տարածքում այլևս ոչ մի հայտնի մշակութային ֆիզիկական արժեք չկա, ինչպես նաև չկա որևէ տեղեկատվություն ԱԳ-ի տարածքում հնարավոր հնագիտական վայրերի վերաբերյալ: Այնուամենայնիվ, պլանավորված հենարանների տեղակայման վայրերի և մոտեցման ճանապարհների վերաբերյալ ԲԷՑ-ը տվյալներ կտրամադրի Մշակույթի նախարարությանը, որն էլ ի պատասխան կկազմի ազդակիր վայրին վերաբերող իր կարծիքի մասին հաշվետվություն: Անհրաժեշտության դեպքում ԲԷՑ-ը հետազայում կառաջարկի հենարանների տեղափոխում, որը պետք է հաստատվի Մշակույթի նախարարության կողմից:

7.2.3. Գենդերային ասպեկտներ

Գենդերային վերլուծությունը ցույց է տալիս, որ կան հիմնական խնդիրներ՝ կապված կանանց իրավունքների ռոնահարման հետ, հատկապես դրանք վերաբերում են կանանց մասնակցությանը կյանքի բոլոր ասպեկտներում տեղի ունեցող փոփոխություններին և զարգացումներին: Օրինական կերպով երաշխավորված իրավունքների և դրանց ոչ բավարար հնարավորությունների միջև գոյություն ունեցող բացը թույլ չի տալիս վերացնելու գենդերային խտրականությունը հայ հասարակության մեջ:

Չնայած նրան, որ Հայաստանում կանայք ունեն կրթության բարձր մակարդակ և հավասար մասնագիտական կարողություններ, նրանց համար գոյություն ունի հնարավորությունների պակաս կիրառելու իրենց հմտությունները և կարողությունները աշխատանքի շուկայում, ինչպես նաև հասարակության մեջ: Այս իրավիճակը էլ ավելի ակտուալ է դառնում գյուղական վայրերում:

Ուսումնասիրվող տեղանքում տղամարդկանց հաճախակի արտագաղթի պատճառով հաճախ են հանդիպում միայնակ կանանց կողմից դեկավարվող տնային տնտեսություններ: Կանանց գլխավորությամբ տնային տնտեսությունները գործնականում հատկապես խոցելի են և կարող են ընկնել ծայրահեղ աղքատության մեջ, քանի որ կանայք մնում են միայնակ՝ մի շարք

եկամտային, կենցաղային խնդիրների և երեխաների խնամքի պատասխանատվության հետ: Տղամարդկանց արտագաղթի մեկ այլ հետևանք էլ «զուգահեռ ընտանիքների» աճն է, երբ արտագաղթած տղամարդիկ ընտանիք են կազմում իրենց նոր բնակավայրում: Սա բարձրացնում է կանանց խոցելիությունը, հատկապես, երբ տղամարդիկ վերադառնում են տուն վատառողջ կամ վարակիչ սեռական հիվանդությամբ վարակված:

Հայաստանում կանացի վիճակը, հատկապես գյուղական համայնքներում, նկարագրվում է, որպես անկայուն կենսակերպ ունեցող, երբ նույնիսկ չնչին ցնցումները, փոփոխությունները, սեզոնայնությունը կարող են նպաստել ծայրահեղ խոցելի իրավիճակի ստեղծմանը, առանց հաղթահարման ռազմավարության հնարավորությունների: Բնակարանային, հողի կամ այլ գույքի կորուստը կարող են վճռական լինել այդ իրավիճակում:

«Հանրային ձայնի» բացակայությունը կարող է հանգեցնել մի իրավիճակի, որտեղ կանանց վերաբերյալ խնդիրները կարող են անտեսվել, կամ լուրջ չընդունվել և հետևաբար չդիտարկվել: Այս իրավիճակը կարող է նույնիսկ հանգեցնել նրան, որ կանայք չներկայացնեն իրենց բողոքները՝ ներքուստ իմանալով, որ իրենք զուրկ են «ձայնից»:

Որպես այդպիսին, գենդերային խնդիրները հաշվի կառնվեն ԱԵԱ-ց հետ հանրային քննարկումների, ինչպես նաև տեխնիկական նախագծման, փոխհատուցման, վերաբնակեցման, այս ծրագրի հետ կապված մոնիթորինգի ժամանակ:

7.2.4. Հողի օգտագործման օրինակները և գյուղատնտեսությունը

Համաձայն Հայաստանի 2013թ-ի Վիճակագրական տարեգրքի, ՀՀ-ն ունի մոտ 2 միլիոն հա գյուղատնտեսական նշանակության հող՝ իսկ դա նշանակում է երկրի հողային տարածքի մոտ 70 %-ը՝, արտադրելով Հայաստանի ՀՆԱ-ի 22 %: Դրանց մեծ մասը սակայն արոտավայրեր են (մոտ 1 միլիոն հա): Մշակելի հողատարածքներից 448,400 հա վարելահողեր են, 33,400 հա բազմամյա տնկարկներ, 121,600 հա այլ մշակվող հողեր, և 392,700 հա այլ հողատեսքեր (տես Աղյուսակ):

Համաձայն ՀՀ կադաստրի պետական կոմիտեի տվյալների, մարզում մասնավոր հողերը կազմում են ամբողջ գյուղատնտեսության նշանակության հողերի 23% -ից ավելի քիչ մասը և արոտավայրերը կազմում են պետական գյուղատնտեսության նշանակության հողերի ավելի քան 70 %-ը: Սակայն վարելահողերի ավելի քան 70 %-ը մասնավոր հողեր են (տես Աղյուսակ **Ошибка! Источник ссылки не найден.**):



Աղյուսակ 7-6: ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի գույքագրում

Աղույակ 7-2 Լոռու մարզի համար տեղեկությունը վերցված է Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեի 2013թ-ի հաշվետվությունից

Հողի կատեգորիան	Լոռի	Տավուշ
Գյուղատնտեսական նշանակության մասնավոր հողերը (հա)	49,404	24,454
Վարելահող (հա)	29,475	18,789
Բերքատու և խաղողի այգիներ (հա)	296	1,424
Խոտհարքներ (հա)	16,300	4,081
Արոտավայր (հա)	3241	28
Այլ հողատեսքեր (հա)	93	133
Գյուղատնտեսական նշանակության պետական հողերը (հա)	201,750	86,326
Վարելահող (հա)	12,600	6,817
Բերքատու և խաղողի այգիներ (հա)	122	474
Խոտհարքներ (հա)	18,848	5,194
Արոտավայր (հա)	142,480	63,167
Այլ հողատեսքեր (հա)	27,699	10,674

Հետազոտության վայրում գյուղատնտեսությունը կենտրոնացված է գյուղերի ստորին լեռնային լանջերին: Գյուղատնտեսական գործունեությունների շրջանակը շատ տարբեր է՝ խոշոր եղջուրավոր անասուններ, ոչխարներ, խոզեր և այծեր պահելուց մինչև մշակաբույսերի, ինչպիսիք են կարտոֆիլը, լոլիկը, վարունգը և սմբուկը և հացահատիկային մշակաբույսերի, ինչպիսիք են ցորենը և լոբին, և ավելի խորը արմատներ ունեցող բույսերի աճեցում, ինչպիսիք են պտղատու ծառերը (դեղձ, խնձոր, ծիրան):

Հայ հասարակության ամենաաղքատ խավի համար գյուղատնտեսությունը եկամտի հիմնական աղբյուր և ապրուստի պահպանման միակ ռազմավարությունն է հանդիսանում: Արդյունաբերության անկման պատճառով անկախացումից հետո ավելի աճեց կախվածությունը գյուղատնտեսությունից:

Մարդկանց ապրուստի համար գյուղատնտեսության կարևորության, և հողաբաժինների մասնատվածության և փոքր չափերի պատճառով, նախատեսվող օդային զծերի տեղափոխման համար գյուղատնտեսական նշանակության հողերի օտարումը դիտարկվում է որպես հնարավոր բացասական ազդեցության խնդիր: Առաջարկվող գծի մջանցքի մոտ 47%-ը օգտագործվում են գյուղատնտեսական նպատակով, արոտավայրերը ընդգրկում են մոտ 16%-ը, այգիները՝ մոտ 4%-ը և անտառային տարածքները՝ մոտ 23%-ը (գնահատված է՝ հիմնվելով 2010թ-ի արբանյակային լուսանկարահանման վրա):

7.2.5. Կենսամակարդակ

Համաձայն Լոռու մարզի սոցիալտնտեսական զարգացման Ծրագրի, Լոռու մարզի աղքատության մակարդակը բարձր է, իսկ Տավուշի մարզում ցածր է Հայաստանի միջին աղքատության մակարդակից:

Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունների տեղական տնային տնտեսությունների կենսամակարդակների ուսումնասիրությունների, Լոռու մարզում պաշտոնական աղքատության մակարդակից ցածր ապրող մարդկանց տոկոսն ավելի մեծ է հանրապետության միջինից: Միջինը 35 է, իսկ Լոռու մարզում միջինը 45.4 է: Աղքատության աստիճանը Լոռու մարզում նույնպես ավելի բարձր է հանրապետության միջինից: Գյուղական համայնքներում աղքատության պատճառներն են արդյունաբերական ձեռնարկությունների պակասը, թերզարգացած ենթակառուցվածքները և հեռավորությունը բնակչության մեծ մասից:

Աղյուսակ 7-2: Լոռու և Տավուշի մարզերի աղքատության հիմնական վիճակագրական տվյալները, 2011

Մարզ (Շրջան)	Ծայրահեղ աղքատ	Աղքատության շեմից ցածր, %	% ծայրահեղ աղքատները ընդհանուր աղքատության թվում	%-ը ընդհանուր առկա բնակչության մեջ
Լոռի	4.7 %	45.4 %	12.3 %	9.4 %
Տավուշ	2.0 %	26.7 %	3.4 %	4.5 %
Հայաստան	3.7 %	35.0 %	100 %	100

8. Տեղեկատվություն, հրապարակում, քննարկումներ և մասնակցություն

Ֆիխտներ ընկերության բնապահպանական և սոցիալական մասնագետները, բնապահպանական ազգային խորհրդատուի հետ միասին, հանդիպումներ են անցկացրել Երևանում և Վանաձորում ԲԷՑ-ի, Բնապահպանության նախարարության, Մշակույթի նախարարության ներկայացուցիչների հետ, ինչպես նաև դաշտային այցելություններ են կատարել Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի առաջարկված միջանցքը (տես՝ Բաժին 12.1՝ Առդիր I):

Երևանում և Վանաձորում քննարկվել են բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունները, ինչպես նաև Հայաստանում և Լոռու մարզում թափոնների ոչնչացման հնարավորությունները: Ակնկալվող աշխատանքների վերաբերյալ խորհրդակցություններ են անցկացվել Երևանում Վայրի Բնություն և Օրհուս Կենտրոն ՀԿ-ների հետ:

Երևանում խորհրդակցություններ են անցկացվել Մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հետ, որոնց ընթացքում քննարկվել են պատմության և մշակույթի վայրերի պահպանման ընթացակարգերը:

ՇՄՍԱԳ-ի հաշվետվության վերջնական նախագիծը, ներառյալ՝ ՇՄՍԿՊ-ն, հայերեն և անգլերեն տարբերակներով կհրապարակվեն հանրությանը՝ շահագրգիռ կողմերին տրամադրելով բավարար ժամանակ դրանց հետ ծանոթանալու համար: Համաձայն ազգային պահանջների, հրապարակման ժամանակահատվածը միայն 7 օր է, սակայն փաստաթղթերի հրապարակման համար առաջարկվում է առնվազն երկու շաբաթ: Հիմնական ազդակիր անձիք կունենան փաստաթղթերից օգտվելու հնարավորություն, որոնք այնուհետև ոչ միայն կտեղադրվեն ԲԷՑ-ի ինտերնետային կայքում, այլ նաև դրանց տպագրված օրինակները կտրամադրվեն տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակներին, ինչպես նաև հայտարարությունների միջոցով կիրականացվի դրանց առկայության վերաբերյալ իրազեկումը: Նաև Օրհուս Կենտրոնին կտրամադրվեն տպագրված օրինակները, և վերջինս այն կբաժանի մյուս ՀԿ-ներին:

Փաստաթղթերը հրապարակելուց հետո ամանեաշուտը երկու շաբաթվա ընթացքում ՇՄՍԱԳ-ի հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումներ կանցկացվեն: Քննարկումները պետք է կենտրոնանան ԱԵԱ-ց համար ՇՄՍԱԳ-ի մեկնաբանման, ինչպես նաև նրանց մտահոգությունների և արձագանքների ստացման վրա, որոնք հետագայում կընդգրկվեն ՇՄՍԱԳ-ի հաշվետվության վերջնական նախագծի վերանայված տարբերակում: ՇՄՍԱԳ-ի հաշվետվությունը, ինչպես նաև Ծրագրի Վերաբնակեցման քաղաքականության շրջանակը (ՎՔՇ) միասին կքննարկվեն հանրային լսումների ընթացքում, այնպես որ համայնքները կարողանան ընդգրկվել գործընթացի մեջ և բարձրացնել իրենց հարցերն ու արտահայտել իրենց ու մտահոգությունները:

ԲԷՑ-ը կապահովի գենդերային առումով հանրային լուսմների զգայունությունը: Մա նշանակում է, որ հանրային քննարկումները պետք է ներառեն հանրության մասնակցությունը (կանայք, երիտասարդներ և խոցելի խմբեր), ինչպես նաև պետք է հրավիրել քաղքական հասարակական կազմակերպությունների, որոնք զբաղվում են գենդերային հարցերով:

Տարբեր ՀԿ-ներ, ներառյալ Օրհուս Կենտրոնը (ազգային և տարածաշրջանային գրասենյակներ), կհրավիրվեն հանրային լուսմներին: Օրհուս Կենտրոնը կօգնի համապատասխան ՀԿ-ներին միանալ և կկիսվի ուսումնասիրության և այլն մասին տեղեկատվությամբ:

Հանրային լուսմները տեղի կունենան աշխատաքների իրականացման տեղանքին մոտ, այնպես որ համայնքները կարողանան ներգրավվել այս գործընթացի մեջ և բարձրացնել իրենց հարցերն ու արտահայտել իրենց ու մտահոգությունները:

9. Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցությունները նախագծման փուլում

9.1 Շրջակա միջավայրի ազդեցությունները նախագծման փուլում

9.1.1. Էլեկտրահաղորդման գծի ծրագիծը

Պլանավորված էլեկտրահաղորդման գիծը կհետևի արդեն գոյություն ունեցող 110կՎ միջանցքին, մոտ 50մ հեռավորության վրա: Ելնելով այն փաստից, որ առաջարկված գծի ծրագիծը հատում է մի շարք շինություններ, անհրաժեշտ է կատարել շրջանցների ցանկացած ֆիզիկական վերաբնակեցումից խուսափելու նպատակով (տես՝ բաժին 6.2):

Լավվար և Նոյեմբերյան ՕԳ-երի ծրագծի հետ կապված հատուկ մտահոգություններ կայացնող տարածքները հետևյալն են.

- Հաղպատ գյուղի արևմտյան մասում տեղակայված տները (ԱՀ 8 և ԱՀ 9 միջև),
- Նեղոց գյուղում տեղակայված տները, որոնց վրայով պետք է անցնի գիծը (ԱՀ 21 և ԱՀ 22 միջև):
- Փոքր Այրումի հարավային հատվածքում տեղակայված շինությունը, որի վրայով պետք է անցնի գիծը մինչև Դեբեդ գետը հատելը (ԱՀ 23 և ԱՀ 25 միջև):
- «Նոյեմբերյան» ենթակայանի մոտակայքում գտնվող տները:
- Հաղպատ գյուղի և հարավ, դեպի Փոքր Այրում հոսող Դեբեդ գետի անցումի միջև անտառային տարածքը (ԱՀ 13 և ԱՀ 24 միջև): Այս տարածքներում մեծ թռիչքով հենարանները կտեղադրվեն բլուրների կատարներին, որպեսզի թռիչք լինի անտառապատ լանջերի և հովիտների վրայով՝ այսպիսով նվազագույնի հասցնելով ծառահատումները:


Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը (վրա/ կողմից)	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/ անուղղակի
Էլեկտրահաղորդման գծի ծրագիծ	■ ■	■	Երկարատև	Ուղղակի

9.1.2. Մոտեցման ճանապարհներ

Քանի որ նոր 110կՎ ՕԳ-երի առաջարկված միջանցքը մոտ կլինի գործող 110կՎ և 220կՎ գծերի միջանցքներին, կօգտագործվեն արդեն առկա մոտեցման ճանապարհները/ուղիները: Համաձայն Տրակտեբել Էինջինիրինգ ընկերության (2014), նոր տեղադրվող հենարանների համար 80%-ով առկա են մոտեցման ճանապարհներ կամ ուղիներ: Մասնավորապես ԱՀ 13 և ԱՀ 24 միջև ընկած տարածքը, որտեղ գծի միջանցքը հատում է անտառապա բլուրը և գնում դեպի Դեբեդ գետի հովտի հարավային մասում գտնվող լեռնային տարածքը, առկա մոտեցման ուղիները պետք է վերականգնվեն (օր. ուղիները ծածկած բուսականության կտրում) և որոշ ուղիներ պետք է կառուցվեն (տես նկար 9-1): Էրոզիան կանխարգելող միջոցառումներ պետք է իրականացվեն, որոնք են ճանապարհի եզրերի երկայնքով թփեր տնկելը և ջրահեռացման համակարգ անցկացնելը: Մոտեցման ճանապարհները, որոնք շինարարությունից հետո այլևս անհրաժեշտ չեն լինի, կվերականգնվեն և բույսեր կվերատնկվեն:

Որոշ հատվածներում մոտեցման ճանապարհները/ուղիները կարող են հատել պատմական վայրերը և գերեզմանոցները, որոնք գտնվում են գետնի տակ և լեռնային տարածքներում: Այսպիսով, ՀՀ Մշակույթի նախարարությունը պետք է տեղեկացվի պլանավորված մոտեցման ճանապարհների տեղակայման մասին: Մշակույթի նախարարությանը ի պատասխան կկազմի ազդակիր վայրերին վերաբերող իր կարծիքի մասին հաշվետվություն: Անհրաժեշտության դեպքում ԲԷՑ-ը հետազայում կառաջարկի հենարանների տեղափոխում, որը պետք է հաստատվի Մշակույթի նախարարության կողմից:

Առկա ուղիները հնարավորինս չափով կօգտագործվեն: Այն դեպքում, երբ ճանապարհի կառուցման և հողի ուսումնասիրության ընթացքում (եթե այդպիսիք լինեն), որևէ ԱԵԱ ժամանակավորապես զրկվի հողի կամ ապրուստի միջոցների հասանելիությունից, խնդիրը կլուծվի Ծրագրի Վերաբնակեցման քաղաքականության շրջանակի (ՎՔՇ) դրույթներին համապատասխան:



Նկար 9-1: Անտառապատ լեռնային տարածքը (նկարի աջ կողմում) Հաղպատի հյուսիս-արևելյան մասում

9.2 Ծրջակա միջավայրի վրա ազդեցությունները և դրանց մեղմացումը շինարարության իրականացման ընթացքում

9.2.1. Լանդշաֆտ

ՕԳ-ի միջանցքի որոշ հատվածներում լանդշաֆտի վրա մեծ ծանրություն է առաջանում տարածքը հատող բազմաթիվ այլ գուգահեռ ՕԳ-ների և երկար թռիչքով բաշխիչ գծերի պատճառով: Ելնելով լանդշաֆտի բնույթից՝ հենարանների տեսանելիությունը հաճախ բարձր է:

Պլանավորվող ՕԳ-ի միջանցքը մասամբ հատում անցնում է Հաղպատի գյուղը, որը համարվում է զբոսաշրջության (Հաղպատի վանքը) համար ազգային մեծ կարևորություն ունեցող տարածք: Եթե գոյություն ունեցող 110կՎ ՕԳ-երի հենարանները արդյունավետ կերպով ապամոնաժվեն, և հենարանների քանակությունը մնա նույնը, ինչ եղել է նախկինում, ապա տեսողական տհաճություն չի առաջանա: Դեբեդ գետի հովիտը շատ գեղատեսիլ է, և գործող օդային գծերի առկայությունը տեսողական տհաճություն է պատճառում զբոսաշրջության տեսանկյունից: Հենարանների տեսողական ազդեցությունը նվազեցնելու համար հին 110կՎ ՕԳ-երը պետք է ամբողջովին ապամոնտաժվեն: Գծերի փոխարինումից հետո հենարանների քանակը կմնա նույնը: Ապամոնտաժումը պետք ներառի նաև այլևս չօգտագործվող հիմքերի ապամոնտաժումը և տեղանքից դրանց հեռացումը:

Ազդեցությունը	Զգայունությունը	Ազդեցության չափը (վրա/ կողմից)	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/ անուղղակի
Լանդշաֆտ	■	■	Երկարաժամկետ ազդեցություն հենարանների առկայության հետևանքով	Ուղղակի ազդեցություն գծի ֆիզիկական առկայության հետևանքով

9.2.2. Տլորա և ֆաունա

Հատվող հողերի մեծ մասը բաղկացած է գյուղատնտեսական հողերից, արոտավայրերից և բլրային տարածքներից: Առաջարկվող գծի հողերի մոտ 47% օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով, 23%-ը անտառային տարածք է (տես Նկար 9-2), արոտավայրերը կազմում են մոտ 16%, թփուտները մոտ 8% և այգիները մոտ 4% (գնահատվել է 2010թ-ին արբանյակային լուսանկարահանման հիման վրա): Ծինարարական աշխատանքները պետք է իրականացվեն պատշաճ զգուշությամբ, որպեսզի սահմանափակվի բացասական ազդեցությունը ֆլորայի և ֆաունայի վրա: Առաջարկվող 110կՎ ՕԳ-երի միջանցքում կամ մոտեցման ճանապարհների պատճառով ոչ մի հատուկ պահպանվող տարածք բացասական ազդեցության չի ենթարկվի:



Նկար 9-2: Անտառապատ բլուր ԱՀ 15 մոտ

Նոր հենարանների տեղակայման վայրերի մոտ 80%-ին կարելի է մոտենալ՝ օգտագործելով գոյություն ունեն մոտեցման ճանապարհներ, որոնք հնարավորինս պետք է օգտագործվեն: Սակայն, ԱՀ 13 և ԱՀ 24 միջև ընկած տարածքում, որտեղ գծի միջանցքը անցնում է անտառածածկ բլուրներից մինչև Դեբեդ գետի հովտի հարավում գտնվող լեռնային տարածքները, գոյություն ունեցող մոտեցման ճանապարհները պետք է վերականգնվեն (օրինակ՝ մոտեցման ճանապարհները ծածկող բուսականության կտրում):

Բասացական ազդեցությունը անտառների վրա անխուսափելի է, քանի որ ԱԳ-ի մի մասում տեղի կունենա ծառահատում, որը կարող է հանգեցնել բնական միջավայրի փոփոխության կամ ոչնչացման: Եթե կիրառվեն առաջարկվող մեղմացման միջոցառումներ, ապա բացասական ազդեցությունը կլինի միջին կարգի: Ի թիվս այլոց, այդ միջոցառումները ներառում են հետևյալը.

- Առաջարկվում է մինչև շինարարական աշխատանքներն սկսելը ԱԳ-ի երկայնքով կատարել ուսումնասիրություն թռչունների և չղջիկների վերաբերյալ, քանի որ գրականության մեջ ոչ մի տվյալ առկա չէ, իսկ ձմեռը հնարավոր չէր կատարել թռչունների և չղջիկների վերաբերյալ պլանի կազմում: Այս ուսումնասիրությունը պետք է իրականացվի անտառտնտեսության վարչության կողմից՝ Վայրի Բնություն ՀԿ-ի և տեղական մասնագետների հետ համագործակցելով:
- Անտառային տարածքներում իրականացվող շինարարական աշխատանքները չեն թույլատրվի ձվադրման/բազմացման ժամանակ (մարտ-հունիս):
- Երկար թռիչքների համար նախատեսված հենարաններ պետք է տեղադրվեն բլուրների կատարին, այսպիսով նվազագույնի կհասցվի ծառահատումները տեղանքում՝ հենարանների մոտ ԱԳ-ում, որտեղ պետք է պահվի ծառերի և էլեկտրահաղորդման գծերի միջև անհրաժեշտ միջակայքը:

- Պարտադիր ծառատնկման պլան կմշակվի, որը կհաստատվի և կիրականացվի անտառտնտեսության վարչության կողմից: Տեղանքին հատուկ տեղական ծառատեսակներ կտնկվեն միջանցքի մոտակայքում 2:1 հարաբերակցությամբ (մեկ կտրված ծառի փոխարեն պետք է տնկել երկու ծառ, ըստ ազգային օրենքի) այն տարածքում, որը կրկնակի անգամ մեծ է այն տարածքից, որտեղ կատարվել է ծառահատում (օրինակ նոսրացած անտառային տարածքում): Ծառերի տնկման վերջնական վայրը կորոշվի անտառտնտեսության վարչության կողմից՝ Վայրի Բնություն ՀԿ-ի հետ համագործակցելով:
- Տնկիների պահպանումը և չորացած տնկիների վերատնկումը նույնպես պետք է ապահովվի անտառտնտեսության վարչության/ՀԿ-ների կողմից:
- Հենարանների տեղակայման վայրերը, որոնք չունեն մոտեցման ճանապարհներ, պետք է հասանելի լինեն ԱԳ-ի երկայնքով, որպեսզի հնարավոր լինի խուսափել ոչ անհրաժեշտ ծառահատումներից:
- Այն մոտեցման ճանապարհները, որոնք այլևս անհրաժեշտ չեն, շինարարության ավարտից հետո պետք է վերականգնվեն, այսինքն՝ այդ ճանապարհները պետք է ծածկվեն բուսականությամբ:
- Տեղանքում գնտվող աշխատակիցներին արգելվում է կատարել որս:

Գծի միջանցքում գտնվող մոտ 29 հեկտար տարածքը անտառային գոտի է, և կարող է պահանջվել ծառահատում: Եթե գիծը թռիչք ունենա անտառապատ լանջերի և հովիտների վրայով, անտառը չի մասնատվի էկոլոգիապես կարևոր եղանակով: Հետևաբար, հետագայում տնկվող ծառերի քանակը և վերատնկման համար արժեքը պետք է որոշվի հենարանների տեղակայման վերաբերյալ վերջնական նախագծից հետո:

Համաձայն ազգային օրենսդրության, Պետական Անտառներում կտրվող ծառերը պատկանում են Անտառտնտեսությանը: Եթե ծառերը կտրվում են համայնքներին պատկանող անտառներից, ապա համայնքը պետք է որոշի, թե ինչպես օգտագործել այն:

Այն վայրերում, որտեղ ՕԳ-ն անցնում է հովիտներով, առաջարկվում է հաղորդալարերի վրա տեղադրել թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքներ, որպեսզի նվազագույնի հասցվի թռչունների բախումը ՕԳ-ի հետ (տես Հատված 9.3.2)

Ազդեցությունը	Զգայունությունը	Ազդեցության չափը (վրա/ կողմից)	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/ անուղղակի
Ֆլորա և ֆաունա	■ ■	■ ■	Երկարաժամկետ	Ուղղակի

9.2.3. Հողի էրոզիա (քայքայում)

Բուսականության կորուստը և հողի կուտակումը մեծացնում է հողի խոցելիությունը էրոզիայից: Բուսականության համար կարող է դժվար լինել կրկին աճել հողի փխրուն կամ կուտակված տարածքներում: Բուսականության կորստի և այն չվերականգնելու դեպքում, էրոզիայից տուժած տարածքները հաճախ հակված են տարածվելու՝ քամու և անձրևների ազդեցության միջոցով: Հողերը հատկապես խոցելի են, երբ գետինը խոնավ է, քանի որ այդ դեպքում երթևեկությունը կարող է հասցնել ամենամեծ վնասը:

Չպաշտպանված հողի էրոզիան և դրա հետևանքով առաջացող նստվածքները կարող են առաջանալ Ծրագրի զարգացման արդյունքում և առաջացնել օդի (փոշուց) և ջրի աղտոտում (ջրային ռեզերվուարներ հողերի տեղափոխման պատճառով նստվածքների գոյացման արդյունքում): Ինչպես նշված է վերևում, հողի փորման աշխատանքները, ինչպես օրինակ՝ բուսականության մաքրումը, սորտավորումը և փորումը տեղանքի նախապատրաստման նպատակով, ինչպես նաև ծանր տեխնիկայի տեղափոխումը գրունտային հողերի վրայով, կարող են թուլացնել հողը և հանգեցնել նրան, որ քշվող փոշին և նյութերի մասնիկները տեղափոխվեն օդի միջոցով: Հողի էրոզիան կարող է բացասաբար անդրադառնալ ջրային ռեզերվուարների ջրի որակի և կենսաբանական համակեցությունների վրա՝ պղտորության և նստվածքների քանակի աճի պատճառով: Էրոզիայի հնարավոր ռիսկը աճում է Ծրագրի բաղադրիչները հետևյալ վայրերում տեղակայելու արդյունքում. գառիվայր լանջեր, կամ անկայուն հողեր, ինչպես օրինակ՝ տորֆ, բուսահող և այլուվիալ հողեր, մանրահատիկ հողագնդեր, որոնք չոր պայմաններում դյուրազգաց են փոշու և էրոզիայի հանդեպ: Բացի այդ, ջրի որակի համար հավանական ռիսկերը մեծանում են առուներին, գետերին և լճերին մոտենալուն զուգահեռ:

Հողերի վնասումը հետագայում անդրադառնում է նաև հողօգտագործման վրա: Երբ հողը խտանում է, այն չի կարող պահպանել վայրի խոտը և բուսականությունը: Դա էլ իր հերթին պակասեցնում է արոտավայրերը, որոնք կարող են օգտագործվել տեղի անասունների արածեցման համար կամ, որոնք հասանելի են այլ կենդանիների համար: Խոտի կորուստը ազդում է կենսաբազմազանության վրա, քանի որ խոտը սննդի աղբյուր է փոքր կաթնասունների համար, որոնք էլ իրենց հերթին սնունդ են ապահովում գիշատիչ կենդանիների համար:

Կնվազեցվի հենաայունների հիմքի շուրջը հողի վերին շերտի հեռացումը: Շինարարությունից հետո հողի վերին շերտը կվերադարձվի իր նախկին տեղը և, գառիվայր լանջերի վրա հենաայունների մոնտաժումից հետո, հողի վրա կիրականացվի վերատնկում: Մոտեցման ճանապարհները, որոնց անհրաժեշտությունը շինարարության ավարտից հետո այլևս չլինի, կվերադարձվեն նախկին տեսքին և այդտեղ կիրականացվի վերատնկում:

Հատկապես Դեբեդ գետի հովտի և հովիտների թեք լանջերի (օր. Սանահին/Ակներ ԱՀ 3-4, Ակներ Հաղպատ ԱՀ 7-8, Նեցող ԱՀ 21-22, Մեծ Այրում

ԱՀ 28-29) վրայով անցելիս անհրաժեշտ է ճշգրիտ նախագիծ (ներառյալ կիրճերից բավարար հեռավորությունը, թեք լանջերին թույլ հողի նստվածքներից խուսափումը, ազդակիր տարածքներում անմիջապես ծառերի վերատնկումը) էրոզիայի երևույթի առաջացումից խուսափելու նպատակով, երբ հովիտների վրայով անցնելու համար նոր հենարաններ կառուցվեն (տես նկար **Ошибка! Источник ссылки не найден.**):



Նկար 9-3: Նեղոց գյուղի գառիթափի հովիտը, որի վրայով պետք է անցնի գիծը

Ի լրումն Հատված-ում ներկայացված մեղմացման միջոցների, առաջարկվում է էրոզիայի վերահսկման հատուկ պլանների իրականացում, հենց որ ՕԳ-երի վերջնական տեխնիկական նախագծերն առկա լինեն, քանի որ այս վերջնական նախագիծը տեղեկատվություն կներկայացնի հենարանների տեղակայման և մոտեցման ճանապարհների, հենարանների հիմքերի տիպերի և անհրաժեշտ հողային աշխատանքների վերաբերյալ:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը (վրա/ կողմից)	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Հողի էրոզիա	■ ■	■	Երկարաժամկետ	Ուղղակի

9.2.4. Հողային և ջրային ռեսուրսներ

Գոյություն ունի հողի և ստորգետնյա ջրերի աղտոտման ռիսկ, օրինակ՝ շինարարական տեխնիկայի և մեքենաների քսայուղերի/վառելիքի հետևանքով, որից կարելի է խուսափել պատշաճ տեխնիկական սպասարկման միջոցով: Բացի այդ, շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող յուղի/վառելիքի/քիմիկատների թափոնները կարող են աղտոտել մակերևութային ջրերը: Յուղից և քիմիական նյութերի արտահոսքից հողի և ջրի

աղտոտումը կանխարգելող միջոցառումները պետք է իրականացվեն շինարարության փուլում:

Հենարանները և հաղորդիչները չպետք է վտանգ ներկայացնեն հողի աղտոտման առումով, եթե չեն օգտագործվում ներկեր և այլ ծածկող շերտեր: Հաղորդիչները պատրաստված են այլումինիումից, որը չի մաշվում կամ ժանգոտում: Հենասյունները պատրաստված են պողպատից: Այս կառույցների տարրերի հողատարման հնարավորության մակարդակը չափազանց ցածր է: Եթե պողպատե հենասյունների մաշումը կամ ժանգոտումը կանխելու կամ այլումինիումը տարրերից պաշտպանելու նպատակով օգտագործվի ներկ կամ այլ ծածկող շերտ, կաթումները և արտահոսքերը կարող են աղտոտել հողը:

Բանվորների ճամբարների շահագործումը, մասնավորապես սանիտարական և սննդի համար նախատեսված շինությունների գործարկումը, գույքի պահեստավորումը և տեխնիկական սպասարկումը, շինարարական նյութերի և թափոնների պահեստավորումը, կարող են առաջացնել աղտոտում կոյուղու և աղբի, ինչպես նաև շինարարական սարքավորումների շահագործման և տեխնիկական սպասարկման արդյունքում առաջացող արտահոսքերի պատճառով: Պատշաճ շինարարական ճամբարը պետք է համալրված լինի զուգարաններով, ըստ IFC/EBRD ուղեցույցների՝ կանանց և տղամարդկանց համար առանձին, ինչպես նաև շինարարության ընթացքում ամբողջ աշխատուժի համար բավարար աղբամաններով: Շինարարության իրականացման վայրում պետք է իրականացվեն քիմիական արտադրանքներից մակերևութային և գրունտային ջրերի աղտոտումը կանխարգելող միջոցառումներ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո պետք է իրականացվի շինարարական ճամբարների ապամոնտաժում և տարածքի ներդաշնակեցում լանդշաֆտի հետ:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
<u>Հող</u> <u>Ջրային ռեսուրսներ</u>	■ ■	■	Կարճաժամկետ՝ շինարարության իրականացման ընթացքում	Ուղղակի
ա) Ստորգետնյա ջրեր	■	■		
բ) Մակերեսային ջրեր	■ ■	■		

9.2.5. Կոշտ թափոններ

Էլեկտրահաղորդման գծերի որոշ հատվածները կկառուցվեն հեռավոր վայրերում, որտեղ չկան աղբանոցներ: Էլեկտրահաղորդման գծերի միջանցքների զգայունությունը կոշտ թափոնների մասով գնահատվում է միջին: Կոշտ թափոնների առաջացումը կնվազեցվի Շինարար Կապալառուի կողմից թափոնների պատշաճ կառավարման միջոցով: Քիչ քանակությամբ վտանգավոր նյութերը, որոնք են յուղ, վառելիք, ներկ, հեղուկներից աղտոտված հող, կպահվեն «Ալավերդի-2» ենթակայանում, որտեղ կա բավարար տարածք և

պահեստավորման համար պահանջվող հարմարություններ (ծածկված, բետոնապատ, պատնեշավորված), ինչպես հաստատվել է տեղանք կատարած այցի ընթացքում:

Տեսողական ազդեցությունը նվազեցնելու նպատակով հին 110կՎ ՕԳ-երը պետք է ամբողջովին ապամոնտաժվեն, երբ նոր գիծը շահագործման մեջ դրվի: Սա նաև պետք է ներառի այլևս չօգտագործվող հեարանների հիմքերի ապամոնտաժումը: Թափոնների հեռացման համար Շինարար Կապալառուն պետք է Թափոնների Կոմունալ Ծառայությունների Դեպարտամենտի հետ պարզաբանի, թե որտեղ կարող են տեղափոխվել/տեղաբաշխվել թափոնների տարբեր տեսակները: Թափոնների տեղաբաշխումը պետք է կատարվի կոմունալ ծառայությունների կողմից, որտեղ թափոնները պետք է տեսակավորվեն: Շինարարական աղբը պարունակում է փաթեթավորման նյութեր, մնացած մետաղական մասեր, կերամիկա և այլն: ԲԷՑ-ը կրում է պատասխանատվություն ապամոնտաժված նյութերի, որոնք են հենարանները, մալուխները, շինարարական աղբը և այլն, վերամշակման կամ ոչնչացման համար: Վերամշակման նպատակներով մետաղների ջարդոնները կարող են վաճառվել մասնագիտացված ընկերություններին (օրինակ՝ Չարենցավանում տեղակայված ASCE Գրուփ Բաց Բաժնետիրական Ընկերությունը), որոնք էլ կարող են տեղափոխել մետաղների ջարդոնները հենց ապամոնտաժված տարածքից:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Կոշտ թափոններ (շինարարական աշխատանքների հետևանքով և բանվորների կողմից առաջացող)	■ ■	■	Կարճաժամկետ՝ շինարարության իրականացման ընթացքում	Անուղղակի
Հին էլեկտրահաղորդման գծի ապամոնտաժում	■ ■	■	Երկարաժամկետ	Ուղղակի

9.2.6. Աղմուկ

Բանվորները կկրեն ականջների համար պաշտպանիչ սարքեր, որպես իրենց անհատական պաշտպանության միջոցների մի մաս, եթե նրանք ենթարկվեն 80 դԲ-ից (A) բարձր աղմուկի մակարդակի ազդեցության:

Այն տեղերում, որտեղ գծերի միջանցքը գտնվում է գյուղերին կամ տներին մոտ, շինարար կապալառուն պետք է վերահսկի բոլոր սարքավորումներից առաջացող աղմուկի մակարդակը: Բնակիչների համար տեղանքից դուրս գտնվող ամենամոտ ընկալիչների տեղանքում աղմուկի մակարդակը չպետք է գերազանցի 55 դԲ (A) կամ առաջացնի ֆոնային մակարդակների 3 դԲ-ից (A) բարձր աղմուկ (տես նաև Աղյուսակ **Ошибка! Источник ссылки не найден.**): Շինարարության ժամանակ առաջացող տիպի աղմուկը ցածր մակարդակի վրա

պահելու համար՝ գյուղերի կամ տների մոտ շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն ժամը 9.00-ից մինչև 16.00: Աղմուկից տհաճություն կարող է առաջանալ Լավվար և Նոյեմբերյան ՕԳ-երի երկայնքով Ակներ, Հաղպատ, Նեղոց, Փոքր Այրում, Մեծ Այրում, Ճոճկան և Հաղթանակ գյուղերում: Այնուամենայնիվ, շինարարության իրականացման փուլի ժամանակավոր լինելու և էլեկտրահաղորդման գծերի ծրագծի համար սակավ բնակեցված վայրերի ընտրության պատճառով՝ շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում աղմուկի տհաճության մակարդակը ցածր կլինի:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Աղմուկ	■	■	Կարճաժամկետ, շինարարության ընթացքում	Ուղղակի

9.2.7. Օդի որակ

Շինարարության իրականացման փուլի ժամանակավոր լինելու պատճառով, շինարարական աշխատանքների հետևանքով առաջացող ազդեցության մակարդակը օդի որակի վրա ցածր կլինի: Տեխնիկական միջոցները և մեքենաները պարբերաբար կստուգվեն արտանետված նյութերի քանակը նվազեցնելու համար: Շինարարական աշխատանքների արդյունքում առաջացող փոշին կնստեցվի ջրացան մեքենաների միջոցով:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Օդի որակ	■	■	Կարճաժամկետ, շինարարության ընթացքում	Ուղղակի

9.3 Շրջակա միջավայրի վրա ազդեցություններ և դրանց մեղմացումը շահագործման ընթացքում

9.3.1. Բուսական աշխարհ (Ֆլորա)

ԱԳ-ի տարածքում աճող ծառերը և թփուտները ժամանակ առ ժամանակ պետք է կտրվեն՝ բուսականության և հաղորդիչ մալուխների միջև 7.54մ թուլատրելի նվազագույն միջակայքը պահպանելու նպատակով: Եթե գիծը թռիչք ունենա անտառապատ սարավանդերի և հովիտների վրայով, և նվազագույն միջակայքը պահվի, ապա սպասարկման ժամանակ լրացուցիչ ծառահատումների անհրաժեշտություն չի լինի: Միջանցքները մաքրելու համար չպետք է օգտագործվեն բիոցիդներ:

ԱԳ-ի տարածքում հողերի մեծ մասը գյուղատնտեսական հողեր են, որտեղ հնարավոր կլինի մշակել նախկինում աճող մշակաբույսերի մեծ մասը, բացառությամբ անմիջապես հենասյունների տարածքների:

Հենարանների տակ և մոտեցման ճանապարհների երկայնքով աճող բուսականությունը մասամբ կոչնչացվի: ԱԳ-ի տարածքում աճող բուսականությունը ՕԳ-ների շահագործման ընթացքում պարբերաբար մաքրվում է առանց թունաքիմիկատների օգտագործման: Հետևաբար, շահագործման ընթացքում առաջարկվող Ծրագրի ազդեցության մակարդակը էլեկտրահաղորդման գծերի միջանցքի բուսական աշխարհի վրա գնահատվում է ցածր:

Ազդեցությունը	Զգայունությունը	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Բուսական աշխարհ	■	■	Երկարաժամկետ	Ուղղակի

9.3.2. Կենդանական աշխարհ (ֆաունա)

Թռչունները պատկանում են այն խմբին, որոնք ամենաշատն են ազդեցության ենթարկվում ՕԳ-ի պատճառով դրանց շահագործման ընթացքում հիմնականում էլեկտրահարվելու և բախվելու ռիսկի հետևանքով:

Մանրամասն տեղեկատվություն չկա թռչունների չվելու ճանապարհի մասին, բայց գիտենք, որ Հայաստանը չի ընկնում հիմնական միգրացիոն ճանապարհներից ոչ մեկի վրա, որը գտնվում է երկրի արևելքում և արևմուտքում: Միգրացող թռչունները թռչում են 800մ-ից ավել բարձրության վրա: Պլանավորված ՕԳ-ն չի հատվում Թռչունների Պաշտպանության Միջազգային Ասոցիացիայի կողմից որոշված թռչունների համար կարևոր որևէ տարածքի հետ:

Կիրճերի վրայով անցնող էլեկտրահաղորդման գծերը ազդեցություն չեն ունենա հովտի ստորին մասում ծառերի վրա և թփուտերում բնակվող և այս բնակվելու վայրերում թռչող թռչունների վրա, քանի որ նրանք չեն թռչում այն բարձրության վրա, որտեղ կարող են բախվել լարերին: Այնուամենայնիվ, կիրճերի վրայով թռչող մեծ գիշատիչ թռչունները (տես նկար

Նկար 9-3), ինչպես նաև ջրային թռչունները, որոնք են ձկնկուլները, արագիլները, կարապները և հավալուսները կարող են բախվել հաղորդալարերին կամ ամպրոպապաշտպան ձուպաններին: Տարբեր թռչնատեսակներ կարող են օգտագործել հենարանները դրանց վրա թառելու համար, որի հետևանքով էլ կա էլեկտրահարվելու ռիսկ:



Նկար 9-3: Եվրասիական գորշ անգղը ճախրում է Հաղպատ գյուղի արևմտյան հատվածում գտնվող կիրճի վրայով

Թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքի տեղադրումը ավելացնում է ՕԳ-երի տեսանելի լինելը, հատկապես, երբ հաղորդալարը բարակ է: Գերմանիայում թռչունների բնակվելու տարբեր վայրերում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՕԳ-երի հետ թռչունների բախման ռիսկը էականորեն նվազել է մինչև 90%, երբ ՕԳ հաղորդալարերի կամ ամպրոպապաշտպան ճոպանների վրա տեղադրվել են համապատասխան անվտանգության հարմարանքները (օրինակ՝ սև և սպիտակ) (տե՛ս ՊատկերFigure 9-1) (VDE/FNN 2014):




Figure 9-1: սև և սպիտակ կոշտ պլաստիկ ձողեր, որոնք ամրացված են և ձոճվում են ամպրապապաշտպան ճոպանի կամ հաղորդալարի վրա

Հետևաբար, առաջարկվում է տեղադրել այդպիսի հարմարանքներ հաղորդալարերի վրա, համապատասխան հեռավորությունը յուրաքանչյուրի միջև 20-25մ, այն վայրերում, երբ գծերը հատում են կիրճերը: Սա կլինի ԱՀ 3-4, ԱՀ 7-8, ԱՀ 13-14, ԱՀ 19-20, ԱՀ 21-22, ԱՀ 22-23, ԱՀ 24-25, ԱՀ 28-29, և ԱՀ 38-39 (տես Քարտեզ **Ошибка! Источник ссылки не найден.** և Քարտեզ 9-2) միջև:

Թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքները կարող են շինարարության ընթացում ամրացվել հաղորդալարին՝ օգտագործելով գծային մեքենաներ կամ հեծանիվներ էլեկտրական ցանցերի վրա աշխատանք կատարելու համար (տես Պատկեր 9-2):



© VDE/FNN 2014



© VDE/FNN 2014

Պատկեր 9-2: Թռչունների անվտանգության հարմարանքների տեղադրում՝ օգտագործելով գծային մեքենա (ձախ) կամ գծային հեծանիվ (աջ)


«Թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքները» արդեն նախատեսվել են հենարանների նախնական նախագծում, որպեսզի նվազագույնին հասցվի էլեկտրահարման ռիսկը: (Տրակտեբել Էիջինիբինգ 2014): Չժանգոտվող պողպատից ձողաձև շերտերը պետք է հորիզոնական ձևով տեղադրված լինեն պաշտպանական տեղում և տարածվեն ամբողջ մակերևույթով , որտեղ թռչունները նստում են:

Չղջիկների բախումը հաղորդալարերի հետ հավանական չէ կողմնորոշվելու նրանց արտասովոր ունակության շնորհիվ, և այսպիսով սա չնչին հարց է (Ledec et al. 2011, DG Consulting 2013, LLUR 2013):


Հաշվի առնելով բնակվելու վայրերի փոփոխումը կամ դրանց կորցնելու վտանգը, հիմնական ազդեցությունը (եթե այդպիսիք կան) արդեն տեղի կունենա շինարարական փուլում, չնայած նրան, որ արդյունքները կանոնավոր բնույթ են կրում: Սակայն, նաև միջանցքները կարող են կատարել էկոլոգիական ֆունկցիա (օրինակ անտղնաշարավորների և թռչունների համար):

Ազդեցությունը	Զգայունությունը	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
---------------	-----------------	------------------	--------------------------	-------------------

Ազդեցությունը	Զգայունությունը	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/ անուղղակի
Կենդանական աշխարհ	■	■	Երկարաժամկետ	Ուղղակի



Քարտեզ 9-1: Պլանավորված 110կՎ Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի կիրճի վրայով անցնող հատվածները, որտեղ թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքները պետք է տեղադրվեն (նարնջագույն շրջանակ)՝ հարավ-արևմտյան մաս



Քարտեզ 9-2: Պլանավորված 110կՎ Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի կիրճի վրայով անցնող հատվածները, որտեղ թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքները պետք է տեղադրվեն (նարնջագույն շրջանակ)՝ հարավ-արևելյան մաս

9.3.3. Աղմուկ

Պսակային աղմուկի ուժգնության վրա ազդում են եղանակային պայմանները: Խոնավ եղանակը, մառախուղը կամ անձրևը ավելացնում են աղմուկի մակարդակը, սակայն Հետազոտության իրականացման տարածքում այս եղանակային պայմանները գերիշխող չեն: Բնակչության համար ուժի մեջ են հետևյալ թույլատրելի սահմանային արժեքները (Ընդհանուր ՀԲ/ՄՖԿՇՄԱԱ Ուղեցույցներ).

Աղյուսակ 9-1. Բնակչության համար աղմուկի թույլատրելի սահմանային արժեքները (ՀԲ/ՄՖԿ ՇՄԱԱ Ուղեցույցներ)

Ընդունիչ	Մեկ ժամ L_{Aeq} (dB A)	
	Ցերեկային ժամեր 7:00 – 22:00	Գիշերային ժամեր 22:00 – 7:00
Բնակելի, ինստիտուցիոնալ, կրթական	55	45
Արդյունաբերական, առևտրային	70	70

ՕԳ-ից առաջացող աղմուկի ազդեցության մակարդակը լանդշաֆտի վրա՝ գնահատվում է ցածր: Հաղորդիչներից առաջացող աղմուկը (պսակային էֆեկտ)՝ կլինի նվազագույն: Մեղմացուցիչ հատուկ միջոցառումների անհրաժեշտություն չկա:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը (վրա/ կողմից)	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Աղմուկ	■ ■	■	Երկարաժամկետ	Անուղղակի

9.3.4. Կլիմայի փոփոխություն

Գոյություն ունեցող էլեկտրահաղորդման գծի փոխարինումը կարող է զրոյական կամ նույնիսկ դրական ազդեցություն ունենալ կլիմայի փոփոխություն վրա, քանի որ նոր էլեկտրահաղորդման գծի միջոցով կավելանա էլեկտրաէներգիայի օգտագործման արդյունավետությունը:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Կլիմայի փոփոխություն	■ ■ ■	○	Երկարաժամկետ	Անուղղակի

9.3.5. Էլեկտրական և մագնիսական դաշտեր

Հայաստանի էլեկտրական ցանցերի համար անվտանգության գոտիների վերաբերյալ Տեխնիկական կանոնակարգերը սահմանում են 20մ հեռավորություն դրսի հաղորդալարերից 110 կՎ-ի համար (ՀՀԿ 2009)՝ որպես բուֆերային գոտի: Համաշխարհային Բանկը կիրառում է ՀԲ/ՄՖԿ Կատարողական ստանդարտները՝ էլեկտրական և մագնիսական դաշտերից

մարդկանց ճառագայթումը կառավարելու նպատակով: ՀԲ/ՄՖԿ Կատարողական ստանդարտները պահանջում են պահպանել Ոչ իոնացնող ճառագայթումից պաշտպանության միջազգային հանձնաժողովի (ՈԻՃՊՄՀ) կողմից սահմանված սահմանաչափերը, որոնք հետևյալն են.

ՈԻՃՊՄՀ (1998թ.) ճառագայթման ուղեցույցներ էլեկտրական և մագնիսական դաշտերից ընդհանուր հասարակության ճառագայթման վերաբերյալ			
Հաճախականություն	Էլեկտրական դաշտ (Վ/մ)	Մագնիսական դաշտ (μS)	
3-150 կՀց	87	6.25	
10-400 մՀց	28	0.092	
2-300 ԳՀց	61	0.2	

ՈԻՃՊՄՀ ճառագայթման սահմանաչափեր էլեկտրական և մագնիսական դաշտերից ընդհանուր հասարակության ճառագայթման համար			
Հաճախականություն	Էլեկտրական դաշտ (Վ/մ)	Մագնիսական դաշտ (μS)	
50 հց	5000	100	
60 հց	4150	83	

ՕԳ-երը պետք է այնպես նախագծվեն, որ համապատասխանեն ազգային և ՈԻՃՊՄՀ ստանդարտներին, որը որ ավելի խիստ լինի, և, հետևաբար, ՕԳ-երի մոտակայքում բնակվող անձիք պաշտպանված կլինեն էլեկտրական և մագնիսական դաշտերի ճառագայթման բացասական ազդեցություններից:

Բանվորների և առաջարկվող Ծրագրի էլեկտրահաղորդման գծերի մոտակայքում բնակվող անձանց ճառագայթման մակարդակը պետք է այս ուղեցույցներում նշված արժեքներից ցածր լինի:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Էլեկտրական և մագնիսական դաշտեր <ul style="list-style-type: none"> • հասարակության համար • աշխատանքի վայրերում 	<ul style="list-style-type: none"> ■ ■ 	<ul style="list-style-type: none"> ■ ■ 	Երկարա-ժամկետ	Անուղղակի

9.4 Սոցիալական ազդեցությունները և դրանց մեղմացումը շինարարության ընթացքում

9.4.1. Հողօգտագործում և հողի ձեռքբերում

Մոտ 25կմ երկարությամբ պլանավորված գիծը կարող է ազդել հողօգտագործման վրա: Կարող է առաջանալ որոշ մասնավոր հողերի ձեռքբերման անհրաժեշտություն հենարանների տեղակայման, նոր մոտեցման ճանապարհների համար, և մոտ 200-300 մ² հողատարածքի ձեռքբերում անհրաժեշտ կլինի կատարել «Նոյեմբերյան» ենթակայանի մոտակայքում լրացուցիչ սարքավորում տեղադրելու համար: Իրավական առումով դա խնդիր չի ներկայացնում (Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին ՀՀ օրենք, 2006թ.), սակայն կարող է ազդել տեղի բնակչության կյանքի վրա, ժամանակավորապես կամ մշտական փոփոխել հողօգտագործման աշխատքնաները և վնաս պատճառել ծառերին ու մշակաբույսերին:

Որդեգրված ռազմավարությունն է՝ խուսափել կամ, որտեղ հնարավոր է, նվազեցնել ազդեցությունները, ինչպես նաև փոխհատուցում տրամադրել ԱԵԱ-ց այն ազդեցությունների դիմաց, որոնցից անհնար է խուսափել:

Քանի որ էլեկտրահաղորդման գիծը անցնում է օգտագործվող գյուղատնտեսական հողերով և լեռնային արոտավայրերով, այն ազդեցություն կունենա հողօգտագործման վրա: Հենարանների տեղակայման վայրերը որոշելուն պես, կադաստրային տեղեկատվությունը կհստակեցնի ազդակիր հողերի սեփականության կարգավիճակը: Լրացուցիչ կերպով իրավական հարցերով փորձագետները կաջակցեն այն ԱԵԱ-ց, ովքեր առանց գրանցման հողի սեփականատեր են, բայց իրավունք ունեն այդ հողի նկատմամբ:

Ազդեցությունը հողօգտագործման վրա (Գյուղատնտեսություն).

Հետազոտության իրականացման շրջանում, գյուղատնտեսությունը հիմնականում կենտրոնացած է գյուղերի ցածրադիր լեռնալանջերում: Գյուղատնտեսական գործունեությունը ընդգրկում է անասնապահությունից՝ խոշոր եղջերավոր անասուններ, ոչխարներ, խոզեր և այծեր, մինչև կարճ մշակաբույսերի մշակումը՝ կարտոֆիլ, լոլիկ, վարունգ և սմբուկ, ինչպես նաև հացահատիկային մշակաբույսեր, ինչպես օրինակ՝ ցորեն և լոբի: Դաշտերը մասնատված են և հաճախ շատ փոքր: ԱԳ-ի տարածքում գյուղատնտեսությունը հնարավոր կլինի շինարարությունից հեռու:



Նկար 9-4: Պլանավորված միջազրը հատում է գյուղատնտեսության նպատակով օգտագործվող դաշտը, որը գտնվում է Հաղպատ գյուղի հյուսիս-արևմտյան հատվածում

Ազդեցությունը հողօգտագործման վրա (արոտավայրեր).

Արոտավայրերի/լեռնային արոտների մեծ մասը՝ անասնատերերի կողմից օգտագործվող համայնքային հողեր են: Արածեցումը միջանցքի տարածքում կթույլատրվի: Ակնկալվող մշտական, ինչպես նաև ժամանակավոր ազդեցությունները՝ սահմանափակ են: Այնուամենայնիվ, համայնքային հողերի ցանկացած տեսակի օգտագործում կիրականցվի միայն համայնքային հողերը վերահսկող համայնքային իշխանությունների թույլտվությամբ: Արոտավայրերի յուրաքանչյուր մասնավոր սեփականատեր կստանա փոխհատուցում իր արոտավայրեր մուտք գործելու համար ցանկացած մշտական կամ ժամանակավոր ազդեցության հետևանքով:

Ազդեցությունը հողօգտագործման վրա (մոտեցման ճանապարհներ).

Մոտեցման ճանապարհների ազդեցությունը կարող է լինել մշտական, եթե հողօգտագործման փոփոխությունները անդառնալի են, կամ ժամանակավոր, եթե նախկին հողօգտագործումը կարող է շարունակվել շինարարության իրականացումից հետո: Հետևաբար, մոտեցման ճանապարհների մշտական ազդեցության չափը մասնավոր հողերի վրա գնահատվում է որպես սահմանափակ: Այնուամենայնիվ, եթե մոտեցման ճանապարհների շինարարության համար իրականացված մասնավոր հողերի փոփոխությունները անդառնալի են՝ մինևույն օտարման գործընթացներն են կիրառվում ինչպես հենասյուների տարածքների, այնպես էլ բնակավայրերով հողերի համար: Ժամանակավոր ազդեցության դեպքում անհրաժեշտ է տրամադրել լիարժեք փոխհատուցում մշակաբույսերի, ինչպես նաև հողի արտադրողական ծավալների վնասների դիմաց:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը (վրա/ կողմից)	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Հողօգտագործում և հողի ձեռքբերում	■	■	Երկարաժամ-կետ	Ուղղակի

9.4.2. Հարկադիր Վերաբնակեցում

Հարկադիր վերաբնակեցումը ունի մեծ ազդեցություն ազդակիր անձանց ապրուստի վրա և ծրագրի ենթակառուցվածքում այն ամենալուրջ խնդիրներից մեկն է: Այսպիսի վերաբնակեցումից պետք է խուսափել կամ այն նվազագույնի հասցնել: Տների և ապրուստի կորուստը պետք է ամբողջովին փոխհատուցվի:

Համաշխարհային բանկի քաղաքականությունը՝ ԳՔ 4.12 - «Հարկադիր վերաբնակեցում», ապահովում է երաշխիքներ մեղմացնելու այդ ռիսկերը՝ կապված զարգացող ծրագրերի շրջանակներում առաջացող հարկադիր վերաբնակեցման հետ: ԳՔ 4.12 հիմնական նպատակներն են որքան հնարավոր է խուսափել հարկադիր վերաբնակեցումից: Սոցիալական և տնտեսական ազդեցությունները առնվազն պետք է նվազագույնի հասցնել, և ազդակիր անձիք պետք է հնարավորություն ունենան օգտվելու ծրագրի առավելություններից: Ազդեցության ենթարկված անձանց պետք է խորհուրդներ տալ և հնարավորություն ընձեռել մասնակցելու վերաբնակեցման ծրագրի պլանավորման և իրականացման ընթացքին: Վերաբնակեցված անձանց պետք է աջակցել, որպեսզի բարելավեն իրենց ապրուստի միջոցները, կամ առնվազն վերականգնվեն և հասնեն այն մակարդակին, որը եղել էր նախքան ծրագրի սկսելը:

Հարկադիր վերաբնակեցման բացասական ազդեցությունից խուսափելու համար, ՀԲ քաղաքականությունը պահանջում է, որպեսզի

- Ազդակիր անձիք տեղեկացված լինեն վերաբնակեցման վերաբերյալ իրենց այլընտրանքների և իրավունքների մասին:
- Նրանց խորհուրդ տրվի և տեղեկատվություն տրամադրվի վերաբնակեցման հնարավոր այլընտրանքների մասին:
- Շտապ և ամբողջովին տրամադրվի գույքի կորստի համար դրամական փոխհատուցում:
- Աջակցություն ցուցաբերվի, օրինակ՝ վերաբնակեցման ժամանակ տեղափոխման համար դրամական օժանդակություններ տրամադրվեն:
- Աջակցություն ցուցաբերվի, ի լրումն փոխհատուցման, օրինակ՝ վարկային գիծ տրամադրվի, անցկացվի ուսուցում և աշխատանքի տեղավորման հնարավորություն ընձեռվի:

- Վերաբնակեցման ենթարկված խոցելի անձանց, օրինակ՝ հաշմանդամներին, ծերերին, կանանց, այրիներին և երեխաներին, պետք է տրամադրվի հատուկ սոցիալական աջակցություն:

Վերաբնակեցման հետևանքով առաջացած հնարավոր ազդեցությունը պետք է վերլուծվի՝ դիտարկելով արբանյակի միջոցով կատարված նկարները և տեղանքում կատարած այցելությունների արդյունքները:

ՕԳ-ի մասով բոլոր աշխատանքները պետք է կատարվեն համաձայն ՎՔՇ-ի և ՎԳՊ-ի, եթե անհրաժեշտ է: Առավելություն է համարվում հնարավորիս չափով վերաբնակեցումից խուսափելը: Հետևաբար, տեխնիկական տեսանկյունից ելնելով, կլինեն շրջանցումներ հնարավոր վերաբնակեցումից խուսափելու համար (տես առաջարկվող շրջանցումները Հատված 6.2):

Ազդեցություն (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը (վրա/ կողմից)	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Տների և կենսական միջոցների կորուստ Հարկադիր վերաբնակեցում	■ ■	■ եթե կա	Երկարաժամկետ	Ուղղակի

9.4.3. Պատմական և Մշակութային վայրեր

Համաձայն Մշակույթի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների անվտանգության գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության, առաջարկվող գծի միջանցքում չկան ոչ մի պատմական կամ մշակութային վայրեր (տես Հատված **Ошибка! Источник ссылки не найден.**- Հավելված I).

Տեղանքի այցելությունների ժամանակ և արբանյակի միջոցով կատարված նկարներով ուսումնասիրություններ են կատարվել: Հաշվի են առնվել միայն այն տեղանքները, որոնք գտնվում են գոյություն ունեցող և պլանավորված գծերի հարևանությամբ (500մ հեռավորությամբ): Հիմնական մշակութային վայրերը, օրինակ մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող վանքերը, չեն նշվելու այստեղ, որովհետև դրանք ուղղակիորեն ազդեցության չեն ենթարկվելու գծի շինարարության ժամանակ:

Պլանավորված 110կՎ ՕԳ-ի միջանցքը հատում անցնում է Հաղպատ գյուղը, որտեղ գտնվում է զբոսաշրջության համար ազգային կարևորություն ունեցող Հաղպատ վանքը: Այնուամենայնիվ, վանքը ուղղակիորեն չի ենթարկվի ազդեցության, քանի որ գծի միջանցքը ունի ավելի քան 450մ հեռավորություն վանքից (տես Նկար 9-6): Հենարանների վիզուալ ազդեցությունները նվազեցնելու համար հին 110կՎ ՕԳ-ն ամբողջովին կապամոնտաժվի: Սա ներառելու է այլևս չօգտագործվող հենարանների հիմքերի ապամոնտաժումը և

տեղանքից հեռացումը: Այսպիսով, հենարանների քանակությունը կմնա քիչ թե շատ նույնը:



Նկար 9-5: Հաղպատի վանքը անվտաղ հեռավորության վրա է պլանավորված միջանցքից (լուսանկարված է առաջարկված միջանցքից)

Տեղանք այցելելու ժամանակ հասկոբոշվել են երկու մշակութային վայրեր, որոնք գտնվում են գույություն ունեցող կամ նոր 110կՎ ՕԳ-ի ԱԳ-ում.

- Հաղպատ գյուղի հյուսիս-արևելքում ԱՀ 12 և ԱՀ 13 միջև գույություն ունեցող 110կՎ ՕԳ-ի միջանցքում կա մշակութային վայր (Խաչքար տես Նկար 9-7) Շինարարության ընթացքում և հին գծի ապամոնտաժման ժամանակ այս մշակութային վայրը որևէ կերպ չի կարող վնասվել:



Նկար 9-6: Խաչքար գործող 110կՎ ՕԳ-ի միջանցքում, Հաղպատից հյուսիս-արևելք

- ԱՀ 15 և ԱՀ 16 միջև եկեղեցու ավերակները և մոտակայքում գտնվող գերեզմանոցը առաջարկվող 110կՎ ՕԳ-երի միջանցքում են (տես Նկար 9-8): Եթե հենարանը պետք է տեղադրվի այդ մշակութային վայրի մոտ, ապա պետք է խորհրդակցել Մշակույթի նախարարության հետ:



Նկար 9-7: Եկեղեցու ավերակները և մոտակայքում գտնվող գերեզմանոցը առաջարկվող միջանցքում են

Ոչ մի ֆիզիկական մշակութային արժեք չկա ԱԳ-ում: Ոչ մի այլ մշակութային սեփականություն, ոչ էլ որևէ տեղեկատվություն հնագիտական հավանական վայրերի մասին չկա ԱԳ-ում, ըստ Մշակույթի նախարարության:

Ինչ վերաբերում է պատմական և մշակութային վայրերին, որոնք հավանաբար հատվում են գծի միջանցքով, ԲԷՑ-ը պետք է պլանավորված հենարանների տեղակայման վերաբերյալ տվյալներ ուղարկի ՀՀ Մշակույթի նախարարությանը, որն էլ պետք է պատրաստի ազդակիր տեղանքների մասին համապատասխան հաշվետվություն: Անհրաժեշտության դեպքում ԲԷՑ-ը հետո կառաջարկի հենարանների տեղափոխում, որը պետք է հաստատվի Մշակույթի նախարարության կողմից: Սա նախաշինարարական ուսումնասիրություն է, համաձայն ազգային օրենքի:

Պատահական Գտածոների Ընթացակարգը

Պատմական և մշակութային վայրերի պատահական բացահայտման դեպքում պետք է կիրառվի Պատահական գտածոների ընթացակարգը: Պատահական գտածոների դեպքում շինարարությունը պետք է անմիջապես դադարեցվի և պետք է այդ մասին տեղեկացվի Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությանը/Մշակույթի նախարարությանը՝ հետագա քայլերի համաձայնեցման համար (համաձայն Հայաստանի օրենքի):

Պատահական գտածոների ընթացակարգը կներառի.

- Գտածոյի վայրում շինարարական աշխատանքների անհապաղ դադարեցում:
- Ծանուցում պատասխանատու տեղական մարմիններին և Մշակույթի նախարարությանը:
- Գտածոների գնահատում պետք է իրականացվի Պատմության և մշակույթի հուշարձանների/Մշակույթի նախարարության հնեաբանների կողմից:
- Պատահական գտածոների հետ վարվելու վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի և գտածոների կառավարման վերաբերյալ որոշման կատարումը իրականացվի պատասխանատու մարմինների կողմից:

- Շինարարական աշխատանքները կարող են վերսկսվել միայն ժառանգության պահպանման համար տեղական պատասխանատու մարմինների և Մշակույթի նախարարության գրավոր թույլտվությունը ստանալուց հետո:

Պատահական գտածոների ընթացակարգի իրականացման համար ոչ մի ծախս չպետք է առաջանա Շինարար կապալառուի համար:

Ազդեցություն (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը (վրա/ կողմից)	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/ անուղղակի
Պատմական և մշակութային վայրեր	■■■	■	Կարճաժամկետ, շինարարության ընթացքում. Երկարաժամկետ, հենարանների ֆիզիկական առկայության դեպքում	Ուղղակի և անուղղակի գծի ֆիզիկական առկայության դեպքում (տեսողական ասպեկտ)

9.4.4. Առողջություն և Անվտանգություն

ԲԷՑ-ում, բարձր լարման ենթակայաններում և ՕԳ-երի անվտանգության բոլոր ասպեկտների համար պատասխանատու է Անվտանգության տեխնիկայի և հուսալիության ծառայությունը:

Պլանավորված ՕԳ-երի շինարարության ընթացքում առողջության և անվտանգության վրա ուղղակի ազդեցությունները կարող են առաջանալ տարբեր գործոններից, ինչպիսիք են՝ շինարարության ընթացքում էլեկտրահարումը, սանիտարական վիճակը, բանվորների և բնակչության շփման արդյունքում սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, հատկապես ՄԻԱՎ/ԴԻԱՎ և այլն:

Քանի որ շինարարությունը կիրականացվի այնպիսի միջավայրում, որտեղ մոտակայքում առկա են շահագործվող այլ էլեկտրահաղորդման գծեր, էլեկտրահարման ռիսկը որոշ տարածքներում կարող է աճել, հատկապես այն տարածքներում, որտեղ գծերի միջև հեռավորությունը փոքր է, կամ որտեղ պլանավորվում է գոյություն ունեցող էլեկտրահաղորդման գծերի հատում:

Բանվորների առողջության և անվտանգության վրա հնարավոր ազդեցությունը կարող է նաև կապված լինել էլեկտրահաղորդման գծերի շինարարության ընթացքում աշխատանքային պատահարների կամ խմելու ջրի կամ սննդամթերքի աղտոտման հետ:

Բանվորների ճամբարները պետք է բավարարեն համապատասխան հարմարությունների IFC/ՎՋԵԲ պահանջներին, օրինակ՝ պետք է լինի սանիտարական օբյեկտների բավարար քանակություն, բժշկական հաստատություններ, հանրակացարանի կոմունալ հարմարություններ և այլն:

Առողջության և անվտանգության վրա անուղղակի ազդեցությունները կապված են Հայաստանի էներգետիկ ցանցի կայունության և աշխատանքի հետ: Ծրագրի անուղղակի ազդեցությունը միայն աստիճանաբար կավելացնի Ծրագրին չառնչվող գոյություն ունեցող ռիսկերը, օրինակ՝ տարրերային աղետների դեպքում:

Շինարար Կապալառուն կմշակի համապատասխան Առողջապահության, անվտանգության և շրջակա միջավայրի կառավարման համակարգ (ԱԱՇՄՆ) և կիրականացնի այն շինարարության իրականացման փուլում: Առողջապահության և անվտանգության ղեկավարը և Շինարար Կապալառուն կկատարեն իրենց ծառայողական պարտականությունները շինարարության փուլի ամբողջ ընթացքում՝ ցանկացած ժամանակ:

Ազդեցություն (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը (վրա/ կողմից)	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Առողջություն և անվտանգություն	■ ■	■	Կարճաժամկետ, շինարարության ընթացքում.	Ուղղակի

9.4.5. Ենթակառուցվածքներ

Ճանապարհները հատելու դեպքում առաջացող երթևեկության վրա բացասական ազդեցությունից խուսափելու նպատակով կպահանջվի հիմքի մաքրում: Երթևեկության պատշաճ կառավարումը թույլ կտա հնարավորինս խուսափել երթևեկության վրա բացասական ազդեցություններից:

Այնտեղ, որտեղ նոր 110կՎ ՕԳ-երը անցնում են գործող գծերին (35կՎ, 110կՎ և 220կՎ) զուգահեռ, նվազագույն հեռավորություն պետք է ընտրվի, որը կապահովի երկու զուգահեռ անցնող գծերի ԱԳ-ն: Այնտեղ, որտեղ գործող գծերը հատվում են նոր 110կՎ ՕԳ-երի հետ, համապատասխան նախազգուշական միջոցառումներ պետք է ձեռնարկվեն և հաղորդալարերի միջև համապատասխան նվազագույն հեռավորությունը պետք է պահպանվի (>4 համաձայն Տրակտեբել Էինջինիրինգ ընկերության 2014):

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը (վրա/ կողմից)	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Ենթակառուցվածք	■	■	Կարճաժամկետ՝ շինարարության իրականացման ընթացքում	Ուղղակի

Համաձայն ԲԷՑ-ի և Տրակտեբել Էինջինիրինգ ընկերության (2014), շինարարության ընթացքում գոյություն ունեցող գծերի կառուցման համար ցանցից անջատում չի պահանջվի: Այսպիսով, շինարարական աշխատանքների ժամանակ էլեկտրաէներգիայի անջատում տեղի չի ունենա:

9.4.6. Գենդերային ասպեկտներ

Էլեկտրահաղորդման գծերի շինարարությունը կարող է մեծացնել գոյություն ունեցող գենդերային անհավասարությունը, քանի որ շինարարական աշխատանքներից հիմնականում կօգտվեն տղամարդիկ, և փոխհատուցման վճարների հասանելիությունը և դանց նկատմամբ վերահսկողությունը, ամենայն հավանականությամբ, կլինի տղամարդկանց, այլ ոչ թե կանանց տրամադրության տակ, ինչը մեծացնում է ընտանիքի ավելի քիչ օգտվելու հավանականությունը:

Տարածքներում զգալի տոկոս են կազմում միայնակ կանանց կողմից ղեկավարվող տնտեսությունները, որոնք ամենախոցելի անձանց թվին են դասվում: Վերաբնակեցման հարցերի առաջացման դեպքում, միայնակ կանանց կողմից ղեկավարվող տնտեսությունների համար կկիրառվի նույն ընթացակարգը, ինչ խոցելի անձանց համար:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը (վրա/ կողմից)	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Գենդերային ասպեկտներ	■ ■	■ թե կա	Կարճաժամկետ	Անուղղակի

9.4.7. Խոցելի անձիք

Աղքատության մակարդակը Լոռու մարզում մոտ 45.4 % է, իսկ Տավուշի մարզում՝ 26,7%, ներառյալ քաղաքային տարածքները, որտեղ ակնկալվում է, որ աղքատության մակարդակը ավելի ցածր պետք է լինի: Հեռավոր և 1500 մ-ից բարձրության վրա գտնվող տարածքներում, աղքատության մակարդակը, ընդհանուր առմամբ, զգալիորեն ավելի բարձր է: Մարդկանց համար կենսապահովման միջոց է հանդիսանում բնական գյուղատնտեսությունը և հովվությունը: Աղքատների մեծ մասը խոցելի են տենդենցների, ցնցումների և սեզոնայնության առումով, ինչը նշանակում է, որ կլիմայի փոփոխության պատճառով տեղումների քանակի նվազումը, անսպասելի դեպքերը, ինչպես օրինակ երկրաշարժերը, կամ պարզապես ձմռան սեզոնի ավարտի մոտենալը, նրանց հասցնում են ապրուստի միջոցների կորստի եզրին:

Խոցելի անձանց վրա հնարավոր ազդեցությունները կառաջանան միայն էլեկտրահաղորդման գծերի նոր հատվածների շինարարության ընթացքում: Հնարավոր ազդեցությունները, ինչպես օրինակ հողի օտարումը կամ մշակաբույսերի վնասումը, կարող են խոցելի անձանց ապրուստի մակարդակը իջեցնել մինչև նրանց ապրուստի խիստ վտանգվածության աստիճանը: Խոցելի անձանց մեծ մասը չունեն հողի նկատմամբ իրավունքներ կամ շատ քիչ հող ունեն: Այդ դեպքում, հենարանի հիմքի մակերեսի կորուստն արդեն կարող է հանգեցնել խոցելիության: Շատ դեպքերում մտահոգության առարկա են հանդիսանում նաև ապահով խմելու ջուրը, բժշկական օգնությունը, կրթությունը, և այլն:

Սոցիալական կապիտալի, ինչպես նաև ինստիտուտների և իրավական օգնության հանդեպ վստահության պակասը մարդկանց իջեցնում է աղքատության սահմանից ցածր, հատկապես խոցելի դարձնելով փոխհատուցման և վերաբնակեցման վճարների առումով անարդարությունների պատճառով: Ապրուստի լիարժեք վերականգնումը, ինչպես որ առաջարկվում է ԳՔ 4.12-ում, նշանակում է որ անձիք, բացի կանխիկ փոխհատուցումից, աջակցություն են ստանում հետագա ապրուստի ստեղծման համար: Առաջարկվում է պաշտոնական համագործակցության իրականացում մասնագիտացված ՀԿ-ների հետ:

Ինչպես նշված է վերևում, խոցելի անձիք բացահայտ չեն անդրադառնում իրենց դժգոհություններին/բողոքներին, և հաճախ չեն դիմում իրավական օգնության, չնայած գիտակցում են, որ իրավիճակը անարդար է: Առաջարկվում է, որ շինարարության իրականացման ընթացքում սոցիալական հետազոտողը՝ բողոքների հետ կապված մոնիթորինգի այցելության ժամանակ տուժած տնտեսությունների հետ (որոնք շատ քիչ են այս ծրագրում) առանձին ուսումնասիրի հնարավոր դժգոհությունները: Հակառակ դեպքում, շատ հիմնավորված բողոքներ երբեք չեն ներկայացվի և, հետևաբար, անհնար կլինի անդրադառնալ դրանց՝ կանխելով ապրուստի լիարժեք վերականգնումը, ինչի արդյունքում էլ կոտնահարվեն երաշխիքների ապահովման սկզբունքները:

Աղքատության սահմանից ցածր գտնվող տնտեսությունները և այլ կերպ խոցելի տնտեսությունները կարող են կորցնել իրենց ապրուստի միջոցը, եթե տուժեն հողի կորուստի կամ տեղափոխության ազդեցության պատճառով: Այդ դեպքում պետք է իրականացվի ապրուստին աջակցության հատուկ ծրագիր:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը (վրա/ կողմից)	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Խոցելի անձիք	■■■	■ դեռևս հայտնի չի	Երկարաժամկետ	Ուղղակի

9.4.8. Տեղական աշխատուժ

Շինարարության իրականացման փուլում հենարանների շինարարության և էլեկտրահաղորման լարերի անցկացման աշխատանքների համար կվարձվի տեղական աշխատուժ: Դա կնպաստի չափազանց անհրաժեշտ դրամական եկամուտների ստացմանը հեռավոր գյուղական տարածքներում և քաղաքներում, որտեղ արտադրական բազան քայքայվել է: Այնուամենայնիվ, եկամուտների ձևավորման հնարավորությունները երկարատև չեն:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Տեղական աշխատուժ	■■■	+	Կարճաժամկետ՝ սահմանափակվող շինարարության իրականացման փուլով	Ուղղակի

9.5 Սոցիալական ազդեցությունները և դրնաց մեղմացումը շահագործման ընթացքում

9.5.1. Հողօգտագործում

Յուրաքանչյուր նոր հենարանի համար պետք է օտարվի մոտ 100 մ² տարածք և մասամբ կնքվի հենարանների հիմքերի համար, որպես մշտական ազդեցություն (շինարարության իրականացման փուլի): Մշտական մոտեցման ճանապարհներ պետք է կառուցվեն տեխնիկական սպասարկման համար: Էլեկտրահաղորդման գծերի միջանցքների մնացած հողերը կարող են օգտագործվել որպես գյուղատնտեսական հողեր կամ արոտավայրեր՝ առանց սահմանափակման: Չի ակնկալվում, որ տեխնիկական սպասարկման աշխատանքները կունենան սոցիալական մեծ ազդեցություն: Փոքր ազդեցությունները, ինչպես օրինակ տեխնիկական սպասարկման աշխատանքների ընթացքում մշակաբույսերի վնասումը, պետք է փոխհատուցվեն:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը (վրա/ կողմից)	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Հողօգտագործում	■	■	Երկարաժամկետ	Ուղղակի

9.5.2. Էլեկտրաէներգիայի մատակարարում

Գործող էլեկտրահաղորդման գծերի քայքայված վիճակի պատճառով կարող են առաջանալ պարապուրդներ: Էլեկտրաէներգիայի մատակարարման կայունության աճը, հատկապես, եթե ակնկալվում է պահանջարկի աճ՝ հանդիսանում է Ծրագրի տեղական դրական ազդեցություն: Էներգացանցում էլեկտրահաղորդման արդյունավետության աճը/հաղորդման կորուստների նվազումը՝ կլինի տարածաշրջանային դրական գործոն:

Ազդեցությունը (կողմից/վրա)	Զգայունությունը	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի
Էներգամատակարարում	■■■	+ ++	Երկարաժամկետ	Ուղղակի

9.6. Ազդեցությունների ամփոփ ցանկ

Աղյուսակ 9-2. Նախագծման փուլի ազդեցությունների ամփոփ ցանկ

Ազդեցություն	Զգայունություն	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/ անուղղակի
Լանդշաֆտ	■ ■	■	Երկարաժամկետ	Ուղղակի
Մոտեցնող ճանապարհներ	■ ■	■ ■	Երկարաժամկետ	Ուղղակի

Աղյուսակ 9-3. Շինարարության փուլի ազդեցությունների ամփոփ ցանկ

Ազդեցություն	Զգայունություն	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/ անուղղակի
Լանդշաֆտ	■	■	Երկարաժամկետ՝ հենարանների ֆիզիկական առկայության պատճառով	Ուղղակի՝ Էլեկտրահաղորդման գծերի ֆիզիկական առկայության պատճառով
Ֆլորա և ֆաունա	■ ■	■ ■	Երկարաժամկետ	Ուղղակի
Հողի էրոզիա	■ ■	■	Երկարաժամկետ	Ուղղակի
<u>Հող</u>	■ ■	■	Կարճաժամկետ շինարարության ընթացքում	Ուղղակի
<u>Ջրային ռեսուրսներ</u>				
a) Ստորգետնյա ջրեր	■	■		
b) Մակերևութային ջրեր	■ ■	■		
Պինդ թափոններ (առաջացած շին. Փուլում և բանվորների կողմից)	■ ■	■	Կարճաժամկետ շինարարության ընթացքում	Անուղղակի

Ազդեցություն	Զգայունություն	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/ անուղղակի
Հին ՕԳ-ի ապամոնտաժում		■	Երկարաժամկետ	Ուղղակի
Աղմուկ	■	■	Կարճաժամկետ շին. ընթացքում	Ուղղակի
Օդի որակ	■	■	Կարճաժամկետ շին. ընթացքում	Ուղղակի
Հողօգտագործում և հողերի ձեռքբերում	■	■	Երկարաժամկետ	Ուղղակի
Տների և կենսամակարդակի կորուստ Պարտադրված վերաբնակեցում	■■	■ եթե կա	Երկարաժամկետ	Ուղղակի
Պատմական և մշակութային վայրեր	■■■	■	Կարճաժամկետ շինարարության ընթացքում և երկարաժամկետ հենասյունների առկայությունից	Ուղղակի և անուղղակի՝ Էլեկտրահաղորդման գծի ֆիզիկական առկայության պատճառով (վիզուալ ասպեկտներ)
Առողջություն և անվտանգություն	■■	■	Կարճաժամկետ շին. ընթացքում	Ուղղակի
Ենթակառուցվածք	■	■	Կարճաժամկետ՝ շինարարության իրականացման ընթացքում	Ուղղակի
Գենդերային ասպեկտներ	■■	■ եթե կա	Կարճաժամկետ շինարարության ընթացքում	Անուղղակի
Խոցելի մարդիկ	■■■	■ դեռևս հայտնի չէ	Երկարաժամկետ	Ուղղակի
Տեղական աշխատուժ	■■■	+	Կարճաժամկետ՝ շինարարության ընթացքում	Ուղղակի

Աղյուսակ 9-4: Շահագործման փուլի ազդեցությունների ամփոփ ցանկ

Ազդեցություն	Զգայունություն	Ազդեցության չափը	Ազդեցության տևողությունը	Ուղղակի/անուղղակի t
Բուսական աշխարհ	■	■	Երկարաժամկետ	Ուղղակի
Կենդանական աշխարհ	■	■	Երկարաժամկետ	Ուղղակի
Աղմուկ	■■	■	Երկարաժամկետ	Անուղղակի
Կլիմայի փոփոխություն	■■■	○	Երկարաժամկետ	Անուղղակի
Էլեկտրական և մագնիսական դաշտեր հանրային աշխատատեղերի	■ ■	■ ■	Երկարաժամկետ	Անուղղակի
Հողի օգտագործում	■	■	Երկարաժամկետ	Ուղղակի
Էլեկտրամատակարարում	■■■	+ ++	Երկարաժամկետ	Ուղղակի

Ազդեցության աստիճանը

- = բարձր
- = միջին
- = ցածր
- = զրոյական
- +
- ++ = դրական՝ տեղական մակարդակում
- = դրական՝ մարզային մակարդակում

Զգայունության աստիճանը

- = բարձր
- = միջին
- = ցածր

10. Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլան

ՇՄՍԿՊ-ն սահմանում է այս Հաշվետվության մեջ նշված կառավարման և մեղմացուցիչ միջոցառումների միջև կարևոր կապը, ինչպես նաև միջոցառումների պատշաճ իրականացումը Ծրագրի նախագծման, շինարարության և շահագործման փուլերում: Այն ամփոփում է ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները և ապահովում է մանրամասներ նշված միջոցառումների, այդ ազդեցությունների ոլորտում պատասխանատվության, մեղմացուցիչ միջոցառումների արժեքի, ինչպես նաև միջոցառումների իրականացման և արդյունավետության մոնիթորինգի և վերահսկման եղանակների վերաբերյալ:

ՇՄՍԿՊ-ն կհանդիսանա Լավվար և Նոյեմբերյան ՕԳ-երի փոխարինման համար մրցութային փաստաթղթերի անբաժանելի մասը: ԲԷՑ-ը ընդհանուր պատասխանատվություն կկրի ՇՄՍԿՊ-ի իրականացման համար և կարող է հզորացնել աշխատանքների բնապահպանական և սոցիալական մոնիթորինգի իր ներքին կարողությունները՝ աշխատանքների տեխնիկական վերահսկման համար բարձր որակավորմամբ խորհրդատուների ծառայություններ վարձելու միջոցով, որը կներառի շինարարական աշխատանքներ մատուցողների կողմից ՇՄՍԿՊ-ի պահանջների պահպանման վերահսկողությունը:

Ամփոփման հիման վրա կարելի է եզրակացնել, որ փոխարինման համար առաջարկվող 110կՎ Լավվար և Նոյեմբերյան ՕԳ-երը **կարող են կառուցվել և շահագործվել առանց էկոլոգիական և սոցիալական միջավայրի վրա զգալի բացասական ազդեցությունների**, եթե իրականացվեն ՇՄՍԿՊ-ում առաջարկվող բոլոր մեղմացուցիչ միջոցառումները:

10.1. Մեղմացուցիչ միջոցառումներ

10.1.1. Նախագծման և նախաշինարարական փուլի մեղմացուցիչ միջոցառումներ

Աղյուսակ 10-1. Նախագծման և նախաշինարարական փուլի համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Նախագծման փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ. Էլեկտրահաղորդման գծերի ծրագծեր, մոտեցման ճանապարհներ		
Մեղմացուցիչ միջոցառումներ	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Մինչ շինարարությունն սկսելը թռչունների և չղջիկների վերաբերյալ հետազոտություն ԱԳ-ում:	Անտառտնտեսության վարչություն, Վայրի Բնություն ՀԿ, տեղական ներկայացուցիչներ	20,000 հետազոտության համար
ՕԳ-ի միջանցքի և/կամ հենարանների տեղափոխման առաջարկվող շրջանցների իրականացում որևէ ֆիզիկական վերաբնակեցումից խուսափելու նպատակով (տես՝ Բաժին 6.2)	Նախագծման կապալառու Շինարարության կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Թռչունների համար բարենպաստ հենարանի նախագծում (օր. թռչունների անվտանգության հարմարանքների տեղադրում)		
Հենարանների նախագծի հարմարեցում հետազոտության իրականացման տարածքում սեյսմիկ ռիսկի մակարդակին		
Երկար թռիչքով հենարանների օգտագործում հովիտների վրայով անցնելու համար՝ այսպիսով նվազեցնելով ծառահատումները անտառապատ տարածքներում		
Կատարել շրջանցում մշակույթային ժառանգություն ունեցող վայրերը հատելու դեպքում, որը պետք է որոշվի Մշակույթի նախարարության հետ խորհրդակցելով:		
Հենարանների համար գետամերձ տարածքներից պահել 100մ հեռավորություն, եթե հնարավոր է (առնվազն 50)		
Հենարաններ չպետք է տեղադրվեն պտղատու և խաղողի այգիներում և այլ		
Հենարանները տեղադրել գոյություն ունեցող ճանապարհների մոտ նոր մոտեցման ճանապարհների/ ուղիների կառուցումը նվազագույնի հասցնելու համար		
Տեղեկացնել պատմամշակութային արժեքների պաշտպանության գործակալությանը/		

Նախագծման փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ. Էլեկտրահաղորդման գծերի ծրագծեր, մոտեցման ճանապարհներ		
Մեղմացուցիչ միջոցառումներ	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Մշակույթի նախարարությանը կառուցվող հենարանների կամ մոտեցման ճանապարհների մասին պատմամաշակութային վայրերը հատելուց խուսափելու համար		
Մինչ հողի ուսումնասիրությունը՝ ԱԵԱ-ց տեղեկացում, որ այգիները/ծառերը կարող են տուժել		
Մինչ հողի ուսումնասիրությունը՝ ԱԵԱ-ց տեղեկացում փոխհատուցման մեխանիզմների վերաբերյալ		
Փոխհատուցման վճարում հողի ուսումնասիրության ընթացքում առաջացած բոլոր վնասների դիմաց, համաձայն Ծրագրի ՎՔՇ-ի		

10.1.2. Շինարարական փուլի համար մեղմացուցիչ միջոցառումներ

Աղյուսակ9-2: Շինարարական աշխատանքների ընթացքում ֆլորայի և ֆաունայի պաշտպանության համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ՝ ֆլորա և ֆաունա		
Մեղմացուցիչ միջոցառումներ (հաշվի առնելով ՇՄԱԱ- Ուղեցույցները, Էլեկտրաէներգիայի տեղափոխում և բաշխում)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Անտառային տարածքներում ձվադրման/բազմացման սեզոնի ընթացքում (մարտ-հունիս) խուսափել շինարարական աշխատանքներից	Շինարարության Կապալառու	Ներառված է շինարարական ծախսերում
Շրջակա միջավայրի մասով տեղանքի ղեկավարի հետ ապամոնտաժման համար անհրաժեշտ տարածքների որոշում ծառահատումը կանխարգելելու համար		
Շինարարական աշխատանքների ժամանակ խուսափել անվտանգության գոտու ամբողջական մաքրումից		
Շինարարության տարածքներին մոտ տեղակայված մեծ ծառերի պաշտպանություն փայտե պատնեշների միջոցով, չնախատեսված ոչնչացումից խուսափելու նպատակով		
Մեծ ծառերի արմատային գոտին պաշտպանել ծանր տեխնիկայից կամ փորված հողի ծանրությունից		
Հատկորոշել ապամոնտաժման տարածքի չափսը և մոտեցման ճանապարհների ծրագիծը		
Արգելել բույսերի հավաքումը և որսը, բանվորներին կարգադրել չանհանգստացնել կենդանիներին, թույլ		

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ՝ ֆյուրա և ֆաունա		
Մեղմացուցիչ միջոցառումներ (հաշվի առնելով ՇՄԱԱ- Ուղեցույցները, Էլեկտրաէներգիայի տեղափոխում և բաշխում)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
չտալ մուտք գործել անտառային տարածք		
Հնարավորինս օգտագործել գոյություն ունեցող մոտեցման ճանապարհները, անհրաժեշտության դեպքում անտառային տարածքներում վերականգնել գոյություն ունեցող մոտեցման ճանապարհները		
Անհրաժեշտության դեպքում անվտանգության գոտու երկայնքով պետք է հասանելի լինեն առանց մոտեցման ճանապարհների հենարանները՝ ծառահատումը նվազագույնի հասցնելու համար		
Նոր մոտեցման ճանապարհների մանրամասն նախագիծ, խուսափելու համար մոտեցման ճանապարհների կողմից առուների, գետերի հատումը		
Էլեկտրահաղորդման գծերի միջանցքներ արտաքին հողի ներխուժման նվազեցում, ինչպես նաև ներխուժման նպատակով օտար բույսերի ներմուծումից խուսափում		
Առաջարկվում է հաղորդալարերի վրա տեղադրել թռչունների համար նախատեսված հստակ երևացող անվտանգության հարմարանքներ (օրինակ՝ սև և սպիտակ), որտեղ գիծը հատում է կիրճերը (տես Հատված Ошибка! Источник ссылки не найден.)	Շինարարության Կապալառու	45,000 տեղադրման համար
Անտառային ծառերի վերատնկման համար կառավարման պլանի իրականացում՝ հաստատված Անտառտնտեսության վարչության կողմից, ներառյալ կրկնակի անգամ մեծ ծառահատված տարածքներից, ինչպես նաև այդ տարածքներում տեղանքին հատուկ ծառերի նմուշների վերատնկում, տեղական ծառերի տնկումը իրականացվում է տեղանքին մոտ, որտեղ կատարվել են ծառահատումներ (օրինակ նոսրացած անտառային տարածքում) հետևյալ հարաբերակցությամբ՝ 2 հատ նոր ծառ 1 հատված ծառի դիմաց, համաձայն ազգային օրենքի:	Շինարարության Կապալառու	Վերատնկման համար ծախսերը կորոշվեն հենարանի վայրի վերջնական ուսումնասիրությունից հետո
Կատարել ճշգրիտ գրառումներ բոլոր հատված ծառերի վերաբերյալ	Անտառտնտեսության վարչություն	
Բոլոր տարածքներում, վերանորոգվող մոտեցման ճանապարհներում, բանվորների համար նախատեսված ճամբարներում, ապամոնտաժման համար տարածքներում բուսական ծածկույթի վերականգնում տեղանքին բնորոշ և հարմարվող բույսերի տեսակներով (հետևյալ հարաբերակցությամբ՝ 2 հատ նոր ծառ 1 հատված ծառի դիմաց, համաձայն ազգային օրենքի)		

Աղյուսակ 9-3. Շինարարական աշխատանքների ընթացքում էրոզիայի վերահսկման համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ` էրոզիա		
Մեղմացուցիչ միջոցառումներ (հաշվի առնելով ՇՄԱԱ- Ուղեցույցները, Էլեկտրաէներգիայի տեղափոխում և բաշխում)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Նվազեցնել հենարանների տեղակայման վայրերից հողի վերին շորտ հեռացումը	Շինարարության Կապալառու	Ներառված է շինարարական ծախսերում
Հենարանների մոնտաժման աշխատանքներն ավարտելուց հետո հողի վերին շերտը բերել իր սկզբնական վիճակին		
Հենարանների տեղակայման վայրերում ցանել/վերատնկել տեղական խոցի/թփի տեսակներ		
Նոր մոտեցման ճանապարհների համար տեղերի զգույշ ընտրություն (եթե անհրաժեշտ է)		
Մոտեցման ճանապարհներում իրականացնել էրոզիան կանխարգելող միջոցառումներ		
Խուսափել սահող գրունտի նստվածքներից կտրուկ լանջերի վրա կամ գետերի և ջրահեռացման ջրանցքների մոտ		
Պաշտպանել ավելցուկային գրունտները հոսքից		
Ավելցուկային գրունտը պետք է պատշաճ ձևով կուտակել բլուրների տեսքով, ծածկելի հողի վերին շերտով և վերատնկել տեղական տեսակներ		
Իրականացնել ջրահեռացման վերահսկման միջոցառումներ (ջրահեռացման խողովակներ, պատնեշներ և այլն) մշտական մոտեցման ճանապարհների վրա, եթե դրանք կտրուկ կամ էրոզիայի սեյսմիկ ակտիվ տարածքներում են գտնվում		
Շինարարական աշխատանքներից հետո նոր մոտեցման ճանապարհների վերակառուցման անհրաժեշտություն այլևս չկա		
Շինարարական աշխատանքները վերջնականացնելուց հետո հնարավորինս շուտ այդ տարածքներում վերականգնել լանդշաֆտը, որը վնասվել է թաց եղանակային պայմաններում աշխատելու հետևանքով		
Նվազագույնի հասցնել ճանապարհից դուրս մեքենաների և սարքավորումների կիրառումը		
Զրիհոսքերի մոտ խուսափել շինարարություն իրականացնելուց		
Առաջարկվում է կազմել և իրականացնել էրոզիան վերահսկող հատուկ պլաններ (երբ վերջնական տեխնիկական նախագիծն առկա կլինի)		

Աղյուսակ 9-4. Շինարարական աշխատանքների ընթացքում հողի և ջրի աղտոտմանը առնչվող մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ՝ հողի և ջրի աղտոտում		
Մեղմացուցիչ միջոցառումներ (հաշվի առնելով ՇՄԱԱ- Ուղեցույցները, Ջուր և սանիտարիա, կեղտաջրեր և մթնոլորտային օդի որակ, թափոնների կառավարում, վտանգավոր նյութերի կառավարում)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Բոլոր մեքենաների և տեխնիկայի պարբերական սպասարկում մշտական սպասարկման կայաններում, հնարավորության դեպքում	Շինարարության Կապալառու	Ներառված է շինարարական ծախսերի մեջ
Շինարարական սարքավորման սպասարկում և վերալիցքավորում միայն փակ և ցանկապատված տարածքներում		
Բոլոր հեղուկ նյութերի (օրինակ՝ վառելիք, շարժիչի յուղ, և այլն) և քսայուղերի պահեստավորում կողպված տարրաներում և փակ ու ծածկված տարածքներում		
Շինարարական նյութերի, ինչպես օրինակ ցեմենտի պարկերի և այլնի պահեստավորում կոնտեյներներում՝ լվանալ-տանելուց խուսափելու նպատակով		
Պատշաճ սանիտարական միջոցների ապահովում. համապատասխան քանակությամբ ձեռքերը լվանալու հարմարություններ՝ տղամարդկանց և կանանց համար առանձին		
Բանվորների ուսուցում պատշաճ սանիտարական գործունեության ոլորտում		
Պլաստիկ կամ այլ պաշտպանիչ լաթերի (կտորների) առկայություն ցանկացած տարածքներում, որտեղ ներկվում են հենարանները կամ այլ նյութերը		
Փոխադրողների և բանվորների ուսուցում հեղուկի արտահոսքի կանխարգելման և վերահսկման, հատկապես, յուղի և վառելիքի բեռնաթափման ոլորտում		
Վարորդներին և բանվորներին հեղուկի արտահոսքի վերահսկման նյութերի տրամադրում, անհրաժեշտության դեպքում, հեղուկի արտահոսքի մաքրման նպատակով		
Հեղուկի արտահոսքերի վերաբերյալ հաշվետվությունների անհապաղ ներկայացում և դրանց արձագանքում, ինչպես նաև բանվորների ուսուցում հաշվետվությունների ներկայացման ոլորտում		
Աղտոտված հողի հեռացում հեղուկի արտահոսքերի առաջացման դեպքում և դրանց, որպես վտանգավոր թափոնների, կառավարում		
Աղտոտված հեղուկի արտահոսքի նյութերի հավաքում և դրանց, որպես վտանգավոր թափոնների, կառավարում		
Շինարարությունը ավարտելուն պես ցանկացած վնասված տարածքի վերականգնում, ներառյալ գետերը և		

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ՝ հողի և ջրի աղտոտում		
Մեղմացուցիչ միջոցառումներ (հաշվի առնելով ՇՄԱԱ- Ուղեցույցները, Ջուր և սանիտարիա, կեղտաջրեր և մթնոլորտային օդի որակ, թափոնների կառավարում, վտանգավոր նյութերի կառավարում)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
գետի հունը		

Աղյուսակ 9-5: Շինարարական աշխատանքների ընթացքում թափոնների կառավարման համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ՝ թափոնների պատճառով առաջացող ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ (հաշվի առնելով ՇՄԱԱ- Ուղեցույցները, Ջուր և սանիտարիա, կեղտաջրեր և մթնոլորտային օդի որակ, թափոնների կառավարում, վտանգավոր նյութերի կառավարում)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Հավաքել թափոնների բոլոր տեսակները, լինեն դրանք կենցաղային, թե սանիտարական: Շինարար Կապալառուն պետք է պարզաբանի տեղական մարմինների հետ, թե ինչպես կարող են այդ թափոնները ոչնչացվել: Թափոնների տեղաբաշխումը պետք է կատարվի կոմունալ ծառայությունների կողմից, որտեղ թափոնները պետք է տեսակավորվեն:	Շինարարության Կապալառու Տեղական մարմիններ	Ներառված է շինարարական ծախսի մեջ
ԱԱՇՄԿ Պ-ի շրջանակներում թափոնների կառավարման պլանի մշակումը պետք է հաշվի առնի հետևյալ սկզբունքները՝ (i) թափոնների կառավարման հիերարխիա թափոններից խուսափելու-նվազագույնին հասցնելու-վերաօգտագործելու-վերամշակելու- ոչնչացնելու համար, (ii) թափոնների տեսակավորում, (iii) տեխնիկական լավ պլանավորման արդյունքում շինարարական թափոնների նվազեցում, (iv) անձնակազմի ուսուցում	Շինարարության Կապալառու	Ներառված է շինարարական ծախսի մեջ
Թափոնների կառավարման Համակարգի Իրականացում		Տեղանքներում պահեստավորման համար ծախսերը ընդգրկված են ԷՀՑԲԾ ծրագրում
Բոլոր վտանգավոր թափոնների պահեստավորում (օրինակ՝ յուղը, վառելիքը, ներկը, հողը աղտոտող յուղը) «Ալավերդի-2» ենթակայանի պահպանման համար նախատեսված համապատասխան տարածքում		Ներառված է շինարարական ծախսի մեջ
Բանվորների համար ուսուցում, թե ինչպես ոչնչացնել կամ վարվել վերամշակվող, սանիտարական, պինդ, հեղուկ և վտանգավոր թափոնների հետ		Ներառված է շինարարական ծախսի մեջ
Գոյություն ունեցող 110կՎ ՕԳ-ից ապամոնտաժված մետաղի ջարդոնը (երկաթ, պողպատ, պղինձ և այլն) պետք է վերաօգտագործվի կամ վերամշակման համար վաճառվի		Ոչ մի ծախս, քանի որ մետաղի ջարդոնը

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ թափոնների պատճառով առաջացող ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ (հաշվի առնելով ՇՄԱԱ- Ուղեցույցները, Ջուր և սանիտարիա, կեղտաջրեր և մթնոլորտային օդի որակ, թափոնների կառավարում, վտանգավոր նյութերի կառավարում)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Միայն հավաստագրված ընկերությունների հետ կկնքվի պայմանագիր թափոնների վերամշակման համար		վաճառվելու է

Աղյուսակ 9-6. Շինարարական աշխատանքների ընթացքում լանդշաֆտի և տեսողական ապսեկտների համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ. Լանդշաֆտ և տեսողական (վիզուալ) ապսեկտներ		
Մեղմացուցիչ միջոցառումներ	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Բանվորների ճամբարների ապամոնտաժում և տեղանքի ներդաշնակեցում լանդշաֆտի հետ	Շինարարության կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Գոյություն ունեցող 110կՎ ՕԳ-ի լրիվ ապամոնտաժում (ներառյալ հենարանների և հիմքերի ապամոնտաժում)		

Աղյուսակ 9-7. Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիր. Աղմուկ		
Մեղմացուցիչ միջոցառումներ (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2-ը և ԱԱՇՄ-ուղեցույցը. Աղմուկի կառավարում)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Փոխադրման կառավարման օպտիմալացում բեռնատարների ավելորդ երթևեկությունից խուսափելու նպատակով	Շինարարության կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Բեռնատարների շարժի թույլատրում միայն ցերեկային ժամերին՝ բայց ոչ ժամը 7:00-ից մինչև ժամը 6:00		

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիր. Աղմուկ		
Մեղմացուցիչ միջոցառումներ (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2-ը և ԱԱՇՄ-նուղեցույցը. Աղմուկի կառավարում)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Մեքենաների արագության նվազեցում (առաջարկվող արագության սահմանափակումների պահպանում) բնակելի տարածքներում		
Հնարավորության դեպքում ցածր ձայնով էլեկտրական մեխանիկական սարքերի օգտագործում		
Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շինարարական տեխնիկայի և այլ մեքենաների պարբերական տեխնիկական սպասարկում		
Աղմկոտ տեխնիկայի անջատում կամ դրոսելների ձայնի իջեցում մինչև նվազագույն մակարդակը		
Աղմուկի մակարդակը բանվորների համար, հնարավորության դեպքում, պետք է պահպանվի 80 դբ-ից ցածր (A): Եթե այս ցուցանիշները գերազանցվում են, ապա բանվորներին պետք է տրամադրվեն լսողության պաշտպանիչ սարքեր և պետք է տեղադրվեն նախազգուշական նշաններ:		
Աղմուկի մակարդակը բնակիչների համար չպետք է գերազանցի 55 դբ (A):		
Առնվազն 24 ժամ առաջ մոտակա տարածքների բնակիչներին և ձոնարկատիրական կազմակերպություններին ծանուցում նախատեսվելիք հատկապես աղմկոտ միջոցառումների իրականացման վերաբերյալ		
Աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացումը օրվա բնականոն աշխատանքային ժամերի ընթացքում (առավոտյան 9-ից մինչև երեկոյան 4-ը):		

Աղյուսակ 9-8. Շինարարական աշխատանքների ընթացքում օդի որակի համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ. Օդի որակի ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2, 3 և 4-ը և ԱԱՇՄ-Ուղեցույցը. Օդային արտանետումներ և մթնոլորտային օդի որակ)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Հատկապես բարդ ճանապարհներով շարժվող մեքենաների չափի, քաշի կամ առանցքի ծանրաբեռնվածության սահմանափակումներ	Շինարարության կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Մեքենաների արագության նվազեցում և շարժի սահմանափակում		
Փոխադրման կառավարման օպտիմալացում բեռնատարների ավելորդ երթևեկությունից խուսափելու		

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ. Օդի որակի ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2, 3 և 4-ը և ԱԱՇՄ-Ուղեցույցը. Օդային արտանետումներ և մթնոլորտային օդի որակ)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
նպատակով		
Մեքենաների և տեխնիկայի պատշաճ պահպանում, համաձայն մատակարարների առաջարկությունների		
Նյութերի փոխադրման ընթացքում բեռնատարների թափքի ծածկում բրեզենտով		
Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում փոշին նստեցնող ջրցողների օգտագործում, անհրաժեշտության դեպքում	Շինարարության կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Նյութերի պատշաճ պահեստավորում և կառավարում՝ փոշու մակարդակը սահմանափակելու նպատակով (օրինակ՝ անջրանցիկ բրեզենտով ցեմենտի պաշտպանում)		
Շինարարական տեխնիկայի և մեքենաների ավելորդ անգործությունից խուսափում		
Տեղում շինարարության նյութերի/թափոնների բաց այրման արգելում		

Աղյուսակ 9-9: Շինարարական աշխատանքների ընթացքում պատմական և մշակութային վայրերի համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ՝ Պատմական և մշակութային տեղանքների ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Գծի միջանցքում խուսափել մշակութային վայրերը վնասելուց և պահպանել համապատասխան հեռավորություն հենարանների տեղակայման վայրերից (տես Հատված)	Շինարարության Կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Իրականացնել Պատահական գտածոների ընթացակարգը (տես Հատված) և շինարար բանվորների ուսուցումը		
Պատահական գտածոների ընթացակարգի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել ՀՀ Մշակույթի նախարարության Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությունը		
Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության հետ համաձայնություն գալ հենարանների տեղակայման և նոր մոտեցման ճանապարհների վերաբերյալ (ներառյալ առաջարկված շրջանցումները) մինչև շինարարությունն սկսելը		
Հենարանների տեղակայման փոփոխման որոշումը պետք է հաստատվի Պատմության և մշակույթի		

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ՝ Պատմական և մշակութային տեղանքների ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
հուշարձանների պահպանության գործակալության հետ		

Աղյուսակ 9-10. Շին. աշխատանքների ընթացքում աշխատողի առողջության և անվտանգության համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ. Աշխատողի առողջությանը և անվտանգությանը սպառնացող ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ. (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2 և 4-ը)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Մշակել ԱԱՇՄ քաղաքականություն մինչ շինարարության սկիզբը	Շինարարության կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Մշակել ԱԱՇՄ կառավարման պլան մինչ շինարարության սկիզբը (ներառյալ թափոնների կառավարման պլանը)		
Գործարկել ԱԱՇՄ կառավարման համակարգը մինչ շինարարության սկիզբը		
ԱԱՇՄ Կառավարման համակարգի կիրառում (ԱԱՇՄԿՀ) շինարարության փուլում		
Բոլոր բանվորների համար առողջության ապահովագրության ապահովում		
Պատշաճ սանիտարական միջոցների ապահովում. համապատասխան քանակությամբ ձեռքերը լվանալու հարմարություններ՝ տղամարդկանց և կանանց համար առանձին		
Բանվորներին ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ից պաշտպանիչ միջոցների տրամադրում		
Հեարանների, ենթակայանների և այլնի վրա «Էլեկտրահարման վտանգ» նախագրուշացնող նշանների տեղադրում		
Բանվորներին տեղավորելը մոտակա գյուղերում առաջնային նշանակություն ունի: Այն դեպքում, երբ անհրաժեշտ են շինարարական ճամբարներ, դրանց տեղակայումը պետք է իրականացվի համապատասխան քաղաքային իշխանությունների հետ համաձայնեցմամբ		
Բանվորներին համապատասխան պաշտպանիչ սարքավորումների (ԱՊՄ) տրամադրում (փոշի, աղմուկ, և այլն)		
Բանվորների ուսուցում բարձրության վրա աշխատանքների իրականացման, էլեկտրատեխնիկայի անվտանգության, տրանսպորտային անվտանգության, վտանգավոր նյութերի հետ վարվեցողության, ԱՊՄ-ի,		

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ. Աշխատողի առողջությանը և անվտանգությանը սպառնացող ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ. (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2 և 4-ը)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
առաջին օգնության և փրկարարական տեխնիկաների կիրառման, արտակարգ իրավիճակներին արձագանքման, և այլն ոլորտներում	Շինարարության կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Ծրագրի տարածքում և բոլոր մեքենաներում առաջին օգնության հավաքածուների և կրակմարիչների ապահովում		
Շինարարական տարածքներում/բանվորների ճամբարներում ակոհոլի և այլ թմրամիջոցների արգելում		
Բանվորների համար շարժական կլինիկաների ստեղծում, որտեղ կարող են բուժվել շինարարության տարածքներում առաջացող բոլոր վնասվածքները և հիվանդությունները		
Լուրջ պատահարների դեպքում տուժած բանվորների փոխադրման ապահովում		
Արտակարգ իրավիճակներին տարածքային արձագանքողների, հիվանդանոցների և կլինիկաների որոշում, ինչպես նաև Ծրագրի գործողությունների վերաբերյալ նախապես ծանուցման ապահովում		
Բժշկական սկրինինգի, առողջության և անվտանգության մոնիտորինգի, ինչպես նաև դրանք հայտնելու վերաբերյալ ծրագրերի իրականացում		
Աշխատանքի ընթացքում ԷՄԴ-ի ազդեցության սահմանափակում՝ պաշտպանող նյութերի օգտագործման, ինչպես նաև բանվորների համապատասխան ուսուցման միջոցով		
Բոլոր պատահարների և միջադեպերի գրանցում		

Աղյուսակ 9-11. Շին. աշխատանքների ընթացքում հանրության առողջության և անվտանգության համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ. Հանրության առողջությանը և անվտանգությանը սպառնացող ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ. (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2 և 4-ը, ինչպես նաև ԱԱՇՄ Ուղեցույցները. Համայնքի առողջություն և անվտանգություն)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Մինչ շինարարության փուլի մեկնարկը մոտակա քաղաքներում նախատեսվող շինարարական աշխատանքների վերաբերյալ հանրության իրազեկում և լրատվամիջոցներում լուսաբանում	Շինարարության կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Մինչ շինարարության փուլի մեկնարկը մոտակա գյուղերում վտանգների վերաբերյալ իրազեկման, անվտանգության միջոցառումների, ոչ անվտանգ պայմանների և շրջակա միջավայրի ազդեցությունների վերաբերյալ տեղեկացնելու միջոցով հանրային կրթությանը և իրազեկմանը ուղղված ջանքեր		

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ. Հանրության առողջությանը և անվտանգությանը սպառնացող ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ. (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2 և 4-ը, ինչպես նաև ԱԱՇՄ Ուղեցույցները. Համայնքի առողջություն և անվտանգություն)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Ծանր գույքի փոխադրման դեպքում պետական նշանակության ճանապարհների երկայնքով բնակչությանը նախօրոք տեղեկացում		
Համապատասխան անվտանգության միջոցառումների ապահովում պատահարների և միջադեպերի կանխարգելման նպատակով (օրինակ՝ պետական նշանակության ճանապարհների վրա արագության սահմանափակումների պահպանում, օբյեկտների հողանցում)		
Աշխատանքների իրականացման վայրերի և վտանգավոր նյութերի ճանաչման նպատակով մինչ համապատասխան շինարարության մեկնարկը հստակ և համապատասխան նշագրման ապահովում		
Բոլոր հենարանների վրա նախագրուշացման նշանների տեղադրում և համայնքի իրազեկում էլեկտրաէներգիայի վտանգի, էլեկտրահարման ռիսկերի և ԲԿՊ վտանգների վերաբերյալ		
Պատշաճ անվտանգության ապահովում ենթակայանների, աշխատանքների իրականացման տարածքների, վտանգավոր նյութերի և թափոնների հանրամատչելիությունը կանխելու նպատակով	Շինարարության կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Չի թուլատրվում տների առկայությունը 50 մ էլեկտրահաղորդման գծերի միջանցքներում (անցնելու իրավունք)		

Աղյուսակ 9-6: Շին. աշխատանքների ընթացքում երթևեկության կառավարման և այլ ենթակառուցվածքի համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ՝ երթևեկությունից կամ այլ ենթակառուցվածքից սպառնացող ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ՝ երթևեկությունից կամ այլ ենթակառուցվածքից սպառնացող ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ լրատվամիջոցներով և հանրության համար նախատեսված նշանների միջոցով աշխատանքների մեկնարկի և տևողության վերաբերյալ հայտարարում	Շինարարության Կապալառու	Ներառված է շինարարական ծախսերի մեջ
Արագության սահմանափակումների պահպանում պետական նշանակության ճանապարհների վրա		
Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ անցման ուղիների, տեղանքում արագության սահմանափակումների (20 կմ/ժ, քայլելու արագություն ծանր բեռնատարների համար), մեքենաների ստուգման պահանջների, շահագործման կանոնների և ընթացակարգերի սահմանում		
Վարորդների արտոնագրում և ուսուցում, վարորդական հմտությունների բարելավում	Շինարարության Կապալառու	Ներառված է շինարարական ծախսերի մեջ
Արդյունաբերական մեքենաների օպերատորների արտոնագրում և ուսուցում մասնագիտացված մեքենաների անվտանգ շահագործման ոլորտում, ներառյալ ապահով բեռնում/բեռնաթափում և բեռի սահմանաչափեր		
Մեքենաների պարբերական տեխնիկական սպասարկման իրականացում և արտադրողի կողմից հաստատված մասերի օգտագործում՝ սարքերի անսարքության և ժամանակից շուտ խափանման արդյուքնում առաջացող հնարավոր լուրջ պատահարների նվազեցման նպատակով		
Մինչ շինարարության փուլը ավտոբուսներով բանվորների փոխադրման կազմակերպում արտաքին երթևեկությունը նվազեցնելու նպատակով		
Մինչ շինարարության փուլի մեկնարկը տեղական համայնքների և իշխանությունների հետ համագործակցություն նշագրման, ճանապարհների տեսանելիության և ընդհանուր անվտանգության բարելավման ոլորտում, մասնավորապես դպրոցների մոտ գտնվող հատվածների երկայնքով կամ այլ վայրերում, որտեղ կարող են երեխաներ գտնվել		
Մինչ շինարարության փուլի մեկնարկը տեղական համայնքների հետ համագործակցություն երթևեկության և հետիոտնի անվտանգության վերաբերյալ ուսուցման ոլորտում		
Հնարավորության դեպքում երթևեկության թույլատրում ընթացիկ աշխատանքների վայրերում		
Փաստացի շինարարության տարածքների գտնվելու մասին նշանների տեղադրում, որոնք հեռվից տեսանելի կլինեն երթևեկողների համար		
Արտակարգ իրավիճակներին արձագանքողների հետ համակարգում		
Երթևեկողների համար լուսավորման կամ համապատասխան նշագրման միջոցով բոլոր սարքավորումների		

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ՝ երթևեկությունից կամ այլ ենթակառուցվածքից սպառնացող ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
տեսանելիության ապահովում		
Նան աշխատանքի վայրերի լուսավորման ապահովում		
Գիշերային ժամերին փաստացի շինարարության տարածքների բավարար նշագրում		
Գոյություն ունեցող գծերից (35/110/220 կՎ ՕԳ) նվազագույն հեռավորության պահպանում, որը կապահովի անվտանգության գոտու լայնությունը երկու զուգահեռաբար անցնող գծերից		
Հատումներում գոյություն ունեցող ՕԳ-ների հաղորդալարերի միջև համապատասխան նվազագույն հեռավորության (> 4 մ) ապահովում		

Աղյուսակ 9-13. Շինարարական աշխատանքների ընթացքում սոցիալական ազդեցությունների համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ. Սոցիալական ազդեցություններ		
Մեղմացուցիչ միջոցառումներ. (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2 և 4-ը)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Գյուղատնտեսական հողերի վրա ազդեցությունները նվազեցնելու նպատակով մոտեցման ճանապարհների շինարարության սահմանափակում և դրանց ուղիների զգուշավոր ընտրություն	Շինարարության կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Հանգստի վայրերի տեղակայում ոչ արտադրական տարածքների ճանապարհներին մոտ գյուղատնտեսական աշխատանքներին միջամտությունը նվազեցնելու և տեղանքի մաքրումը և վերականգնումը հեշտացնելու նպատակով		
Բանվորների ճամբարների մակերեսի, ինչպես նաև դրանց պատճառով առաջացող վնասների նվազեցում		
Հենարանները պտղատու ծառերի և խաղողի այգիներից տեղափոխում, բանջարանոցներից խուսափելու համար		
Անաչառ անձի ներկայությունը շինարարության ընթացքում բողոքները ստանալու նպատակով		
Աշխատանքի ընդունման և վարձատրության խտրականություններից զերծ քաղաքականության մշակում և իրականացում (հստակ նշելով, որ ընկերությունը աշխատանքի ընդունման և վարձատրության առումով		

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ. Սոցիալական ազդեցություններ		
Մեղմացուցիչ միջոցառումներ. (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2 և 4-ը)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
խտրականություն չի դնում սեռի, տարիքի, կրոնի, ազգության կամ ծագման վայրի հիման վրա)		
Ենթակապալառուների կողմից վարձատրությունների վճարման հետ կապված իրավախախտումների խստորեն հետապնդում դատական կարգով		
Շինարարական աշխատանքների հարմար առաջնահերթությունը տալ տեղի բնակչությանը վարձելուն		
Շինարարական աշխատանքների իրականացման համար կանանց աշխատանքի ընդունելու իրավիճակի բարելավում		
Իրավախորհրդատուները կաջակցեն ԱԵԱ-ց, ովքեր գրանցված չեն որպես հողի սեփականատեր, բայց ունեն հողն օրինականացնելու իրավունք		
Կտրված ծառերի դիմաց փոխհատուցման վճարում մասնավոր հողի սեփականատիրոջը կամ Անտառտեսության վարչությանը/ՊՈԱԿ	Շինարարության կապալառու	Փոխհատուցման համար ծախսերը կհաշվարկվեն վկայակոչվող ՎԳՊ-ում
Մշակաբույսերի վնասվելու կամ կորուստի, ինչպես նաև հողի օտարման դիմաց փոխհատուցման վճարում ԱԵԱ-ց		
Փոխհատուցման վճարների փաստաթղթավորում	Շինարարության կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Ծրագրի ՎՔՇ-ի հիման վրա ՎԳՊ-ի մշակում և իրականացում	Միջազգային խորհրդատու	ՎԳՊ-ն պետք է մշակվի խորհրդատուի/ԲԷՑ-ի սոցիալական մասնագետի կողմից
ՎԳՊ-ի մշակման շրջանակներում ԱԵԱ-ց հետ քննարկումների անցկացում զարգացման իրենց առաջնահերթությունների վերաբերյալ		
Զրո հանդուրժողականություն աշխատանքի վայրում կամ բանվորների ճամբարներում/ գիշերակացերի վայրերում սեռական ոտնձգությունների նկատմամբ	Շինարարության կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Թաղապետարանների կարողությունների հզորացում գենդերային հարցերում (օրինակ՝ բողոքների ստացումը կանանց կողմից)		

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ. Սոցիալական ազդեցություններ		
Մեղմացուցիչ միջոցառումներ. (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2 և 4-ը)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Կանխիկ փոխհատուցումների տրամադրում տնտեսության տղամաղ և կին անդամների ներկայությամբ	Շինարարության կապալառու	Ներառված է շինարարության ծախսերում
Բանկային հաշիվների հասանելիություն տնտեսության և՛ տղամաղ և՛ կին անդամների համար		
ԱԵԱ-ց համար բողոքների կարգավորման մեխանիզմի իրականացում և հաղորդակցում տեղական մակարդակով խնդիրները լուծելու նպատակով	Շինարարության կապալառու	

10.1.3. Շահագործման և սպասարկման փուլերի համար նախատեսված մեղմացուցիչ միջոցառումներ

Աղյուսակ 9-7: Շահագործման և սպասարկման փուլերում ֆլորայի և ֆաունայի պաշտպանության համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ՝ ֆլորա և ֆաունա		
Մեղմացման միջոցառումներ (հաշվի առնելով ՇՄԱԱ-Ուղեցույցները, Էլեկտրաէներգիայի տեղափոխում և բաշխում)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Շինարարական աշխատանքների ժամանակ խուսափել անվտանգության գոտու ամբողջական մաքրումից	Օպերատոր (ԲԷՑ)	Ներառված է շահագործման ծախսերի մեջ
Միայն հասուն և բարձր ծառերի հատում միջանցքների տարածքում՝ չվնասելով բույսերի արմատները		
Միջանցքի հարակից տարածքի ծառերի սելեկտիվ հատում և էտում		
Պարտադիր ծառատնկման պլան 1:2 հարաբերակցությամբ, ներառյալ ծառատնկման վայրի ընտրությունը, ծառերի քանակը, տեսակը, տնկիների տարիքը պետք է պլանավորվի, և ծառերը խնամելու համար անհրաժեշտ կլինի 2 տարի		
Անտառային տարածքներում ձվադրման/բազմացման սեզոնի ընթացքում (մարտ-հունիս) շինարարական աշխատանքներից խուսափում		
ԱԳ-ի հարևանությամբ արգելել բույսերի հավաքումը և որսը, ույլ չտալ մուտք գործել անտառ		

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ՝ ֆլորա և ֆաունա		
Մեղմացման միջոցառումներ (հաշվի առնելով ՇՄԱ-Ուղեցույցները, Էլեկտրաէներգիայի տեղափոխում և բաշխում)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Առաջարկվում է ճանապարհների եզրերին օգտագործել պատնեշ, որը կսահմանափակի մեքենաների անօրինական մուտքը անտառային տարածքներ		
Քիմիկատների օգտագործման խստիվ արգելում ԱԳ-ն սպասարկելու համար		
Տեխնիկական սպասարկման աշխատանքների ընթացքում ստուգել թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքների պատշաճ տեղադրումը		

Աղյուսակ 9-8: Շահագործման և սպասարկման փուլերում հողի և ջրի աղտոտմանն առնչվող մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շինարարության փուլում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիրներ՝ Հողի և ջրի աղտոտում		
Մեղմացման միջոցառումներ (հաշվի առնելով ՇՄԱ-Ուղեցույցները, Ջուր և սանիտարիա, կեղտաջրեր և մթնոլորտային օդի որակ, թափոնների կառավարում, վտանգավոր նյութերի կառավարում)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Տեխնիկական սպասարկում կատարողների համար պատշաճ սանիտարական միջոցների ապահովում	Օպերատոր (ԲԷՑ)	Ներառված է շահագործման ծախսերի մեջ
Տեխնիկական սպասարկում կատարողների ուսուցում պատշաճ սանիտարական գործունեության ոլորտում		
Տեխնիկական սպասարկում կատարողների ուսուցում վերամշակվող, սանիտարական, կոշտ, հեղուկ և վտանգավոր թափոնների հետ վարվեցողության և դրանց ոչնչացման ոլորտում		
Թափոնների հետ պատշաճ վարվեցողության, դրանց մշակման և ոչնչացման կազմակերպում		
Հեղուկի արտահոսքի վերահսկման նյութերի տրամադրում վարորդներին և տեխնիկական սպասարկում կատարողներին, անհրաժեշտության դեպքում, հեղուկի արտահոսքերի մաքրման համար		
Հեղուկի արտահոսքերի վերաբերյալ հաշվետվությունների անհապաղ ներկայացում և դրանց արձագանքում, ինչպես նաև բանվորների ուսուցում հաշվետվությունների ներկայացման ոլորտում		
Աղտոտված հողի հեռացում հեղուկի արտահոսքերի առաջացման դեպքում և դրանց, որպես վտանգավոր թափոնների, կառավարում		
Աղտոտված հեղուկի արտահոսքի հավաքում և դրանց, որպես վտանգավոր թափոնների, կառավարում		

Աղյուսակ 9-16. Շահագործման և սպասարկման փուլերում աղմուկի համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շահագործման և սպասարկման փուլերում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիր. Աղմուկ		
Մեղմացուցիչ միջոցառումներ. (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2 և 4-ը, ինչպես նաև ԱԱՇՄ-Ուղեցույցները. Աղմուկի կառավարում)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Այրման շարժիչների համար համապատասխան խլացուցիչների օգտագործում	Օպերատոր (ԲԷՑ)	Ներառված է շինարարության ծախսերում
Բնակելի տարածքներում մեքենաների արագության նվազեցում (առաջարկվող արագության պահպանում)		
Աղմուկի մակարդակը բանվորների համար, հնարավորության դեպքում, պետք է պահպանվի 80 դբ-ից ցածր (A): Եթե այս ցուցանիշները գերազանցվում են՝ բանվորներին պետք է տրամադրվեն լսողության պաշտպանիչ սարքեր և պետք է տեղադրվեն նախազգուշական նշաններ:		
Աղմուկի մակարդակը բնակիչների համար չպետք է գերազանցի 55 դբ		
Աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում օրվա բնականոն աշխատանքային ժամերի ընթացքում		

Աղյուսակ 9-17. Շահագործման և սպասարկման փուլերում օդի որակի համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շահագործման և սպասարկման փուլերում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիր. Օդի որակի ռիսկեր		
Մեղմացուցիչ միջոցառումներ. (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2, 3 և 4-ը, ինչպես նաև ԱԱՇՄ Ուղեցույցները. Օդային արտանետումներ և մթնոլորտային օդի որակ)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Մեքենաների և տեխնիկայի պատշաճ պահպանում, համաձայն մատակարարների առաջարկությունների	Օպերատոր (ԲԷՑ)	Ներառված է շինարարության ծախսերում
Շինարարական տեխնիկայի և մեքենաների ավելորդ անգործությունից խուսափում		
Տեխնիկական սպասարկում իրականացնողների պատշաճ ուսուցում		

Աղյուսակ 9-9. Շահագործման և սպասարկման փուլերում աշխատողի առողջության և անվտանգության համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շահագործման և սպասարկման փուլերում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիր. Աշխատողի առողջություն և անվտանգություն		
Մեղմացուցիչ միջոցառումներ. (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2-ը)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Շահագործման և սպասարկման համար Առողջապահության և անվտանգության կառավարման պլանի (ԱԱԿՊ) մշակում և Առողջապահության և անվտանգության կառավարման համակարգի (ԱԱԿՀ) իրականացում	Օպերատոր (ԲԷՑ)	ԲԷՑ-ի բյուջե

Աղյուսակ 9-10. Շահագործման և սպասարկման փուլերում հանրության առողջության և անվտանգության մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շահագործման և սպասարկման փուլերում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիր. Հանրության առողջություն և անվտանգություն		
Մեղմացուցիչ միջոցառումներ. (հաշվի առնելով ՀԲ/ՄՖԿ ԿՍ 2 և 4-ը, ինչպես նաև ԱԱՇՄ-Ուղեցույցները. Համայնքի առողջություն և անվտանգություն)	Պատասխանատու մարմին	Իրականացման բյուջե (ԱՄՆ դոլար)
Բարձր լարման էլեկտրահաղորդման գծերից բխող վտանգների վերաբերյալ տեղեկացման/իրազեկման արշավների իրականացում (մինչ շահագործման մեկնարկը)	Օպերատոր (ԷԲԼԳ)	Ներառված է շինարարության ծախսերում
Աշխատանքի իրականացման վայրերի և վտանգավոր սարքերի հայտնաբերման համար պատշաճ նշագրման ապահովում		
Սպասարկման աշխատանքների իրականացման ընթացքում պետական նշանակության ճանապարհների վրա արագության սահմանափակումների պահպանում		
Չի թուլատրվում տների առկայությունը 50 մ էլեկտրահաղորդման գծերի միջանցքներում (անցնելու իրավունք)		

Աղյուսակ 9-11. Շահագործման և սպասարկման փուլերում սոցիալական ազդեցությունների համար մեղմացուցիչ միջոցառումների ամփոփ ցանկ

Շահագործման և սպասարկման փուլերում իրականացվող մեղմացուցիչ միջոցառումներ		
Մեղմացմանն ուղղված խնդիր. Սոցիալական ազդեցություններ		
Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախականություն ը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
	քաղաքականության մշակում և իրականացում					
	Ենթակապալառուների կողմից վարձատրությունների վճարման հետ կապված իրավախախտումների խստորեն հետապնդում դատական կարգով					
	Շինարարական աշխատանքների հարմար առաջնահերթությունը տալ տեղի բնակչությանը վարձելուն			Աշխատող տեղի բնակչության տոկոսը		
	Շինարարական աշխատանքների համար կանանց աշխատանքի ընդունելու իրավիճակի բարելավում			Աշխատող կանանց տոկոսը		
	Տեղական համայնքների համար այլ տնտեսական հնարավորությունների ընդլայնում			Մահմանվել են այլ տնտեսական հնարավորություններ		

Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախականություն ը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
Փոխհատուցման վճարումներ	Իրավախորհրդատուները կաջակցեն ԱԵԱ-ց, ովքեր գրանցված չեն որպես հողի սեփականատեր, բայց ունեն հողն օրինականացնելու իրավունք	Բոլոր ազդակիր հողերը, որոնց տնօրինում են չգրանցված հողի սեփականատերե- ր	Հարցազրույցներ սեփականատերերի հետ	Բոլոր փոխհատուցումները վճարվել են, համաձայն ՎԳՊ-ի	Համապատասխան շինարարությունից հետո	ԲԷՑ (մանրամասներ ի և բյուջեի համար տես ՎԳՊ-ն)
	Կտրված ծառերի դիմաց փոխհատուցման վճարում մասնավոր հողի սեփականատիրոջը կամ Անտառային վարչությանը/ՊՈԱԿ	Բոլոր տեղանքները ազդակիր են շրջանցումների հետևանքով				
	Մշակաբույսերի վնասվելու կամ կորուստի, ինչպես նաև հողի օտարման դիմաց փոխհատուցման վճարում ԱԵԱ-ց	Բոլոր տեղանքները վնասված են կամ բռնագրավված				
	Փոխհատուցման վճարների փաստաթղթավորում	Բոլոր ազդակիր տեղանքները	Փաստաթղթերի զննում	Փաստաթղթերը սահմանվել են	Կանոնավոր կերպով շինարարության ընթացքում	
ՎԳՊ-ի մշակում	Ծրագրի ՎՔՇ-ի հիման վրա ՎԳՊ-ի մշակում և իրականացում	Բոլոր ազդակիր տեղանքները	ՎԳՊ-ի զննում	ՎԳՊ-ն իրականացվել է	Մինչև շինարարությունը	ԲԷՑ

Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախականություն ը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
	ՎԳՊ-ի մշակման շրջանակներում, ԱԵԱ-ց հետ քննարկումների անցկացում առաջնահերթություններ ի վերաբերյալ	Բոլոր ազդակիր տեղանքները	Խորհրդատվական հաշվետվություններ ի գնում	Հաշվի են առնվել ՎԳՊ-ի մշակման առաջնահերթությունները		
Գենդերային ասպեկտներ	Զրո հանդուրժող-ականություն աշխատանքի վայրում կամ բանվորների ճամբարներում/ գիշերակացների վայրերում սեռական ոտնձգությունների նկատմամբ	Շինարարության տեղանքներ և գիշերակացներ	Բողոքների գնում	Բանվորների և բնակիչների կողմից չկան ոչ մի բողոքներ	Կանոնավոր կերպով շինարարության ընթացքում	ԲԷՑ
	Թաղապետարանների կարողությունների հզորացում գենդերային հարցերում (օրինակ՝ բողոքների տացումը կանանց կողմից)	Թաղապետարաններ	Բողոքների գնում	Բողոքներին համարձեք ուշադրություն է դարձվել		
	Կանխիկ փոխհատուցումների տրամադրում տղամարդ և կին անդամներ ունեցող տնտեսություններին	Փոխհատուցված ԱԵԱ-ց գյուղեր	Հարցազրույցներ ԱԵԱ-ց հետ Բողոքների գնում	Փոխհատուցումը համապատասխանաբար վճարվել է		

Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախականություն ը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
	Բանկային հաշիվների հասանելիություն տնտեսության և՛ տղամաղ և՛ կին անդամների համար			Բանկային հաշիվներ, որոնք հասանելի են տղամաղ և կին տնայաին տնտեսությունների անդամների համար		
Բողոքների կարգավորման մեխանիզմ	ԱԵԱ-ց համար բողոքների կարգավորման մեխանիզմի իրականացում և հաղորդակցում տեղական մակարդակով խնդիրները լուծելու նպատակով	Շինարարության տեղանքներ	Բողոքների գնում	Բոլոր բողոքներին համարժեք ուշադրություն է դարձվել	Կանոնավոր կերպով շինարարության ընթացքում	ԲԷՑ

10.2.3. Մոնիթորինգի միջոցառումներ շահագործման և տեխնիկական սպասարկման ընթացքում

Աղյուսակ 9-14: Մոնիթորինգի միջոցառումների ամփոփ ցանկ շահագործման և տեխնիկական սպասարկման ընթացքում

Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախական- ությունը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
			Մեթոդ	Ցուցիչ		
Ազդեցություններ ֆլորա և ֆաունայի վրա տեխնիկական սպասարկման և շահագործման ընթացքում	Տեխնիկական սպասարկման աշխատանքների ժամանակ խուսափել անվտանգության գոտու ամբողջական մաքրումից	Սպասարկման տեղանքներ	Տեսողական զննում	Անվտանգության գոտին ամբողջովին չմաքրել	Պարբերաբար սպասարկման ընթացքում	ԲԷՑ
	Միայն հասուն և բարձր ծառերի հատում միջանցքների տարածքում՝ չվնասելով ցածր անտառաթփուտները			Միայն հասուն և բարձր ծառերի հատում		
	Միջանցքի հարակից տարածքի ծառերի սելեկտիվ հատում և էտում			Միայն ընտրված ծառերի հատում		

Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախական- ությունը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
			Մեթոդ	Ցուցիչ		
	Պարտադիր ծառատնկման պլան 1:2 հարաբերակ-ցությամբ, ներառյալ ծառատնկման վայրի ընտրությունը, ծառերի քանակը, տեսակը, տնկիների տարիքը պետք է պլանավորվի, և ծառերը խնամելու համար անհրաժեշտ կլինի 2 տարուց ավել ժամանակ			Պարտադիր ծառատնկման պլանը կատարվել է		ԲԷՑ ՀԿ (օրինակ Վայրի Բնություն)
	Անտառային տարածքներում ձվադրման/բազմացման սեզոնի ընթացքում (մարտ-հունիս) խուսափել սպասարկման աշխատանքներից	Սպասարկման տեղանքներ անտառապատ տարածքներում		Ձվադրման/բուծման սեզոնի ընթացքում ոչ մի սպասարկման աշխատանքներ		(Մոնիթորինգի համար բյուջեն՝ 6,000 USD)
	Անվտանգության գոտու հարևանությամբ արգելել բույսերի հավաքումը և որսը, թույլ չտալ մուտք գործել անտառ	Սպասարկման տեղանքներ		Ոչ մի պատահար		ԲԷՑ
	Առաջարկվում է ճանապարհների	Անտառապատ տարածքներ		Պատնեշների կառուցում սահմանափակելու		

Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախական- ությունը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
			Մեթոդ	Ցուցիչ		
	Էզրերին օգտագործել պատնեշ, որը կսահմանափակի մեքենաների անօրինական մուտքը անտառային տարածքներ			համար մեքենաների մուտքը		
	Խստիվ արգելվում է թունաքիմիկատների օգտագործումը ԱԳ-ի տարածքում	Տեխնիկական սպասարկման տարածքներ		Թունաքիմիկատներ չեն օգտագործվել		
	Տեխնիկական սպասարկման աշխատանքների ընթացքում ստուգել թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքների պատշաճ տեղադրումը	Սպասարկման տեղանքներ կիրճերում		Թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքների պատշաճ տեղադրում		
Սանիտարական միջոցների հետևանքով հողի և ջրի աղտոտում	Տեխնիկական սպասարկում իրականացնողների համար պատշաճ սանիտարական միջոցների ապահովում	Սպասարկման տեղանքներ	Տեսողական զննում	Պատշաճ սանիտարական միջոցների ապահովում	Պարբերաբար սպասարկման ընթացքում	ԲԷՑ

Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախական- ությունը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
			Մեթոդ	Ցուցիչ		
	Տեխնիկական սպասարկում իրականացնողների ուսուցում պատշաճ սանիտարական գործունեության ոլորտում		Ուսուցման արդյունքների դիտարկում inspection	Բոլոր բանվորների համապատասխանաբար ուսուցանվել են		
Արտահոսքերից հողի և ջրի աղտոտում	Տրամադրում հեղուկի արտահոսքի վերահսկման նյութեր վարորդներին և տեխնիկական սպասարկում կատարողներին, անհրաժեշտության դեպքում, հեղուկի արտահոսքերի մաքրման համար	Սպասարկման տեղանքներ	Սարքավորումների գնում	Տրամադրված սարքավորումներ	Պարբերաբար սպասարկման ընթացքում	ԲԷՅ
Արտահոսքերից հողի և ջրի աղտոտում	Հեղուկի արտահոսքերի վերաբերյալ հաշվետվությունների անհապաղ ներկայացում և դրանց արձագանքում, ինչպես նաև բանվորների ուսուցում հաշվետվությունների ներկայացման ոլորտում	Սպասարկման տեղանքներ	Հեղուկի արտահոսքի հաշվետվությունների և ուսուցման արդյունքների դիտարկում	Հեղուկի արտահոսքի հաշվետվությունների քանակ Բոլոր բանվորների համապատասխանաբար ուսուցանվել են	Պարբերաբար սպասարկման ընթացքում	ԲԷՅ

Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախական- ությունը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
			Մեթոդ	Ցուցիչ		
	Աղտոտված հողի հեռացում հեղուկի արտահոսքերի առաջացման դեպքում և դրանց, որպես վտանգավոր թափոնների, կառավարում		Հեղուկի արտահոսքի և պահեստավորման տարածքների զննում	Բոլոր աղտոտված նյութերը համապատասխանաբար պահեստավորվել են		
	Աղտոտված հեղուկի արտահոսքի նյութերի հավաքում և դրանց, որպես վտանգավոր թափոնների, կառավարում	«Ալավերդի-2» ենթակայանում պահեստավորման տարածք				
Թափոններից հողի և ջրի աղտոտում	Բանվորների համար ուսուցում, թե ինչպես ոչնչացնել կամ վարվել վերամշակվող, սանիտարական, պինդ, հեղուկ և վտանգավոր թափոնների հետ	Սպասարկման տեղանքներ	Ուսուցման արդյունքների դիտարկում	Բոլոր բանվորները համապատասխանաբար ուսուցանվել են	Պարբերաբար սպասարկման ընթացքում	ԲԷՑ
	Իրականացնել միջոցառումներ թափոնների հետ վարվելու, վերամշակելու և ոչնչացնելու ուղղությամբ		Տեսողական զննում	Թափոնները պատշաճ կերպով մշակում		

Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախական- ությունը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
			Մեթոդ	Ցուցիչ		
Աղմուկի ազդեցությունը բանվորների վրա	Աղմուկի մակարդակը բանվորների համար պետք է պահպանվի 80 դԲ-ից ցածր (A): Եթե այս ցուցանիշները գերազանցվում են՝ բանվորներին պետք է տրամադրվեն լսողության պաշտպանիչ սարքեր և պետք է տեղադրվեն նախազգուշական նշաններ:	Սպասարկման տեղանքներ	Գործիքով չափումներ կատարել հատկապես աղմկոտ գործողությունների դեպքում	Աղմուկի մակարդակը 80 դԲ-ից ցածր (A), եթե աղմուկի ավելի բարձր մակարդակ լինի, ապա բանվորներին պետք է տրամադրվեն լսողության պաշտպանիչ սարքեր և տեղադրվեն նախազգուշական նշաններ:	Պարբերաբար սպասարկման ընթացքում	ԲԷՑ
Աղմուկի ազդեցությունը բանվորների/ հանրության վրա	Որտեղ հնարավոր է օգտագործել ցածր ձայն ունեցող էլեկտրամեխանիկական սարքավորումներ	Սպասարկման տեղանքներ	Տեսողական զննում և բողոքների դիտարկում	Ցածր ձայն ունեցող սարքավորումների օգտագործում, բնակիչներից ոչ մի բողոք չի ներկայացվել	Պարբերաբար սպասարկման ընթացքում	ԲԷՑ
Աղմուկի ազդեցությունը հանրության վրա	Նվազեցնել մեքենաների արագությունը (պահպանել առաջարկվող արագությունը) բնակեցված տարածքներում	Շինարարական տեղանքներին մոտ ապրող հանրություն	Բողոքների դիտարկում	Բնակիչներից ոչ մի բողոք չի ներկայացվել	Պարբերաբար սպասարկման ընթացքում	ԲԷՑ
	Աղմուկի մակարդակը բնակիչների համար չպետք է գերազանցի 55		Բողոքների դեպքում աղմուկի չափումների	Աղմուկի մակարդակը 55 դԲ ցածր (A) կամ աղմուկի առավելագույն		

Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախական- ությունը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
			Մեթոդ	Ցուցիչ		
	դԲ (A) կամ առավելագույնը պետք է լինի 3 դԲ (A) տեղանքից դուրս ազդեցության ենթակա ամենամոտ տարածքների վրա		կատարում	բարձրացում ոչ պակաս քան 3 դԲ (A)		
Աղմուկի ազդեցությունը հանրության վրա	Ծանուցել բնակիչներին և ձեռնարկատիրական գործունեություն ծավալողներին աղմուկ առաջացնող գործողությունների մասին նախապես 24 ժամ առաջ	Շինարարական տեղանքներին մոտ ապրող բնակիչներ	Հարցազրույցներ	Բնակիչները նախապես տեղեկացվել են	Պարբերաբար սպասարկման ընթացքում	ԲԷՑ
	Շենքերի մոտ իրականացնել աղմուկ առաջացնող գործողությունները ժամը 9:00-ից մինչև 16:00-ն		Բողոքների դիտարկում	Բնակիչներից ոչ մի բողոք չի ստացվել		
Սպառված գազի արտանետման հետևանքով աղտոտման սահմանափակում	Պահպանել մեքենաները և շարժիչները պատշաճ վիճակում, ինչպես առաջարկվում է մատակարարների կողմից	Սպասարկման տեղանքներ	Սպասարկման արդյունքների դիտարկում	Մարքավորումների պատշաճ ձևով պահպանում	Պարբերաբար սպասարկման ընթացքում	ԲԷՑ

Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախական- ությունը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
			Մեթոդ	Ցուցիչ		
	Խուսափել մեքենաների անհիմն պարապուրդից		Տեսողական զննում	Ոչ մի անտեղի պարապուրդ		
	Համապատասխանաբար իրականացնել բանվորների ուսուցում		Ուսուցման արդյունքների դիտարկում	Բոլոր բանվորները համապատասխանաբար ուսուցանվել են		
Աշխատակիցների առողջություն և անվտանգություն	Մշակել Առողջության և Անվտանգության Կառավարման Պլան (ԱԱԿՊ) և իրականացնել Առողջության և Անվտանգության Կառավարման Համակարգ (ԱԱԿՀ) շահագործման և տեխնիկական սպասարկման համար	Սպասարկման տեղանքներ	Տեսողական զննում	Մշակված ԱԱԿՊ և իրականացված ԱԱԿՀ	Շինարարական աշխատանքները ավարտելուց հետո	Մշակումը և իրականացումը առաջարկվում է ԲԷՑ-ի համար
Շահագործման մասով նախապես ծանուցում հանրությանը	Իրականացնել տեղեկատվության/ իրազեկման արշավներ բարձր լարման ՕԳ-ի վտանգների մասին	ՕԳ-ին մոտ գտնվող բնակիչներ	Հարցազրույցներ	Բնակիչները նախապես տեղեկացվել են	Շահագործումը սկսելուց առաջ	ԲԷՑ
Հանրության առողջություն և անվտանգություն	Ապահովել ցուցանակների պատշաճ տեղադրումը՝ հատկորոշելու համար աշխատանքային	Սպասարկման տեղանքներ	Տեսողական զննում	Ցուցանակների պատշաճ տեղադրում	Պարբերաբար սպասարկման ընթացքում	ԲԷՑ

Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախական- ությունը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
			Մեթոդ	Ցուցիչ		
	տարածքները և վտանգավոր սարքավորումները					
Հանրության առողջություն և անվտանգություն	Սպասարկման աշխատանքների ժամանակ պահպանել սահմանափակ արագությունը ընդհանուր օգտագործման ճանապարհների դեպքում	Սպասարկման տեղանքներին մոտ գտնվող ցյուղեր	Բողոքների դիտարկում	Բնակիչներից ոչ մի բողոք չի ստացվել	Պարբերաբար սպասարկման ընթացքում	ԲԷՅ
	Ոչ մի տուն չի թույլատրվում ՕԳ-ի միջանցքի (օտարման շերտ) 50մ հեռավորության վրա	ՕԳ-ի միջանցք	Տեսողական զննում	Միջանցքում ոչ մի տուն չի գտնվում		
Հողի օգտագործում	Անվտանգության գոտում գտնվող հողը հետագայում կարող է օգտագործվել ցյուղատնտեսական նպատակներով	ՕԳ-երին մոտ գտնվող բնակիչները օգտագործում են անվտանգության գոտում գտնվող հողը	Հարցազրույցներ	Տեղի բնակիչները տեղեկացված են սպասարկման աշխատանքների մասին	Մինչև համապատասխան սպասարկման աշխատանքները	ԲԷՅ
Հողի օգտագործում	Տեղեկացնել տեղական բնակիչներին նախքան սպասարկման միջոցառումներ ձեռնարկելը, ներառյալ՝ անվտանգության	ՕԳ-երին մոտ գտնվող բնակիչները օգտագործում են անվտանգության գոտում գտնվող	Հարցազրույցներ	Տեղի բնակիչները տեղեկացված են սպասարկման աշխատանքների մասին	Մինչև համապատասխան սպասարկման աշխատանքները	ԲԷՅ

Գործողություն/ ազդեցություն	Ի՞նչ (արդյոք պետք է նշվեն չափանիշները)	Որտե՞ղ (արդյոք պետք է նշել չափանիշը)	Ինչպե՞ս (արդյոք պետք է նշել չափանիշը)		Ե՞րբ (որոշել հաճախական- ությունը կամ շարունակական- ությունը)	Ո՞վ (ո՞վ է պատասխա- նատու մոնիթորինգի համար)
			Մեթոդ	Ցուցիչ		
	գոտում հողի մաքրման կամ մշակաբույսերին հնարավոր վնասի պատճառման մասին	հողը				
Փոխհատուցման վճարներ	Սպասարկման ժամանակ վճարել փոխհատուցում վնասված մշակաբույսերի համար	Սպասարկման միջոցառումների ընթացքում բոլոր տեղանքները վնասվել են	Փոխհատուցման վճարների դիտարկում	Բոլոր փոխհատուցումները վճարվել են համաձայն ՎԳՊ-ի	Համապատասխան սպասարկման աշխատանքներից հետո	ԲԷՅ (մանրամաս- ների և բյուջեի համար տես ՎԳՊ-ն)

10.3. Իրականացման միջոցառումներ և հաշվետվությունների ներկայացման պահանջներ

ԲԷՑ-ը՝ ԷՄՀԾ-ն իրականացնող գործակալությունն է և պատասխանատու է դրա իրականացման բոլոր ասպեկտների կառավարման համար, ներառյալ բնապահպանական և սոցիալական երաշխիքների ապահովման գործառնական քաղաքականությունների կիրառումը: Բանվորներին վերաբերող անվտանգության և առողջապահական հարցերով զբաղվող պատասխանատու ԲԷՑ վարչությունը՝ *«Անվտանգության և հուսալիության ծառայությունն է»*, որի կենտրոնական գրասենյակը գտնվում է Երևանում: Այս Ծառայությունն ունի տարածաշրջանային մասնաճյուղեր: Ի թիվս այլոց, այս Ծառայությունը իրականացնում է բանվորների և ենթակայանների վայրերի ամենամյա ստուգումներ՝ առողջության և անվտանգության խնդիրների առումով: Այնուամենայնիվ, բնապահպանական ասպեկտները այս Ծառայության կողմից չեն կարգավորվում:

ԲԷՑ-ն աշխատանքի կրնդունի շրջակա միջավայրի մասնագետ (տեղական): ԲԷՑ-ի կողմից արդեն աշխատանքի ընդունած սոցիալական մասնագետի հետ միասին շրջակա միջավայրի մասնագետը կիրականացնի Շրջակա միջավայրի և սոցիալական պլանի (ՇՄՄԿՊ) իրականացման ընդհանուր վերահսկողություն, կկազմի և կներկայացնի հաշվետվություն ՇՄՄԿՊ-ի հետ անհամապատասխանության կամ այն խնդիրների վերաբերյալ, որոնք կարող են առաջանալ շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում և, որոնք չեն կարգավորվում ՇՄՄԿՊ-ով, ինչպես նաև պետք է մշակի կոնկրետ ժամկետներով ուղղիչ գործողությունների պլան՝ ուղղված բացահայտված խնդիրների/հասցված վնասի վերացմանը և դրանք առաջարկությունների տեսքով ներկայացնի ԲԷՑ-ի ղեկավարությանը ու հետևողական լինի խնդիրների մեղմացման ուղղությամբ առաջընթացը հետազդելու և վերահսկելու առումով:

Անհամապատասխանությունների դեպքում մասնագետների կողմից պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ ՇՄՄԿՊ-ի հետ համապատասխանությունը ապահովելու նպատակով: Եթե դա անհնար է և, եթե անհամապատասխանությունը համարվում է լուրջ, պատասխանատու անձը/անձիք պետք է իրավասու լինեն անմիջապես դադարեցնելու աշխատանքները՝ մինչ նորից ապահովվի համապատասխանությունը:

Շրջակա միջավայրի և սոցիալական մասնագետները նաև պետք է պատասխանատու լինեն շինարարության փուլում բոլոր մոնիթորինգային գործողությունների ըմբռնման և իրականացման համար և պետք է իրականացնեն օպերատորի համապատասխան աշխատակազմի ուսուցում շինարարության և շահագործման փուլերում բոլոր մոնիթորինգային գործողությունների պատշաճ իրականացումը ապահովելու նպատակով: Մասնագետները պետք է իրականացնեն բոլոր գործող շինարարական տարածքների պաշտոնական դաշտային ամսական մոնիթորինգային ստուգումներ և կազմեն մոնիթորինգի ամսական հաշվետվություններ,

ներառյալ՝ լուսանկարները: Ընդհանուր առմամբ, մոնիթորինգի և հաշվետվությունների ներկայացման համար տարեկան կպահանջվի վեց ամսվա աշխատանք:

Միջազգային փորձառությամբ արտաքին աուդիտորը պետք է իրականացնի ՇՄՄԿՊ-ի իրականացման եռամսյակային վերահսկողություն, ինչպես նաև պետք է իրականացնի մեղմացուցիչ միջոցառումների իրականացման մոնիթորինգ: ԲԷՑ-ի մասնագետների կողմից տրամադրված եռամսյակային վերահսկողության և ամսական հաշվետվությունների հիման վրա արտաքին աուդիտորը կկազմի Լավար և Նոյեմբերյան ՕԳ-երի փոխարինման ընթացքում բնապահպանական և սոցիալական կատարողականի վերաբերյալ վերլուծական եռամսյակային նկարագրական հաշվետվություններ և ներկայացնի դրանք Համաշխարհային Բանկ: Այս վորահսկողության համար ծախսերը կկազմեն **120,000 ԱՄՆ դոլար**:

Շինարար կապալառուն, շինարարության բոլոր վայր(եր)ում պետք է նշանակի բնապահպանական և սոցիալական կատարողականի համար պատասխանատուներ:

10.4. ԲԷՑ-ի անձնակազմի ուսուցում

ԲԷՑ-ն արդեն աշխատանքի է ընդունել սոցիալական մասնագետի, բայց դեռևս չկա շրջակա միջավայրի մասնագետ, ինչպես նաև ԲԷՑ-ը չունի էլեկտրահաղորդման գծերին վերաբերող միջազգային պահանջների ոլորտում նախնական փորձառություն:

Այնուամենայնիվ, պահանջվում է որակավորված շրջակա միջավայրի մասնագետի ուսուցում: Ուսուցումը պետք է կենտրոնացած լինի Համաշխարհային Բանկի երաշխիքների ապահովման քաղաքականության և մոնիթորինգային ընթացակարգերի կիրառման վրա և պետք է ընդգրկի հատուկ այս Ծրագրի մեղմացուցիչ միջոցառումների և մոնիթորինգի իրականացումը: Հիմնական շեշտը պետք է նաև դրվի թափոնների և վերամշակման կառավարման վրա:

Ուսուցման պահանջների ապահովումը պետք է կատարվի ԾԻԽ/պատվիրատուի ճարտարագետի կողմից, որի համար կպահանջվի մոտ **20,000 ԱՄՆ դոլար** (աշխատանքային ուսուցում):

10.5. Բողոքների կարգավորման մեխանիզմ

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ կլինեն ԱԵԱ-ք, ովքեր կզգան, որ իրենց հետ վարվել են ոչ արդարացի կերպով: Սա կարող է պատահել տարբեր պատճառներով. Կապալառուն չի հետևել շինարարական նորմերին, մշակարույսերի վնասը չի փոխհատուցվել, վերաբնակեցման միջոցառումները չեն իրականացվել, հողի ուսումնասիրության ժամանակ որոշ մարդիկ չեն ընդգրկվել, մոռացվել են կամ ուղղակի թյուրիմացություն է տեղի

ունեցել և այլն: Այսպիսի դեպքեր կարող են պատահել նաև խորհրդատվության, ծանուցման կամ գնահատման գործընթացներում: Նմանատիպ դեպքերի ժամանակ մարդկանց կոչ են անում արտահայտել իրենց բողոքները: Մշակվել է բողոքարկման մեխանիզմ, հետևաբար մարդիկ կարող են լուծել իրենց խնդիրներն ու բողոքները շատ կարճ ժամանակում և արդյունավետ կերպով՝ առանց դիմելու դատարան: ՀՔ ընթացքում բոլոր ԱԵԱ-ց տեղյակ կպահվի ԲԿՄ-ի մասին, ինչպես նաև դրա վերաբերյալ նրանք կտեղեկացվեն ծրագիրը նկարագրող գրքույկների միջոցով, որտեղ տրամադրվում է ԲԵՑ-ի բողոքները համակարգողի կոնտակտային տվյալները:

Հանրային քննարկումների, հարցումների և փոխհատուցման տրամադրման ժամանակ աղակիր անձիք պետք է բանավոր կամ գրավոր տեղեկացվեն իրենց իրավունքների և բողոքների ներկայացման ընթացակարգի մասին: Տեղական ՀԿ-ները, Օրհուս Կենտրոնի միջոցով կարող են տեղյակ պահել համայնքներին բողոքարկելու և ում ու որտեղ դրանք ուղղելու հնարավորության վերաբերյալ: Բողոքարկման մեխանիզմը պետք է կիրառվի գյուղական և տեղական կառավարման մարմինների մակարդակով, ինչպես նաև ազգային մակարդակով ԲԵՑ-ում:

Բողոքները կարող են հասցեագրվել տեղական համայնքային մակարդակով (մարզպետ), որտեղ բողոքը գրացվում է և փոխանցվում ԲԵՑ-ի բողոքների կարգավորման հանձնաժողովին, որը պատասխանատու է բողոքների կարգավորման վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Բողոքները, որոնք ներկայացվում է Շինարար Կապալառուի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, նույնպես պետք է փոխանցվեն ԲԵՑ-ի բողոքարկման հանձնաժողովին: Եթե նույնիսկ Կապալառուն որոշում է տեղում լուծում տալ խնդրին, բողոքների կարգավորման գործընթացի վերաբերյալ փաստաթղթերը պետք է ձևակերպվեն ԲԵՑ-ի բողոքարկման հանձնաժողովի/ հիմնական կետի մոտ:

Ինչպես նաև ծրագրի հետ կապված բոլոր բողոքները կարող են անմիջապես հասցեագրվել ԲԵՑ-ի բողոքների կարգավորման հանձնաժողովին հեռախոսի, էլ. փոստի կամ բողոքարկման ձևաչափի միջոցով: Ծրագրի հետ կապված բողոքները ներկայացնելու համար ԲԵՑ-ի կողմից առկա կլինի թեժ գիծ անմիջապես բողոքարկելու համար (ազգային մակարդակով), և բոլոր ստացված բողոքները պետք է գրանցվեն բողոքարկման գրանցամատյանում:

ԲԵՑ-ի բողոքների կարգավորման հանձնաժողովը հետագայում կորոշի խնդրին անմիջապես լուծում տալ, բողոքների կարգավորման հանձնաժողով հրավիրել, թե դատարան դիմել: Որոշումը պետք է ընդունվի 15-օրյա ժամկետում:

Էական բողոքների դեպքում, որոնք չեն կարող անմիջապես կարգավորվել, բողոքարկման հանձնաժողովի մշտական և ժամանակավոր անդամները կհրավիրվեն հանդիպման:

Բողոքների բավարարման համակարգի ձախողման պարագայում, ԱԵԱ-ը կարող է դիմել համապատասխան դատարան:

Հանձնաժողովը բաղկացած կլինի մշտական և ժամանակավոր անդամներից:

Մշտական անդամներն են՝ ԲԷՑ-ը, Կապալառուն և իրավաբանը ժամանակավոր անդամներն են՝ համապատասխան մարզի, համայնքի և ՀԿ-ի ներկայացուցիչները: Ժամանակավոր անդամները հանդիպումից 10 օր առաջ կտեղեկացվեն հանդիպման ամսաթվի և վայրի վերաբերյալ: Ժամանակավոր անդամների բացակայությունը չի կարող հիմք լինել հանդիպումը չեղյալ համարելու համար: Իրավաբանը կարող է ներկայացնել մշտական անդամներից մեկին:

Շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպությունը պարտավոր է իրականացնել աշխատանքը, համաձայն պայմանագրային պահանջների, որը ներառում է.

- անձնակազմի անդամ, ով պատասխանատու է բողոքարկման գործընթացի համար և տեխնիկական աջակցություն կտրամադրի ԲԷՑ-ին ցանկացած բողոք կարգավորելու համար, որը կարող է առաջանալ ՎԳՊ-ի կազմման և իրականացման ընթացքում,
- կանոնավոր մշտադիտարկման հաշվետվությունների պատրաստում ՎԳՊ-ի կազմման և իրականացման կարգավիճակի վերաբերյալ, ներառյալ ցանկացած առաջացած բողոքի վերաբերյալ մանրամասներ և ինչպես են դրանք կարգավորվել,
- եթե խոցելի ազդակիր անձիք որոշվում են՝ հետևելով մարդահամարի ավարտմանը, ապա կապալառուն պետք է նշանակի մասնագիտացված փաստաբաններ (սոցիալական աշխատողներ/իրավաբաններ) աջակցելու այս մարդկանց ամբողջ գործընթացի ժամանակ և նրանց համար գործի որպես անկախ իրավաբան, եթե որևէ բողոք առաջանա,
- ԲԷՑ-ի և ԱԵԱ հետ բողոքների որոշում արբիտրաժի միջոցով:

ԲԷՑ-ը կիրականացնի աշխատանքներ, որոնք ներառում են.

- անձնակազմի անդամ, ով պատասխանատու է բողոքարկման գործընթացի կարգավորման համար, սույնով վկայակոչվում է որպես բողոքները կարգավորող (ներառյալ առաջին շփումը, միջնորդության նպատակով պարբերաբար տեղանք այցելելը պետք է իրականացվի կապալառուի կողմից),
- հեռախոսի համարը, էլ. փոստի հասցեն և կոնտակտային անձի անունը ծրագրի համար նախատեսված տախտակների վրա,
- Կապալառուի և ԱԵԱ հետ բողոքների որոշում արբիտրաժի միջոցով,
- կապը դատարանի հետ:

Այնուամենայնիվ ԱԵԱ-ք հնարավորություն ունեն ընտրելու ներկայացուցիչ կամ անմիջապես կապ հաստատել ԲԷՑ-ի աշխատակազմի հետ, որը


պատասխանատու է բողոքների բավարարման համար: Խոցելի տնտեսություններին, որպես աջակցություն, կկցվեն անհատական սոցիալական աշխատակից և իրավաբան:

Բացի այդ, իրավախորհրդատուները կաջակցեն չգրանցված սեփականատերեր համարվող ԱԵԱ հողի օրինականացման գործընթացում:

ՀԿ-ները, օրինակ Օրհուս Կենտրոնը կամ տեղական անդամ կազմակերպությունները կվերահսկեն բողոքի բավարարման բանակցությունները, կաջակցեն բողոքի վճռի կայացման գործընթացին, կբարձրացնեն հասարակական գիտակցությունը: ԱԵԱ-ք պետք է տեղեկացվեն, որ համայնքի ղեկավարի հետ վեճի դեպքում, նրանք կարող են դիմել որևիցե ՀԿ՝ իրենց բողոքի լուծման համար: ՀԿ-ները կվերահսկեն ԱԵԱ և համայնքի ղեկավարների փոխհարաբերությունները:

Խրախուսվում են ԱԵԱ-ց հետևյալ քայլերը.

- ա) Կապ հաստատել կապալառուի կողմից նշանակված բողոքարկման հարցերով զբաղվող անձնակազմի հետ՝ պարբերաբար կատարվող այցերի ընթացքում կամ տրամարված հեռախոսահամարով, կամ համայնքային ղեկավարի կամ ՀԿ-ի աշխատակիցների միջոցով
- բ) Ներկայացնել բողոքը և տրամադրել դեպքի հետ կապված տեղեկատվություն
- գ) Համաձայնության գալ կապալառուի հետ՝ մեղմացնող միջոցառումների հարցում
- դ) Համաձայնության գալ կապալառուի հետ՝ ներկայացված բողոքի լուծման ժամկետների հարցում: Բողոքները պետք է կանոնակարգվեն երկու շաբաթվա ընթացքում, այլապես տեղ կգտնեն համաձայնագրի հավելվածում
- ե) Ստորագրել, եթե մեղմացնող միջոցառումները համաձայնեցված կարգով իրականացվել են
- զ) Փնտրել աջակցություն ԲԷՑ-ից, եթե վերոնշյալ ընթացակարգը բավարար չէ
- է) Ներգրավել համապատասխան ՀԿ
- ը) Փնտրել աջակցություն դատարանում, եթե բոլոր տարբերակները ձախողվել են:



Նկար 9-1: Բողոքների մեխանիզմի ընթացակարգը

Այնուամենայնիվ, վերոնշյալ բոլոր բողոքարկման մեխանիզմները չեն սահմանափակում քաղաքացու իրավունքը հենց ամենաառաջին քայլից դիմելու դատական համակարգի աջակցությանը: Բողոքարկման մեխանիզմը մշակվել է դատական երկարատև ընթացակարգերից խուսափելու համար:

Համաշխարհային Բանկն անմիջականորեն չի մասնակցում Բողոքարկման ընթացակարգին, բայց պետք է ստանա բողոքների հետ կապված բոլոր տեսակի զեկույցները. որոնք լուծում են ստացել, որոնք մեղմացվել են, որոնք ընթացքի մեջ են և այլն:

Հատուկ աջակցություն պետք է ցուցաբերվի այն ԱԵԱ-ց համար, ովքեր ապրում են հեռավոր բնակավայրերում և խոցելի խմբերին են պատկանում, քանի որ բողոքարկման մեխանիզմը նրանց համար կարող է լինել անսովոր և նրանց փորձից ելնելով՝ կապը դատական գործընթացի հետ կարող է շատ խոստումնալից չթվալ: Սա կօգնի ամենախոցելի անձանց՝ կանխելու իրենց բողոքը դատարան ներկայացնելը:

Ծրագրի իրականացման ընթացքում առաջարկվում է գյուղի մակարդակով անկախ սոցիալական փորձագետի կողմից իրականացնել վերահսկում և անմիջական կապ հաստատել ԱԵԱ-ց հետ, եթե դրա կարիքը կա:

Խոցելի ԱԵԱ-ք (կին գլխավորներից կամ տարեցներից բաղկացած տնային տնտեսությունները և աղքատության շեմից ցածր բոլոր տնային

տնտեսություններ) կստանան իրավաբանական աջակցություն/սոցիալական մասնագետը կօգնի նրանց բողոքարկման գործընթացում:

10.6. ՇՄՍԿՊ-ի իրականացման ծախսերը

110կՎ Լալվար և Նոյեմբերյան ՕԳ-երի Ծրագրի շինարարության փուլում ազդեցությունների մեղմացման ծախսերի մեծ մասը ներառված է շինարարության ընթացիկ ծախսերում:

Շրջակա միջավայրի ազդեցության հետ կապված լրացուցիչ ծախսերը կապված վերականգնման միջոցառումների և մոնիթորինգի իրականացման հետ: Լրացուցիչ ծախսեր նախատեսված են Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության տեղական անդամների կողմից իրականացվող շինարարական աշխատանքների մոնիտորինգի, ինչպես նաև ԲԷՑ-ի անձնակազմի ուսուցման համար, քանի որ շինարարական տարածքների եռամյակային վերահսկողությունը պետք է իրականացվի միջազգային փորձառությամբ աուդիտորի կողմից:

Ծախսերը վերատնկման միջոցառումների համար այն անտառային տարածքներին մոտ, որտեղ ծառեր են կտրվել, կորոշվի հենարանի տեղակայման վայրերի վերջնական որոշումից հետո:

Հաշվի առնելով մոտ 2 տարի տևողությամբ շինարարության փուլը՝ ՇՄՍԿՊ-ի իրականացման ծախսերը կկազմեն **237,600 ԱՄՆ դոլար** (տես Աղյուսակ Աղյուսակ 9-):

Այս ծախսերը ներառում են ՎԳՊ-ի իրականացումը, բայց ոչ ՎԳՊ-ի մանրամասն ուսումնասիրության, ներառյալ ակտիվների հետազոտության ծախսերը: Սա կկատարվի ՎԳՊ-ի խորհրդատուի կամ ԲԷՑ-ի սոցիալական մասնագետի կողմից:

Աղյուսակ 9-24. Մեղացուցիչ միջոցառումների, մոնիթորինգի և ուսուցման ծախսերը

	Փուլ	Խնդիր	Արժեք [ԱՄՆ դոլար]
Մեղմացում	Մինչև շինարարությունն սկսելը	Թռչունների և չղջիկների վերաբերյալ հետազոտություն ԱԳ-ի երկայնքով	20,000
Մեղմացում	Շինարարություն	Թռչունների անվտանգության հարմարանքների տեղադրում ամպրոպապաշտպան ճոպանների վրա, եթե գիծը անցնում է ձորի վրայով*	45,000
Մոնիթորինգ	Շինարարություն	ՀԿ-ի կողմից անտառային տարածքներում վերականգնողական	6,000

		միջոցառումների մոնիթորինգ	
Մոնիթորինգ	Շինարարություն	Պատմական և մշակութային արժեքների պահպանության գործակալության մասնագետների կողմից մոնիտորինգի իրականացում	5,000
Մոնիթորինգ	Շինարարություն	Շինարարական տարածքների եռամսյակային վերահսկողություն	120,000 (15,000 յուր առաքելությունը)
Ուսուցում	Շինարարություն	ԲԷՑ-ի անձնակազմի ուսուցում	20,000
Գումար			216,000
10 % չնախատեսված ծախսեր			21,600
Ընդամենը			237,600

* Ենթադրվում է, որ ՇԿ-ն ունի գծային մեքենա տեղադրման աշխատանքներ իրականացնելու համար

11. Հղումներ

Եվրոպական Խորհուրդ (ԵԽ), Եվրոպական Հանձնաժողով (ԵՀ) 2010թ. Հայաստանի ժառանգության գնահատման զեկույց: Ստրասբուրգ, 2010թ:

DG Consulting 2013: 220կՎ Բաթումի-Ախալցխե էլեկտրահաղորդման գծի շինարարության ՇՄՍԱԳ (Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորված ծրագիր): Թբիլիսի, դեկտեմբեր 2013թ:

Եվրոպական օգնություն 2010թ. Աղբահանման գործողությունների ուղեցույց ձեռնարկ: Թափոնների կառավարում՝ ENPI Արևելք: Բրյուսել, 2010թ, հոկտեմբեր:

Հայաստանի Հանրապետության Կառավարություն (ՀՀԿ) 2009թ. Որոշում No. 363 «Էլեկտրական Ցանցերի Անվտանգության Գոտու վերաբերյալ Տեխնիկական Կանոնակարգի հաստատում», Երևան:

Ոչ-իոնացնող ճառագայթումից պաշտպանության միջազգային հանձնաժողով (ՈԻՃՊՄՀ) 1998թ. Ուղեցույցներ ժամանակի մեջ փոփոխվող էլեկտրական, մագնիսական և էլեկտրամագնիսական դաշտերի ազդեցության սահմանափակման վերաբերյալ (մինչև 300 ԳհՑ): Աշխատողների առողջության պահպանման ֆիզիկա 74 (4.): 494-522; 1998թ.

Միջազգային ֆինանսական կորպորացիա (ՄՖԿ) 2007թ. Շրջակա միջավայրի, առողջապահության և անվտանգության (ՇՄԱԱ) ուղեցույցներ: Տես՝ <http://www.ifc.org/ehsguidelines>

Միջազգային ֆինանսական կորպորացիա (ՄՖԿ) 2002թ Վերաբնակեցման գործողությունների պլանի մշակման ձեռնարկ:

Ledec et al 2011: Ledec, G.C., Rapp, K.W., Aiello, R.G.: Greening the wind. Համաշխարհային Բանկի հրապարակումներ

LLUR 2013: Landesamt für Landwirtschaft, Umwelt und ländliche Räume des Landes Schleswig-Holstein (LLUR): Empfehlungen zur Berücksichtigung der tierökologischen Belange beim Leitungsbau auf der Höchstspannungsebene (բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի շինարարության ընթացքում կենդանիների էկոլոգիային վերաբերող հարցերի շուրջ առաջարկներ): Ֆլինթբեկ, հունվար 2013.

ՀՀ Բնապահպանության նախարարություն (ԲՆ) (2014թ.),
Կենսաբազմազանության կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի
Հանրապետության հինգերորդ ազգային զեկույցը: Երևան: Տես՝
<http://www.cbd.int/doc/world/am/am-nr-05-en.pdf>

Տրակտեբել Էնջինիերինգ 2014: Տեխնիկատնտեսական ուսումնասիրություն և
Ծրագրի իրականացմանն աջակցություն: Նոյեմբերյան և Լավվար օդային
էլեկտրահաղորդման գծերի խորհրդատվություն և վերակառուցման
վերահսկում: Նոր ՕԳ-ների համար օպտիմալ նախնական ծրագծի որոշում և
ֆունկցիոնալ նախնական նախագծի կազմում, 2014թ.

VDE/FNN 2014: FNN-Hinweis: Vogelschutzmarkierung an Hoch- und
Höchstspannungsfreileitungen. Բեռլին, դեկտեմբեր 2014

12. Հավելվածներ

12.1 Հավելված I. Հանդիպումների և դաշտային այցելությունների արձանագրում

Ամսաթիվ	Գործակալություն/Հաստատություն/Ընկերություն	Վայր	Անձի անունը և պաշտոնը, որի հետ անցկացվել է քննարկում	Այցի նպատակը
24 .09. 2014թ.	ԲԷՑ	Երևան	Արամ Պետրոսյան Գլխավոր ինժեների տեղակալ	Մեկնարկ և հնարավոր տեխնիկական միջոցառումներ
27 .09. 2014թ.	Բնապահպանության նախարարություն	Երևան	Խաչատուր Խաչատրյան Իրավաբանական վարչության պետ	ՇՄԱԳ ընթացակարգը Հայաստանում
01.10. 2014թ.	ASCE Գրուպ ԲԲԸ	Չարեն-ցավան	Հեռախոսագանգ	Մետաղի ջարդոնի վերամշակում
02 .10. 2014թ.	Բնապահպանության նախարարություն Պետական ոչ առևտրային կազմակերպություն	Երևան	Հենրիկ Գրիգորյան Փոխնսորեն	Բնապահպանական թույլտվության գործընթացը Հայաստանում
02 .10. 2014թ.	WWF Հայաստան	Երևան	Կարեն Մանվելյան Տնօրեն	Ծրագրի տարածքում պահպանվող և անտառային տարածքներ
02.10. 2014թ.	Մշակույթի նախարարություն. Պատմության և մշակույթի հուշարձանների անվտանգության գործակալություն	Երևան	Սուրեն Շաքարյան Հուշարձանների և պատմության տարածքների անվտանգության վարչության պետ	Պատմության և մշակույթի վայրերի պահպանության ընթացակարգ
13.01.2015թ.	Հայաստանում Օրհուս Կենտրոններ	Երևան	Սիրվա Այվազյան Երևանի Օրհուս Կենտրոնի կոորդինատոր, Մարի Չակրյան, Երևանի Օրհուս Կենտրոնի ՓՈ մենեջեր	Ծրագրի ազդեցությունների մեղմացման միջոցառումներ և մոնիթորինգ, ՀԿ-ների ներգրավվում մոնիթորինգի մեջ
15.01 – 16.01. 2015թ.	ԲԷՑ, Էներջի Ընդվայգրի	Դաշտային այցելություն՝ Լավար և Նոյեմբերյան ՕԳ-եր	Լուսինե Զաքարյան ԲԷՑ-ի սոցիալական մասնագետ Արսեն Հայրիյան Իրավախորհրդատու	Գծի ծրագծում, հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցություններ

Ամսաթիվ	Գործակալություն/Հաստատություն/Ընկերություն	Վայր	Անձի անունը և պաշտոնը, որի հետ անցկացվել է քննարկում	Այցի նպատակը
16.01.2015թ.	Տրակտերել Էնջինիերինգ	Երևան	Սերգե Լամբորելլե Էլեկտրահաղորդման և բաշխման միջազգային բաժնի ղեկավար	Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների պատճառով գծի ծրագծի հարմարողության համար առաջարկ

12.2 Հավելված II: Ըստ «Տրակտերել Էինջինիրինգ» ընկերությանը ներկայացված ազդեցության ուսումնասիրության ցանկ

No.	Հենարանի No.	GPS Կոորդինատներ (UTM ունիվերսալ)	Վայրի անվանումը	Հետազոտություններ ուսումնասիրություններ / ղիտողություններ	Հնարավոր ազդեցություններ	Մեղմացուցիչ միջոցառումներ Mitigation
			«Ալավերդի-2» ենթակայան			
1	ԱՀ 1-3		Սանահին	Գիծը անցնում է դաշտերով, ոչ մի տուն կամ անտառ չի ենթարկվում բասացական ազդեցության: Հողատարածքը պատկանում է համայնքին և հողի օգտագործման նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է (արոտավայր): Կադաստրային քարտեզ պետք է ձեռք բերվի, որպեսզի հատկորոշվի հողի սեփականատերը, հողի կատեգորիան և վարչական տարածքը:	Հողի ձեռքբերում	Փոխհատուցում, եթե հողերի համար կա կառուցապատման իրավունք, անհրաժեշտության դեպքում հողերի կատեգորիայի փոփոխություն
2	ԱՀ 3-4	473634.00 մ արևելք; 4548588.00 մ հյուսիս	Սանահին-Ակներ	Կիրճի հատում: Կիրճի լայնությունը կազմում է մոտ 450-500մ: ԱՀ 3 գտնվում է Սանահինում, իսկ ԱՀ 4՝ Ակներում:	Մեծ թռչունների համար բախման ռիսկ	Թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքների տեղադրում
3	ԱՀ 4-7		Ակներ	Դերեղ կիրճի եզրով գծի ծրագծի անցկացում 35կՎ գծից հեռավորություն պահպանելու համար	Գյուղատնտեսական հողեր	
4	ԱՀ 7-8	475024.00 մ արևելք; 4548943.00 մ հյուսիս	Ակներ-Հաղպատ	Ակների և Հաղպատի միջև կիրճի վրայով թռիչք լայնությունը մոտ 500մ	Մեծ թռչունների համար բախման ռիսկ	Թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքների

No.	Հենարանի No.	GPS Կոորդինատներ (UTM ունիվերսալ)	Վայրի անվանումը	Հետազոտություններ ուսումնասիրություններ / դիտողություններ	Հնարավոր ազդեցություններ	Մեղմացուցիչ միջոցառումներ Mitigation
						տեղադրում
5	ԱՀ 8-9	475264.00 մ արևելք;; 4548996.00 մ հյուսիս	Հաղպատ	Գյուղի վերջում նոր անվտանգության գոտում 3 տների հատում	Հողի ձեռքբերում կամ Դեբեդ կիրճի կողմի շրջանցում	Ուսումնասիրել, արդյոք շրջանցումը գյուղի արևմտյան կողմում հնարավոր է
6	ԱՀ 9-10		Հաղպատ	Գյուղական հողեր, դաշտեր	Հողի ձեռքբերում	Փոխհատուցում, եթե հողերի համար կա կառուցապատման իրավունք, անհրաժեշտության դեպքում հողերի կատեգորիայի փոփոխություն
7	ԱՀ 10-13	Անտառ: 476636.00 մ արևելք; 4550490.00 մ հյուսիս Մշակութային վայր: 477170.00 մ արևելք; 4550827.00 մ հյուսիս	Հաղպատ	Գոյություն ունեցող գծերի հատում, անտառային տարածքների հատում	Գծերը հատում են գոյություն ունեցող ՕԳ-երը և անտառային բլուրները, գոյություն ունեցող գծերի տակ գտնվում է մշակութային տարածք (գերեզմանոց)	Գծի ծրագծի օպտիմալացում, անհրաժեշտ է գիծը երկարացնել դեպի հյուսիսային մարգագետնի կողմը՝ անտառային տարածից խուսափելու համար:
8	ԱՀ 15-16	478438.34 մ արևելք; 4551364.79 մ հյուսիս	Հաղպատ	Պլանավորված անվտանգության գոտում եկեղեցու ավերակներ	Մշակութային ժառանգությունը ազդեցության չի ենթարկվի, եթե նրա վրայով թռիչք կատարվի	Վերանայել այս տարածքում գծի ծրագիծը, մի քանի մետրով տեղաշարժել հենարանի հիմքերը, որպեսզի եկեղեցու ավերակները ազդեցության չենթարկվեն

No.	Հենարանի No.	GPS Կոորդինատներ (UTM ունիվերսալ)	Վայրի անվանումը	Հետազոտություններ ուսումնասիրություններ / դիտողություններ	Հնարավոր ազդեցություններ	Մեղմացուցիչ միջոցառումներ Mitigation
9	ԱՀ 13-20	<p>Օրինակ՝</p> <p>478049.00 մ արևելք; 4551176.00 մ հյուսիս</p> <p>478993.00 մ արևելք; 4551659.00 մ հյուսիս</p>	Հաղպատ, Նեղոց	Գիծը անցնում է անտառապատ լարջերի և հովիտների երկայնքով, հենարանները պետք է տեղադրվեն լերկ ժայռերի վրա ծառահատումներից խուսափելու համար, գոյություն ունեցող մոտեցման ճանապարհները պետք է վերականգնվեն, իսկ որոշներն՝ ընդլայնվեն:	Ծառերի կտրում, գառիթափ անտառում հին մոտեցման ճանապարհների վերականգնում: Ըստ ՀՀ օրենսդրության, 110կՎ համար անվտանգության գոտին պետք է լինի հաղորդալարի եզրից 20մ հեռավորության վրա: Անտառային տարածքի սեփականատերը Հայաստանի Հանրապետությունն է:	Բլուրների վերին մասերում հենարանների տեղադրում և մեծ թռիչք ապահովող հենարանների օգտագործում ծառերի հատումը կանխարգելելու համար: Կտրվող ծառերի համար նախատեսվում է փոխհատուցում և համապատասխան տարածքներում վերատնկում: Ըստ ՀՀ օրենսդրության, ճանապարհի սահմանից մինչև ցանկացած հենարանի միջև հեռավորությունը պետք է համապատասխանի առնվազն հենարանի բարձրությանը:
10	ԱՀ 21-22	<p>Օրինակ՝</p> <p>480957.74 մ արևելք; 4553787.34 մ հյուսիս</p> <p>480909.25 մ արևելք; 4553743.32 մ հյուսիս</p>	Նեղոց	Նեղոց գյուղում կիրճի վրայով թռիչք լայնությունը մոտ 500մ	Անվտանգության տեսանկյունից ելնելով տներից պետք է համապատասխան հեռավորություն պահպանվի, քանի որ համաձայն ՀՀ օրենքի չի թույլատրվում տների կառուցումը	Պետք է հաշվի առնվի գծի տարբեր ծրագծերը (հավանաբար դեպի հարավ): Եթե չի ապահովվում թռիչք, անհրաժեշտ կլինի կատարել մոտ 7-8 տների վերաբնակեցում:

No.	Հենարանի No.	GPS Կոորդինատներ (UTM ունիվերսալ)	Վայրի անվանումը	Հետազոտություններ ուսումնասիրություններ / ղիտողություններ	Հնարավոր ազդեցություններ	Մեղմացուցիչ միջոցառումներ Mitigation
					ՕԳ-երի տակ	
11	ԱՀ 16-18		Վերին Ախթալա	Ճանապարհ T -աձև ճյուղավորում մինչև երկաթգծի կայան	Զառիփաթ անտառի տարածք	ԲԷՑ և Տրակտեբել Էինջնիջինգ ընկերությունը պետք է տրամադրեն T-աձև ճյուղավորման կոորդինատները
12	ԱՀ 22-23	481645.00 մ արևելք; 4554340.00 մ հյուսիս	Վերին Ախթալա	Զառիթափ անտառի հատում, փոքր անհարթությունների միջև հեռավորությունը պետք է լինի մոտ 500մ, անհրաժեշտ է կատարել մոտոցման ճանապարհների վերականգնում	Մոտեցման ճանապարհների համար ծառերի կտրում, գոյություն ունեցող մոտեցման ճանապարհների վերականգնում	Եթե անհրաժեշտ են նոր մոտեցման ճանապարհներ, պետք է կատարել ճանապարհների մասնրամամ նախագիծ. Տրակտեբելի կողմից կատարված ճանապարհների նախագիծը պետք է առկա լինի ՇՄԱԳ-ի գնահատման համար:
13	ԱՀ 24-25		Ախթալա –Փոքր Այրում	Արոտավայրերի և անտառային տարածքների հատում	Հենարանների հիմքերի համար ծառերի կտրում և հողի ձեռքբերում	Ծառերի վերատնկում և հողերի համար փոխհատուցում
14	ԱՀ 24-25	482745.94 մ արևելք; 4554826.44 մ հյուսիս	Ախթալա – Փոքր Այրում	Անասունների համար նախատեսված տարածքների և մրգատու ծառերի այգիների հատում	Հատում թոփչքով կամ կտրված ծառերի համար փոխհատուցում, 1 հատ	Գծի ծրագիծը պետք է ստուգվի, եթե հնարավոր չէ, ապա 1 ֆերմայի և հավանաբար 1 տան վերաբնակեցում

No.	Հենարանի No.	GPS Կոորդինատներ (UTM ունիվերսալ)	Վայրի անվանումը	Հետազոտություններ ուսումնասիրություններ / ղիտողություններ	Հնարավոր ազդեցություններ	Մեղմացուցիչ միջոցառումներ Mitigation
					ագարակատուն կեսը խարխված, կեսը օգտագործելի	
15	ԱՀ 24-25	482830.00 մ արևելք; 4554947.00 մ հյուսիս	Ախթալա –Փոքր Այրում	Դերեղ կիրճի, գետի, երկաթգծի և ճանապարհի հատում, լայնությունը մոտ 500մ:	Ճանապարհի հատում, գետի հատում, մեծ թռչունների համար բխման ռիսկ	Թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքների տեղադրում
16	ԱՀ 25-28		Փոքր Այրում, Մեծ Այրում	Գիծը անցնում է մասնավոր հողատարածքներով: Ոչ մի տուն կամ ծառ բացասական ազդեցության չի ենթարկվում: Գոյություն ունեցող զծի անվտանգության գոտում (20մ) գտնվող հողը համարվում է համայնքային հող: Ավելի քան 20մ հեռավորության վրա գտնվող հողատարածքները համարվում են մասնավոր:	Հողի ձեռքբերում	Փոխհատուցում, եթե հողերի համար կա կառուցապատման իրավունք, անհրաժեշտության դեպքում հողերի կատեգորիայի փոփոխություն
17	ԱՀ 28-29	486227.00 մ արևելք; 4557229.00 մ հյուսիս	Մեծ Այրում	Փոքր կիրճի հատում, լայնությունը մոտ 350մ.	Մեծ թռչունների համար բխման ռիսկը	Թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքների տեղադրում
18	ԱՀ 31-40		Մեծ Այրում, Ճոճկան	Գիծը անցնում է մասնավոր հողատարածքներով: Ոչ մի տուն կամ ծառ բացասական ազդեցության չի ենթարկվում: Գոյություն ունեցող զծի անվտանգության գոտում (20մ)	Հողի ձեռքբերում	Փոխհատուցում, եթե հողերի համար կա կառուցապատման իրավունք, անհրաժեշտության դեպքում հողերի

No.	Հենարանի No.	GPS Կոորդինատներ (UTM ունիվերսալ)	Վայրի անվանումը	Հետազոտություններ ուսումնասիրություններ / ղիտողություններ	Հնարավոր ազդեցություններ	Մեղմացուցիչ միջոցառումներ Mitigation
				գտնվող հողը համարվում է համայնքային հող: Ավելի քան 20մ հեռավորության վրա գտնվող հողատարածքները համարվում են մասնավոր:		կատեգորիայի փոփոխություն
19	ԱՀ 26 մոտ			T-աձև ճյուղավորում դեպի լեռնահանքային ընկերություն	Ոչ մի զգալի ազդեցություն	
20	ԱՀ 29-38		Ճոճկան	T-աձև ճյուղավորումը գնում է դեպի «Սադախլու» ենթակայան բնակելի հողատարածքների միջով: 10-20 տուն գտնվում է միջանցքից 50մ հեռավորության վրա: Լավար և Նոյեմբերյան գծերն անցնում են մասնավոր հողատարածքներով: Ոչ մի ծառ ազդեցության չի երթարկվում:	Հողի ձեռքբերում	T-աձև ճյուղավորումը այլևս հաշվի չի անտվում, միջան երկշղթա գծի մասը դեպի Հաղթանակ («Նոյեմբերյան» ենթակայան), Ճոճկան գյուղը բասացական ազդեցության չի երթարկվում:
21	ԱՀ 38-39	492026.00 մ արևելք; 4561459.00 մ հյուսիս	«Նոյեմբերյան» ենթակայան, գյուղ Հաղթանակ	Դերեղ գետի հատում	Մեծ թռչունների համար բախման ռիսկը	Թռչունների համար նախատեսված անվտանգության հարմարանքների տեղադրում
22	ԱՀ 38-39		«Նոյեմբերյան» ենթակայան, գյուղ Հաղթանակ	Հիմնական ճանապարհի հատում		
23	ԱՀ 39-40		«Նոյեմբերյան» ենթակայան, գյուղ Հաղթանակ	Մրգատու ծառերի այգիների հատում	Հատում թռիչքով կամ ծառերի կտրում, հողերի ձեռքբերում: Պետք է կատարվի փոխհատուցում:	Ծառերը նման են թփուտների, որոնց կարելի է շրջանցել. ոչ մի նախագիծ առկա չէ գծի մուտքը ենթակայան ապահովելու համար

No.	Հենարանի No.	GPS Կոորդինատներ (UTM ունիվերսալ)	Վայրի անվանումը	Հետազոտություններ ուսումնասիրություններ / դիտողություններ	Հնարավոր ազդեցություններ	Մեղմացուցիչ միջոցառումներ Mitigation
24	ԱՀ 39-40	492270.27 մ արևելք; 4561666.92 մ հյուսիս	«Նոյեմբերյան» ենթակայան, գյուղ Հաղթանակ	1 փոքր տուն/ախոռ անվտանգության գոտում	Պետք է կատարել տների շրջանցում կամ վերաբնակեցում	Ոչ մի նախագիծ առկա չէ գծի մուտքը ենթակայան ապահովելու համար
				Մուտք «Նոյեմբերյան» ենթակայան		

12.3. Հավելված III. Հանրության համար և աշխատանքների իրականացման վայրերում էլեկտրական և մագնիսական դաշտերի (50 հՑ) միջազգայնորեն կիրառվող ստանդարտները

Աղբյուր	Էլ. դաշտի ուժգնությունը [կՎ/բ]	Մագնիսական հոսքի խտությունը [μT]
<u>ՈԻՃՊՄՆ-ն առաջարկում է 50/60 հՑ</u> Ժամանակի մեջ փոփոխվող էլեկտրական և մագնիսական դաշտերի ազդեցության մակարդակը (r.m.s. արժեքներին չառնչվող) ազդեցություն աշխատանքի վայրում* ազդեցություն ընդհանուր հանրության վրա	10 5	500 100
<u>Սահմանաչափերը ըստ 2004/40/EC Դիրեկտիվի</u> ազդեցությունը աշխատողների վրա *	10	500
<u>Սահմանաչափերը (r.m.s) ըստ 26. BimSchVer 12/96-ի</u> ընդհանուր հասարակության վրա ազդեցությունը՝ մինչև 24 ժամ/օր	5	100
<u>Սահմանաչափերը ըստ VDE V 0848 Մաս 4/A3-ի, 50 հՑ</u> r.m.s. արժեքները համարժեք դաշտի ուժգնության համար՝ ազդեցության միջակայք 1-ում մինչև 2 ժամ/օր ազդեցության ժամանակի համար	30 30	4,240 2,550
r.m.s. արժեքները համարժեք դաշտի ուժգնության համար՝ ազդեցության միջակայք 1-ում, շարունակական ազդեցության համար	21.32	1,360
r.m.s. արժեքները համարժեք դաշտի ուժգնության համար՝ ազդեցության միջակայք 2-ում	6.67	424

* արժեքի գերազանցման դեպքում, պահանջվում են հատուկ միջոցառումներ

r.m.s. = քառակուսի արմատ (արժեք)

Ազդեցության միջակայք 1-ը ներառում է մոնիտորինգի վայրերը, օրինակ՝ շահագործման գոտիները, օպերատորների կողմից վերահսկվող վայրերը, ընդհանուր առմամբ հասանելի վայրերը, որտեղ, ելնելով շահագործման եղանակից և հանգստի ժամանակահատվածից, երաշխավորվում է, որ ազդեցությունը կլինի միայն կարճաժամկետ

Ազդեցության միջակայք 2-ը ներառում է բոլոր տարածքները, որտեղ կարող է ակնկալվել միայն կարճաժամկետ ազդեցություն, օրինակ՝ բնակելի և սոցիալական շինությունների տարածքները, բնակելի անհատական տարածքները, պուրակները և սպորտի, ժամանցի և հանգստի համար նախատեսված կառույցները, շահագործման գոտիները, որտեղ, բնականոն պայմաններում, դաշտի առաջացում չի ակնկալվում

(Ոչ իոնացնող ճառագայթումից պաշտպանության միջազգային հանձնաժողով (ՈԻՃՊՄՆ), BImSchVer=German Bundesimmissionsschutzverordnung, VDE=Verband Deutscher Elektrotechniker e.V., Cenelec=էլեկտրատեխնիկական ստանդարտացման Եվրոպական Հանձնաժողով)